ԿԱՆԱՅՔ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ, ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Զեկույցը հիմնված է սոցիոլոգիական հետազոտության վրա, որն իրականացրել է «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնը «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:

Հետազոտողներ՝
Մարիամ Խալաթյան, Արփի Մանուկյան, Նվարդ Մարգարյան

Օգնականներ՝
Ագապի Իվանյան, Արուսիկ Օհանյան, Սոնա Մելիքջանյան

Քանակական տվյալների վերլուծությունը՝
Սոնա Մելիքջանյանի

Վերլուծությունը՝
Մարիամ Խալաթյանի, Նվարդ Մարգարյանի, Սիրան Հովհաննիսյանի

Սրբագրումը՝
Ազնիվ Նասլյանի

Սույն հրատարակությունն իրականացվել է Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) ֆինանսական աջակցությամբ՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի (ԿՌԿ) կողմից իրականացվող «Աջակցություն հայաստանում կանանց կայուն քաղաքացիական հասարակության կազմակերպմանը բազմակի ճգնաժամերի համատեքստում» ծրագրի շրջանակներում տրված ենթադրամաշնորհի արդյունքում: Բովանդակության համար պատասխանատվություն կրում է բացառապես հեղինակը: SIDA-ն և ԿՌԿ-ն կարող են չկիսել դրանում արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները»:

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն. հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը 4

Հետազոտական համատեքստը 4

Նպատակ, խնդիրներ, մեթոդ և ընտրանք 6

Հետազոտության սահմանափակող գործոնները 8

Կանանց նկատմամբ սահմանափակումները և դրանց ըմբռնումները 12

Սեռական ոտնձգություն.սահմանումները, ընկալումներն ու դրսևորման միջավայրը 24

Սեռական բռնություն. ընկալումներից մինչև պաշտպանություն 22

Սեռական բռնության պատճառների վերաբերյալ ընկալումները 27

Բռնարարի բնութագրիչները 33

Սեռական բռնության նկատմամբ խոցելի խմբերը 35

Սեռական բռնության շուրջ միֆերն ու կանանց վերաբերմունքը 39

Սեռական բռնության փորձառությունը 43

Սեռական բռնության փորձառությունը տրանսպորտում 44

Սեռական բռնության դեպքեր զուգընկերոջ, ամուսնու կողմից 45

Սեռական բռնության դեպքեր հոր, եղբոր, ընտանիքի այլ անդամների կողմից 46

Սեռական բռնության դեպքեր դասախոսի, ուսուցչի, գործատուի կողմից 47

Սեռական բռնության դեպքեր այլ ծանոթ անձանց կողմից 47

Սեռական բռնության դեպքեր անծանոթ անձանց կողմից 49

Լռությունը՝ սեռական բռնությանը (չ)արձագանքելու եղանակ 50

Սեռական բռնության ենթարկված կանանց կարիքները 58

Ամփոփում. սեռական բռնությունից պաշտպանված միջավայր ունենալու մեխանիզմները 62

Գրականություն 67

Ներածություն.
հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը

Հետազոտական համատեքստը

Հայաստանում կանանց նկատմամբ բռնության պրակտիկաների իրական տարածվածությունը բարդ է ճշգրտորեն գնահատել՝ պայմանավորված բռնության որոշակի աստիճանի մշակութային նորմավորվածությամբ, կանանց ներքնայնացված ինքնաստորադասմամբ, կանանց վարքի վերահսկման և սահմանափակումների ու այլ բռնարարքների ընդունելի շեմերի հանրային տարբեր ընկալումներով, բռնության առկայության պայմաններում պետական կամ հասարակական կառույցների դիմելիության ցածր աստիճանով ու դրանց հանդեպ վստահության հարցերով (Ժամակոչյան, Խալաթյան, 2017): Առավել դժվար է հասկանալ և գնահատել բռնության կոնկրետ տեսակների, հատկապես սեռական բռնության տարածվածությունը, քանի որ դա շարունակում է մնալ փակ, չքննարկվող, լռեցված և ամենատաբուացված թեմաներից մեկը Հայաստանում: Սա միայն հայաստանյան իրականություն չէ. գոյություն չունի այնպիսի հասարակություն, որը զերծ է սեռական բռնությունից և սեռական ոտնձգությունից: Սեռական բռնության և սեռական ոտնձգության առավել հաճախ ենթարկվում են կանայք տղամարդկանց կողմից, սակայն սեռական բռնությունը լայն տարածում ունի նաև տղամարդկանց շրջանում, ընդ որում՝ բռնարարներ կարող են լինել թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք: Ավելին՝ առավել հաճախ սեռական բռնության ենթարկված անձինք ճանաչում են, գիտեն բռնարարին[1]: ՀՀ քրեական օրենսգրքի[2] 27-րդ գլուխն անդրադառնում է Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններին, որի շրջանակում էլ 198-202-րդ հոդվածներով առանձնացնում է հետևյալ հանցագործությունները՝ սեռական բնույթի բռնի գործողությունները, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ, անառակաբարո արարք կատարելը, 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ), և դրանց համար նախատեսում համապատասխան պատիժներ[3]:

Հետազոտության առանցքում սեռական բռնության և սեռական ոտնձգության հարցերի քննարկումն է, ուստի կարևոր է հասկանալ, թե ինչ են սեռական բռնությունը, սեռական ոտնձգությունը, և ինչպես են դրանք սահմանվում: Սեռական բռնությունը ցանկացած սեռական գործողություն կամ սեռական ակտի փորձ, անցանկալի սեռական բնույթի մեկնաբանություն կամ առաջարկություն է, որն ուղղված է անձի սեռականությանը և կատարվում է հարկադրաբար[4]: ***Սեռական բռնության*** տեսակներից են բռնաբարությունը (անձի կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալը կամ դրա փորձը, որոշակի սեռական գործողություններ պարտադրելը, սպառնալիքի, շանտաժի ներքո սեռական ակտ պահանջելը), ամուսնական բռնաբարությունը, պոռնոգրաֆիկ բնույթի ֆիլմերում ստիպողաբար նկարահանումը կամ դրա ցուցադրումը, հանրային վայրում սեռական օրգանի ցուցադրումը, սեռական օրգանով կամ մարմնի այլ մասով հանրային վայրում դիմացինի մարմնի տարբեր հատվածներին հպումները, գաղտնի հետևելը, այլ անձանց սեռական ակտի ընթացքում ներկա լինելու հարկադրանքը և այլն: Իսկ ***սեռական ոտնձգությունը*** սեռական բռնության տեսակ է, որը կարող է հանդիպել ամենուր՝ տանը, փողոցում, ուսումնական հաստատությունում կամ աշխատանքի վայրում:

[1] Dartnall, E. (2012). Sexual violence against women: The scope of the problem. Retrieved from: http://dx.doi.org/10.1016/j.bpobgyn.2012.08.002
[2] ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.: https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
[3] ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.: https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
[4] Սահմանումները՝ ըստ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի. https://saccarmenia.org/

Սեռական ոտնձգության դրսևորումներից են դիմացինի սեռականությանն ուղղված արտահայտություններ, սեռական օրգաններին ուղղված հայացքներ, սեռական բնույթի հաճոյախոսություններ, կատակներ, ոչ պատշաճ հումոր, սեռական կյանքի քննարկում, սեռական հարաբերության առաջարկ, «լավության» դիմաց սեքսուալ պահանջ, սեռական բովանդակություն պարունակող նամակների, նյութերի ուղարկում կամ ցուցադրում և այլն[5]:

Սեռական բռնությունը քննարկելիս կարևոր է անդրադարձը *համաձայնություն* եզրույթին: Համաձայնությունը սեռական հարաբերություն ունեցող անձանց միջև պայմանավորվածությունն է. կարևոր է, որ նախքան սեռական հարաբերություն ունենալը կողմերը ստանան միմյանց գիտակցված համաձայնությունը[6]:

Ինչպես նշեցինք, Հայաստանում դժվար է գնահատել սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի իրական տարածվածությունը, աղքատիկ է նաև սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների պետական վիճակագրությունը: Ըստ ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկության՝ 2021 և 2022 թվականների վեց ամիսների ընթացքում սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները կարգավորող ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների հատկանիշներով գրանցված հանցագործությունների թիվը 760 է (638-ը գրանցվել է 2021 թվականի, իսկ 122-ը՝ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում): Իսկ ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ կոմիտեում 2020 թվականին քննվող 328 քրեական գործից սեքսուալ բնույթի է եղել 77-ը, 2021 թվականի առաջին կիսամյակում երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվող 229 քրեական գործից 57-ը եղել է սեքսուալ բնույթի հանցագործության հատկանիշներով[7]:

Սեռական բռնության մասին բարձրաձայնումն ուղեկցվում է սեռական բռնության ենթարկված անձին պիտակավորելով և մեղադրելով, հաճախ նաև բռնարարին արդարացնելով: Այս խոսակցությունները հաճախ ուղեկցվում են հարցադրումներով (օրինակ՝ ի՞նչ հագուստով էր սեռական բռնության ենթարկված անձը, ինչո՞ւ էր այդ ժամին դրսում), կասկածամիտ ենթադրություններով (եթե իրականում չցանկանար, այդպես չէր լինի), պիտակավորումներով և այլն: Հասարակության մի մասն էլ ընդհանրապես մերժում է սեռական բռնության երևույթի գոյությունը մեր հասարակությունում, կասկածի տակ դնում մարդկանց փորձառությունը, հերքում փաստերը՝ իրենց տեսակետները կառուցելով դավադրության տեսությունների հիման վրա:

Նման պարագայում, երբ ամեն ինչ և գրեթե ամեն ոք սեռական բռնության ենթարկված անձի դեմ է, դժվար է պատկերացնել մի այնպիսի ապահով միջավայր, որտեղ սեռական բռնության ենթարկված անձինք և հատկապես կանայք կարող են ազատ բարձրաձայնել սեռական բռնության, սեռական ոտնձգության իրենց փորձառության մասին: Դա է նաև պատճառը, որ 2021 թվականին Հայաստանում իրականացված[8] հետազոտության ընթացքում պարզվել է, որ Հայաստանում կյանքի որևէ փուլում զուգընկեր ունեցած 15-59 տարեկան կանանց միայն 6.6%-ն է նշել, որ երբևէ ենթարկվել է սեռական բռնության[9]: Համադրելով այս թիվը սեռական բռնությունից տուժածներին աջակցության թեժ գծի զանգերի թվի հետ (239)՝ պարզ է դառնում, որ սեռական բռնությանն ուղղված ուսումնասիրությունները պետք է ունենան բազմակողմանի մոտեցում՝ հաշվի առնելով ոչ միայն կարևոր թվային ցուցանիշները, այլև դրանց հետևում թաքնված որակական հիմքերը: Դա են վկայում նաև վերը նշված հետազոտության արդյունքները, ըստ որոնց՝ սեռական բռնության ենթարկված կանայք ավելի հաճախ գերադասում են լռել դրա մասին:

[5] Pinkarmenia.org (2022). Ապրիլը սեռական բռնության իրազեկման ամիսն է. վերցվել է՝ https://www.pinkarmenia.org/news/sexualabuse/

[6] Rape Crisis (2023). What is sexual consent? Retrieved from: What is sexual consent? | Rape Crisis England & Wales

[7] Հովհաննիսյան, Զ. (2021). Երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի կարևորությունը. վերցվել է՝ https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/combating-child-sexual-abuse-arm-2/

[8] Այս թիվը ներկայացնում է 2008-2023 թվականների դրությամբ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի թեժ գծի զանգերի պատկերը սեռական բռնության դեպքերով:

[9] Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն, 2021, GBV Report ARM (armstat.am)

Իսկ զուգընկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց միայն 12%-ն է դիմել օգնության որևէ պատասխանատու կառույցի[10]:

Նպատակ, խնդիրներ, մեթոդ և ընտրանք

«Կանայք սեռական բռնության մասին. ընկալումներ, փորձառություն» հետազոտությունը նախաձեռնել է Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ-ն՝ հասկանալու Հայաստանում կանանց շրջանում սեռական բռնության ընկալումները, սահմանումները: «Սոցիոսկոպի» հետազոտական թիմը, հաշվի առնելով ՍԲՃԿ-ի թիմի մտահոգությունները, սեռական բռնության, սեռական ոտնձգության հարցի շուրջ հանրային ընկալումների առանձնահատկությունները և տեղեկատվության բացերը, արձագանքել է առաջարկին և իրականացրել կանանց փորձի, կարիքների ուսումնասիրություն՝ բացահայտելու սեռական բռնության, սեռական ոտնձգության հարցերի շուրջ իրավիճակը Հայաստանում: Հետազոտությունը փորձ է հասկանալու և պատասխանելու հետևյալ հարցերին.

- ի՞նչ սահմանափակումների են կանայք ենթարկվում Հայաստանում, ինչպե՞ս են վերաբերվում և ինչպե՞ս են արձագանքում դրանց,
- ինչպե՞ս են կանայք ընկալում և սահմանում սեռական ոտնձգությունը, ի՞նչ պայմաններում և ի՞նչ միջավայրերում է հիմնականում դրսևորվում այն,
- ինչպե՞ս է սահմանվում սեռական բռնությունը, և ինչպե՞ս է այն դրսևորվում, ինչպիսի՞ն է կանանց սեռական բռնության փորձառությունը,
- ովքե՞ր են ընկալվում որպես սեռական բռնություն գործադրողներ, և ովքե՞ր են ենթարկվում սեռական բռնության,
- ինչպե՞ս են կանայք արձագանքում սեռական բռնությանը, և հաղթահարման ի՞նչ մեխանիզմներ են գործադրում, աջակցման ի՞նչ շրջանակներ ունեն,
- ինչպիսի՞ն է կանանց վերաբերմունքը հանրային ինստիտուտներին և իրավապահ մարմիններին սեռական բռնության կարգավորման գործընթացում, դիմելիության ի՞նչ մակարդակ կա,
- ի՞նչ կարիքներ ունեն սեռական բռնության ենթարկվող կանայք Հայաստանում, և պաշտպանության ի՞նչ մեխանիզմների անհրաժեշտություն կա:

Որպես ուղենիշ ունենալով հետազոտական այս հարցերը՝ անցկացրել ենք ֆոկուսխմբային քննարկումներ տարբեր տարիքի կանանց հետ Հայաստանի բոլոր մարզերի մարզկենտրոններում և Երևանում: Հիմնվելով «Սոցիոսկոպի» իրականացրած *«Խոսելով կանանց հետ ընտանեկան բռնության խնդրի շուրջ. կանանց կարծիքները և կարիքները»* հետազոտության փորձառության վրա, ըստ որի՝ բռնության հարցի մասին ընկալումների առանձնահատկություններն առավելապես պայմանավորված են կանանց տարիքով, ամուսնական կարգավիճակով, սոցիալական հարաբերություններով, որպես ֆոկուս խմբերի հավաքագրման չափանիշ ընտրել ենք տարիքը՝ առանձնացնելով կանանց հետևյալ տարիքային բաշխվածության խմբերը՝ 18-28, 29-39, 40-50 տարեկան: Տարիքային խմբերի այս առանձնացումը նաև հնարավորություն էր տալիս կանանց ավելի ազատ խոսելու՝ տարիքից բխող առանձնահատկություններով ու փորձով պայմանավորված ընդհանրություններ գտնելու համար: Հետազոտության ընտրանքը մանրամասն տե՛ս Աղյուսակ 1-ում:

[10] Հերգնյան, Ս. (2022). Հայաստանում զուգընկեր ունեցած կանանց 6.6%-ը երբևէ ենթարկվել է սեռական բռնության, 14.8%-ը՝ ֆիզիկական. հետազոտություն. hetq.am. վերցվել է՝ https://www.hetq.am/hy/article/146041

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանք

Մարզ/քաղաք	Տարիքային խումբ	Քանակ
Երևան	18-28	1
Երևան	29-39	1
Արագածոտն/Աշտարակ	40-50	1
Արարատ/Արտաշատ	40-50	1
Արմավիր/Արմավիր	29-39	1
Գեղարքունիք/Գավառ	40-50	1
Կոտայք/Հրազդան	29-39	1
Լոռի/Վանաձոր	18-28	1
Շիրակ/Գյումրի	29-39	1
Սյունիք/Կապան	18-28	1
Տավուշ/Իջևան	18-28	1
Վայոց ձոր/Եղեգնաձոր	40-50	1
		Ընդամենը 12

Անցկացրել ենք 12 ֆոկուսխմբային քննարկում, որից երկուսը՝ Երևանում, տասը՝ մարզերում: Յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 8-10 կին, ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել է 108 կին: Ֆոկուսխմբային քննարկումներն անցկացվել են 2022 թվականի հոկտեմբերի 14-ից նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում: Ֆոկուսխմբային քննարկումների սղագրությունները կոդավորել ենք MAXQDA ծրագրի միջոցով:

Որակական տվյալների հետ նաև հնարավոր քանակական տվյալներ զուգորդելու նպատակով ֆոկուսխմբային քննարկումների ընթացքում անցկացրել ենք փոքր քանակական հարցումներ: Քանակական հարցաթերթերը քննարկման ավարտին բաժանել ենք կանանց, որոնք ինքնուրույն, անհրաժեշտության դեպքում հետազոտական թիմի աջակցությամբ լրացրել են դրանք: Քանակական տվյալները հավաքվել, մուտքագրվել և վերլուծվել են SPSS ծրագրի միջոցով և ներառված են ամբողջական վերլուծության մեջ:

Ցանկացած հետազոտական գործընթաց ենթադրում է դժվարություններ ու սահմանափակումներ, և մեր հետազոտությունը բացառություն չէ: Հետազոտության շրջանակում մեր հետազոտական թիմը բախվեց որոշ խնդիրների, սակայն ստանդարտ խնդիրներին զուգահեռ տվյալ հետազոտության ժամանակ ունեցել ենք սեռական բռնության՝ իբրև հետազոտվող առարկայի առանձնահատկությունից բխող մի շարք լրացուցիչ սահմանափակումներ: Առաջին հերթին խնդիրները վերաբերում են հետազոտվող կանանց հասանելիությանը: Պետք է հաշվի առնենք, որ ֆոկուսխմբային քննարկումների մեթոդը, որով մենք հնարավորություն ունեցանք առնչվելու Հայաստանի 10 մարզերում և Երևանում բնակվող 108 կանանց պատմություններին և կարծիքներին, թույլ չի տալիս ներգրավել ուսումնասիրվող առարկայի առնչությամբ ամենախոցելի վիճակում գտնվող՝ ամենալուրջ սահմանափակումների և ճնշումների ենթարկվող, տնից առանց ամուսնու, ընտանիքի այլ անդամի կամ վստահելի անձի ուղեկցության բացակայելու «թույլտվություն» չունեցող կանանց: Ամեն դեպքում, ունենալով այս խնդիրը, հնարավոր է դարձել քննարկումներին ներգրավել նաև խոցելի խմբերի՝ հաշմանդամություն ունեցող կանանց, ինչը կարևոր է սեռական բռնության հարցի շուրջ նրանց փորձառությունը բացահայտելու համար: Քննարկումների ընթացքում եղել են դեպքեր, երբ կանայք ներկա են եղել իրենց հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, քանի որ չեն ունեցել հարազատներ, որոնք կխնամեին երեխաներին: Սա լրացուցիչ խնդիր էր ստեղծում հետազոտական թիմի համար՝ մտածելու ինչպես զբաղեցնել երեխաներին: Ինչպես նաև որոշ դեպքերում երեխաների ներկայության պարագայում քննարկումները կարող էին շեղվել ընթացքից, կանայք սկսում էին հետաքրքրվել երեխայով, հարցեր տալ, և հետազոտողներն անընդհատ կարիք էին ունենում մասնակիցներին վերադարձնելու քննարկման թեմային:

Ամենախոցելի կանանց հասանելիությունն իրականում լուրջ խնդիր է հետազոտության համար անհրաժեշտ տեղեկության հավաքման ցանկացած այլ մեթոդի ընտրության պարագայում: Այս կանանց պատմությունները հնարավոր է դիտարկել և հավաքել միայն ընտրված թիրախային դեպքերի մեթոդաբանությամբ, ինչն առանձին հետազոտության խնդիր կարող է դառնալ ապագայում: Ընդգրկուն և ընդհանրական չափանիշներով հավաքագրվող ֆոկուս խմբային քննարկումների մեթոդի կիրառությունը սահմանափակում է նաև սոցիալական խստորեն տարբերվող շերտերի ներգրավման հնարավորությունը՝ թույլ չտալով ծայրահեղ աղքատների, փոքրամասնական խմբերի, մարգինալ և ասոցիալ մարդկանց, ինչպես նաև հարուստների մասնակցությունը: Մյուս կողմից՝ այսպիսի ֆոկուս խմբերի միջոցով հնարավոր է դառնում առնչվել առավել լայն սոցիալական շերտերի ներկայացուցիչների՝ միջին և ցածր-միջին խավի մարդկանց կենսափորձին և գաղափարներին, ինչն էլ առաջնային խնդիր էր այս հետազոտության դեպքում:

Նկատելի էր, որ կանայք հենց շնորհիվ խմբային քննարկման շատ ավելի հեշտ էին ներկայացնում իրենց կենսափորձից պատմություններ և ապրումներ՝ մշակութայնորեն սովորական համարելով իրենց պես, թեկուզ անծանոթ, շատ դեպքերում ավելի փոքր համայնքներում նաև իրար այս կամ այն կերպ ճանաչող կանանց հետ դրանց մասին զրուցելը: Արդյունքում հաճախ մասնակից կանայք իրենք էին սկսում միմյանց հարցեր տալ և նույնիսկ բանավիճել թեմայի շուրջ, մի բան, որը հետազոտողները դասական ֆոկուս խմբում պետք է խուսափեին թույլ տալուց:

Կարևոր ենք համարում նաև անդրադառնալ որպես հետազոտողներ մեզ առնչվող խնդրին. լինելով Հայաստանում ապրող և սոցիալականացված կանայք՝ աշխատանքի տարբեր փուլերում ներգրավված հետազոտողները

և օգնականները (4-ը՝ ամուսնացած, 2-ը՝ չամուսնացած) սեռական բռնության, ոտնձգությունների և սահմանափակումների իրենց անձնական կենսափորձի որոշակի տարրեր վստահաբար ներմուծել են հետազոտության նախագծման, հասկացությունների ըմբռնման, հարցերի մշակման, տվյալների ստացման և մեկնաբանման գործընթացներում:

Քննարկումների ժամանակ կարևոր ենք համարել նաև ինքներս ներկայանալ, որոշ դեպքերում պատմել սեռական բռնության, ոտնձգության մեր փորձառությունից, ինչը հետազոտությանը մասնակցող կանանց թույլ էր տալիս ավելի ազատ խոսել, դուրս գալ հետազոտող-հետազոտության մասնակից դասական հարաբերությունից և դրանից բխող կաշկանդվածությունից: Միաժամանակ, ինչպես հետազոտողներս, այնպես էլ հետազոտությունը նախաձեռնող կողմը քաղաքական առումով զգայուն ենք սեռական բռնության, ոտնձգությունների, սահմանափակումների հանդեպ: Սա հետազոտողներից լրացուցիչ ջանքեր և լայնախոհություն պահանջեց տեղում իրականությանն առնչվելու, կանանց փորձը բացահայտելու և այն հարգանքով ու համարժեքորեն արձանագրելու առումով: Եվ ուրեմն, այս վերլուծության յուրաքանչյուր ընթերցողից ևս նույնքան ջանք կպահանջվի կանանց նկատմամբ սեռական բռնության բացահայտված փորձը և կանանց կողմից այդ փորձի իմաստավորումը հարգելու և խստորեն հաշվի առնելու առումով: Հարկ է պատրաստ լինել հաշվի նստելու կանանց կողմից սեփական և այլ կանանց կյանքի իմաստավորման ձևերի հետ և հարգել նրանց փորձառությունը, շատ դեպքերում որպես հետազոտողներ ու որպես սեռական բռնության նկատմամբ հստակ դատապարտող դիրքորոշում ունեցող մարդիկ՝ համաձայն չլինելով հնչող տեսակետներին: Շատ կարևոր ենք համարում ու գնահատում կանանց նկատած խնդիրների բարձրաձայնումը և դիմադրության համարձակությունը:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ հետազոտության արդյունքները չեն ենթադրում Հայաստանում սեռական բռնության, սեռական ոտնձգության փորձառության, տարածվածության ամբողջական ընդգրկվածություն: Արդյունքների ամփոփումն իրականացվել է հետազոտությանը մասնակից կանանց կենսափորձերի և դրանց մեկնաբանման հանդեպ հարգանքի, բայց նաև հաճախ դրանց հետ անհամաձայնության և դրանք փոփոխելու ձգտման պայմաններում:

Կանանց նկատմամբ սահմանափակումները և դրանց ըմբռնումները

Կանանց նկատմամբ բռնության պրակտիկաները անկախ չեն Հայաստանում տիրապետող հետերոնորմատիվ հայրիշխան ընտանեկան մշակույթի այլ կողմերից: Դրանք հիմնավորապես փոխկապված են հասարակության, այդ թվում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի, հատկապես կանանց և երեխաների սահմանված ու սահմանափակված դերերի և ընտանիքում աստիճանակարգված իշխանական հարաբերությունների մասին կարծրացած և վերարտադրվող պատկերացումների հետ (Ժամակոչյան, Խալաթյան, 2017):

Հետազոտության մասնակից կանայք նշում են, որ իրենց նկատմամբ տարբեր տարիքում եղել են տարբեր սահմանափակումներ, որոնց հիմքում հասարակությունում ձևավորված սպասելիքներն են՝ պայմանավորված գենդերային դերերով: Նույնիսկ «առօրյա, փոքր արգելքները» կանայք դիտարկում են որպես ավելի մեծ խնդիրներից խուսափելու, անվտանգության համար կարևոր նախապայմաններ: Այսպես կանայք ձևակերպում են «սխալ թույլ չտվող, խելոք, չափը ճանաչող» կնոջ պատկերը, որը արդյունքն է մշտապես սահմանափակումների ենթարկվելու լեգիտիմության ընդունման, ներքնայնացված ինքնաստորադասման (Ժամակոչյան, Խալաթյան, 2017):

> *«Երևի ավելի շուտ նկատել եմ այդ սահմանափակման վտանգը ու չեմ ենթարկվել, կանխել եմ»:*
>
> **29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ**

Կանանց նկատմամբ սահմանափակումները սկսվում են դեռևս վաղ տարիքից՝ ծնողների կողմից, դրանք սահմանվում են որպես անվտանգության համար կարևոր նորմեր, ինչն էլ բխում է ծնողների կողմից երեխաների նկատմամբ հոգատարությունից: Եթե տղա և աղջիկ երեխաների նկատմամբ սահմանափակումները գրեթե նույնական են ավելի մանկական տարիքում, ապա տարիքի հետ դրանք փոփոխվում են հակադարձ ուղղություններով՝ տղաների համար նվազելով, իսկ աղջիկների համար ավելանալով: Ավելին՝ տարիքին զուգահեռ աճում է նաև սահմանափակողների թիվը, և ծնողներին, ավագներին հաճախ միանում են նաև եղբայրները, զարմիկները:

> *«Ժամի խնդիրն էր, այն, որ չի կարելի: Բայց այդ նույն բանը հետո՝ արդեն բարձր տարիքում, չեղավ եղբորս հետ: Եղբայրս ինձնից 9 տարի փոքր էր, բայց հիմա եղբայրս գալիս է գիշերը 1-ին, 2-ին»:*
>
> **18-28 տարեկան կին, Երևան**

Կանանց և աղջիկների սահմանափակումների շրջանակը բավականին լայն է: Որպես կանոն, այն սկսվում է արտաքին տեսքից, ձևակերպվում և նորմավորվում է «կնոջն ու աղջկան հարիր կամ ոչ հարիր արտաքին տեսքը»՝ մազերի գույնը, կտրվածքը, սանրվածքը, հագուստը և ոճը, շպարը, կարելի և ոչ կարելի աքսեսուարները, դաջվածքը կամ որոշակի ենթամշակույթներին բնորոշ այլ աքսեսուարներ կրելու թույլտվությունը: Կախված բնակավայրից (Երևան, մարզեր, քաղաքային կամ գյուղական համայնքներ)՝ կանայք նշում են, որ կան ընդհանուր կենսակերպի սահմանափակումներ, և որոշ դեպքերում պարզ թվացող վարքագիծը կարող է «կասկածների առիթ տալ», հետևաբար նաև սահմանափակվել: Կանանց նկատմամբ սահմանափակումներ կարելի է նկատել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում վերջիններիս ներգրավվածության առնչությամբ՝ ընտանիք, կրթություն, աշխատանք, հանգիստ և ժամանց, սոցիալական միջավայր և այլն:

Այսպես՝ *կրթության* ոլորտում սահմանափակումները շատ տարբեր դրսևորումներ են ունենում: Հետազոտության մասնակից կանայք նշում են, որ կրթական ոլորտում իրենց նկատմամբ սահմանափակումները սկսվել են դպրոցից՝ ուսուցիչների և հասակակիցների կողմից, դրանք կանանց առջև դրվում էին՝ ապահովելու աղջիկների սոցիալականացման նորմավորված «հարիր վարքաձևերն ու պահվածքը»:

> *«Հիմնականում սահմանափակումները դպրոցում էին լինում՝ ուսուցիչների կողմից,օրինակ՝ դու աղջիկ ես, այսինչ բանը չես կարող անել»:*
>
> **18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ**

Ավելի երիտասարդ կանայք նշում էին նաև **մասնագիտության ընտրության** սահմանափակման մասին, որի դեպքում աղջիկները ստիպված են ընտրել այնպիսի միջավայր ունեցող կրթական հաստատություն, որտեղ «տղաները շատ չեն», կամ այնպիսի մասնագիտություններ, որոնք «հարիր են կանանց»: Կնոջից ակնկալվում է ոչ մասկուլին և ուժի գործադրման ոլորտներում կրթություն և զբաղվածություն, որոնք կլինեն այնքան եկամտաբեր, որ հետագայում ոչ թե ֆինանսական անկախության գրավական կլինեն, այլ կապահովեն ընտանիքում «աջակցություն», «ինչ-որ չափով ներդրում»:

> *«Մոնթե Մելքոնյանում էի ուզում սովորել, բայց տնեցիների կարծիքով՝ շրջապատում դա նորմալ չէր ընդունվի. [ասում էին] բոլորը տղաներ են, մենակ դու ես աղջիկ լինելու, չես կարող այնտեղ, դա քո տեղը չէ... ու չգնացի: Ծնողներս արգելեցին, որովհետև ամոթ է: Կասեին, որ բոլորը տղաներ են, մենակ ես եմ աղջիկ, ու դա արդեն մեզ համար նորմալ չէր»:*
>
> **18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

ՀՀ մարզերում հետազոտությանը մասնակցած կանայք կրթական ոլորտում սահմանափակումների մասին խոսելիս մատնանշում են նաև կրթական նպատակներով իրենց առջև դրված տեղաշարժման սահմանափակումները: Հայաստանում բարձրագույն կրթությունը հիմնականում կենտրոնացված է մայրաքաղաքում[11], իսկ մարզերում բնակվող աղջիկներին հաճախ թույլ չեն տալիս տեղափոխվել Երևան՝ կրթությունը շարունակելու նպատակով: Սա ոչ միայն պայմանավորված է ընտանիքի ֆինանսական դրությամբ և տնտեսական սահմանափակումներով, այլ նաև բացատրվում է երիտասարդ կնոջ անվտանգության երաշխավորման, «մենակ ապրելու» և դրանից բխող «բարոյականության» ու «պատվի» հարցերի շահարկումներից խուսափելու անհրաժեշտությամբ:

> *«Ես ուզում էի սովորել Երևանում ու այնտեղ պիտի ապրեի, բայց մերոնք չթողեցին. ի՞նչ գործ ունի աղջիկ երեխան մենակ այդ մեծ քաղաքում: Ես ուզում էի դառնալ լրագրող, բայց մնացի այստեղ ու դարձա թարգմանիչ: Չեմ ընդունում այդ փաստը, մի քիչ չեմ հարմարվում»:*
>
> **18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ**

> *«Մասնագիտության հարցում պապաս չթողեց գնայի Երևան, ստիպված քույրական ընդունվեցի, սովորեցի, քանի որ այդ ժամանակ ֆինանսապես, ամեն կերպ կախում ունեի ընտանիքից: Հիմա ես չունեմ ծնողներիցս կախում, աշխատում եմ, ունեմ իմ ֆինանսը ու հիմա ձգտում եմ գնամ Երևան, իմ ուզած մասնագիտությունը սովորեմ: Ու դա ինձ համար հիմա առաջնային է դարձել, միայն այն պատճառով, որ ծնողս սկզբից չի թողել ու ասել է՝ դու աղջիկ ես»:*
>
> **18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ**

[11] Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ «Բարձրագույն կրթությունը 2021/2022 ուսումնական տարում» տվյալների՝ ՀՀ-ում գործող 55 բուհերից 44-ը Երևանում է: 2021 թվականին բուհերում սովորող 68,874 ուսանողների գերակշիռ մեծամասնությունը՝ 59,943-ը, Երևանից է: Տե՛ս armstat.am (2023). Բարձրագույն կրթությունը 2021/2022 ուսումնական տարում. վերցվել է՝ https://armstat.am/file/article/sv_03_22a_5170.pdf

Սահմանափակումները շարունակվում են նաև ոչ ֆորմալ կրթության ոլորտում: Այսպես՝ կանանց հաճախ սահմանափակում են մասնակցել վերապատրաստման դասընթացների, աշխատարանների, մասնագիտական գիտելիքների թարմացման դասընթացների կամ այլ միջոցառումների, քանի որ դրանք հաճախ լինում են երեկոյան, կազմակերպվում են բնակավայրից դուրս:

«Դասընթացներ էր կազմակերպած, պիտի մի ամիս գնայի: Դե այնպես էր ստացվել, որ այդ դասընթացներն էլ 6-ից հետո էին: Դե մինչև գնում էի, մինչև գալիս էի, դառնում էր տենց՝ գիշերվա 9-10: Դե գիշեր չի, երեկո է, բայց ամեն դեպքում տունը չես կարում բացատրես, որ դա երեկո է»:

18-28 տարեկան կին, Երևան

Սահմանափակումները հանդիպում են նաև սպորտի ոլորտում. կանանց հաճախ սահմանափակում են ներգրավվելու «որոշ մարզաձևերում», որոնք ավելի տարածված է համարել «տղամարդկային» և «մասկուլին»:

«Ես միշտ երազել եմ ֆուտբոլի մարզիչ դառնալ, բայց ես պրոֆեսիոնալ ֆուտբոլից դուրս եկա ամուսնանալու պատճառով: Հետո, երբ որոշեցի ու հնարավորություն ունեցա որպես մարզիչ վերադառնալու, առաջին հարցը, որ ինձ ուղղում էին՝ ամուսինդ ինչպե՞ս է թույլ տվել»:

29-39 տարեկան կին, Երևան

Հետազոտությանը մասնակից կանայք հաճախ խոսում են *աշխատանքի իրավունքի սահմանափակումների* մասին՝ ըստ աշխատանքի տեսակի, բնույթի, վայրի, ժամային գրաֆիկի, գործընկերների գենդերային բաշխվածության: Ընդ որում՝ այստեղ սահմանափակումը սկսվում է ընտանիքում, որտեղ որոշվում է կնոջ աշխատելու կամ չաշխատելու թույլատրելիության հարցը: Այնուհետև սահմանափակումները շարունակվում են նաև աշխատավայրում:

«Ֆինանսական խնդիրներ ունեի, գնացել, մատուցող եմ աշխատել. մամաս շատ-շատ դեմ էր: Ասում էր՝ հայ աղջիկը տենց բան չի անի: Բայց դե միևնույնն է, ես աշխատել եմ 8 ամիս, ինքը չի իմացել դրա մասին: Բարեկամներից ոչ ոք չի իմացել, որովհետև դա քննարկման մեծ թեմա էր լինելու»:

18-28 տարեկան կին, Երևան

Ֆեմինիստական վերլուծության շրջանակում կնոջն աշխատանքից զրկելու և նրա ազատությունն այդ առումով սահմանափակելու փորձերը կարող են մեկնաբանվել նաև ավելի ընդարձակորեն: Երբ կինը հնարավորություն չունի աշխատելու և սեփական եկամուտն ունենալու, նրան ավելի հեշտ է զրկել կյանքի մի շարք ասպեկտներից՝ որոշումների կայացում, իշխանություն, անկախություն, բռնությունից զերծ ապրելու հնարավորություն, ինքնարտահայտում, ինքնադրսևորում, սոցիալական կապիտալի ձեռքբերում:

Հայաստանի աշխատաշուկայում զբաղված է կանանց 41%-ը: Աշխատանքային տարիքի 10 կանանցից 4-ն ունեցել է աշխատանք, 15-74 տարեկան կանանց 51%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել, աշխատաշուկայից դուրս կանանց և տղամարդկանց միջև առկա սեռային խզվածքը 39,3% է, այն հատկապես բարձր է 25-49 տարիքային խմբում, որտեղ հասնում է մինչև 67,3%-ի (Խալաթյան, Մարգարյան, խմբ.՝ Մանուսյան, 2022): Խտրականության տարբեր դրսևորումների հետևանքով կանայք, մեծ հաշվով, շարունակում են աշխատաշուկայից դուրս մնալ: Ավելին՝ դեռևս շատ են տարածված աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ, կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին:

Խնդիրն ավելի ակնառու է այն երիտասարդ կանանց պարագայում, որոնց դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից: Նրանք բարդություններ են ունենում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս ու մայրության արձակուրդից վերադառնալիս (նախադպրոցական կրթական հաստատությունները հազվադեպ են կազմակերպում մինչև 2-3 տարեկան երեխաների ընդունելություն)[12]:

Եթե կան ավելի քիչ սահմանափակումներ աշխատանքի և մասնագիտության առումով, ապա դա, կարելի է ասել, մի դեպքում՝ անընդհատ պայքարի, մյուս դեպքում՝ ընտանիքի մյուս անդամների կողմից փոխըմբռնման և վստահության հիմքեր ունի՝ հիմնված կնոջ կողմից «բացատրական» աշխատանքների վրա:

«Ճիշտ է, իմ ամուսինը չի ընդունում, որ ես աշխատում եմ, ասում է՝ չէ, չպիտի աշխատես, տանը նստի, երեխեքիդ նայի: Բայց իմ կարծիքով՝ դա շատ սխալ է, քանի որ եթե ես հասցնում եմ հա՛մ իմ երեխային նայեմ, հա՛մ տնային գործերով զբաղվեմ, հա՛մ աշխատեմ, ինչի՞ չաշխատեմ»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

Հետազոտության ընթացքում կանայք բազմիցս նշում են, որ սահմանափակումների տեսակները և պրակտիկաները ըստ բնակավայրերի կարող են տարբերվել: Անընդհատ խոսվում է այն մասին, որ գյուղում ավելի սահմանափակ է, քան քաղաքում, իսկ մարզային քաղաքում ավելի սահմանափակ է, քան Երևանում:

Այստեղ հետաքրքրական է դիտարկել նաև այն հանգամանքը, որ հիմնականում գյուղում ապրելը, «գյուղի մարդ լինելը», գյուղական համայնքում որպես կին ապրելն արդեն իսկ սահմանափակման մասին է վկայում՝ ըստ հետազոտության մասնակիցների:

«Ես այստեղ [Արմավիր] հասել եմ շատ պայքարներով, ձգտումներով: Գյուղում եմ եղել ամուսնացած, մեծ ընտանիք է եղել, խոչընդոտները շատ-շատ էին. հարցեր էին առաջանում, թե ո՞նց, գյուղի հարսը կարող է կար անե՞ղ, ինչ-որ տեղ գործ ունենա՞... շատ դժվար է»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Սոցիալական կյանքի և սոցիալական միջավայրի սահմանափակումներն ունեցել են հստակ գենդերային տարանջատում. մեծ մասամբ տղա ընկերներ ունենալն արգելվել է ծնողների կամ ընտանիքի մյուս տղամարդկանց կողմից, օրինակ՝ եղբայր, պապիկ: Հետազոտության մեկ այլ հետաքրքրական արդյունք է նաև այն, որ կանանց կողմից ամուսնությունը դիտարկվում է որպես սոցիալական կյանքի սահմանափակում: Այսպես, որքան շուտ է ամուսնանում աղջիկը, այնքան ավելի քիչ է հավանականությունը, որ նա հնարավորություն կունենա ծանոթանալու, շփվելու նոր ու մեծ թվով մարդկանց հետ և ունենալու շրջապատ՝ սոցիալական կապիտալ: Կանայք խոսում են նաև զուգընկերոջ/ամուսնու ընտրության հարցում իրենց մասնակցության բացակայության մասին:

«Ես էլ շատ փոքր եմ եղել՝ 15 տարեկան, 9-րդ դասարան էի փոխադրվում, նշանեցին: Ես էլ չէի հասկանում ամուսնությունը: Բերել են տուն, փակել են, անկեղծ եմ ասում՝ ոչ մի բան չէի հասկանում ամուսնությունից: Դրանից 9 ամիս անցնում է, տղաս ծնվում է, ինքը լացում է՝ ես հետը լացում եմ»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

[12] ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (2020). Տարեկան հաղորդում. 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին. վերցվել է՝ https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf?fbclid=IwAR3XKWbYe67dshvv357t4Txgt74bo8yz_T64AdH32F_h3b34cY9sAB9kTw4

«Այնպիսի մտածելակերպ է, որ երբ կինը ամուսնանում է, դառնում է տղամարդու սեփականությունը: Ինքն է որոշում՝ կինն ինչպես ապրի: Եթե կին ես, երեխաներ ունես, իրավունք չունես ավելորդ տեղեր գնաս, պիտի մենակ երեխաներիդ հետ լինես: Հա, էլի կողմ եմ, որ պիտի երեխաներով լինես, բայց յուրաքանչյուր մարդ ունի իր եսը, իր հետաքրքրությունները, կողքից ինչ-որ բանով ինքն էլ զբաղվի, ինչ-որ տեղ գնա, օրվա մեջ մի կես ժամով էդ առօրյա հոգսից ցրվի: Էլի թող իր ընտանիքով զբաղվի, բայց օրվա մեջ կարելի է, չէ՞, մի կես ժամ»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

Կանայք *բռնությունը ևս ձևակերպում են որպես սահմանափակում*, ավելի հաճախ են խոսում իրենց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի մասին: Ճիշտ է, դեռևս շատ են դեպքերը, երբ կանայք փորձում են ինչ-որ պատճառներ զուգահեռել՝ բռնությունն արդարացնելու համար, սակայն շատ են նաև այն կանայք, որ բռնությունը ձևակերպում են որպես հիմնախնդիր և խոսում դրա լուծման անհրաժեշտության մասին:

Հետազոտության մասնակից կանանցից գրեթե բոլորը կյանքի այս կամ այն փուլում ենթարկվել են տարատեսակ սահմանափակումների: Նույնիսկ այն դեպքերում, երբ որոշ կանայք ֆոկուսխմբային քննարկման սկզբում կտրականապես հերքում էին իրենց նկատմամբ կյանքի այս կամ այն փուլում եղած սահմանափակումները, քննարկման ընթացքում պատմում և նկարագրում էին իրենց կյանքի ինչ-որ դրվագում եղած սահմանափակման մասին: Իսկ սահմանափակողները կարող են լինել՝

- ծնողները՝ մայրերը և հայրերը,
- քույրերը և եղբայրները (նաև տարիքով փոքր եղբայրները),
- տատիկները և պապիկները,
- ավելի հեռու ազգականները՝ քեռի/հորեղբայր, մորաքույր/հորաքույր և այլն,
- քեռիների/հորեղբայրների, մորաքույրների/հորաքույրների տղաները և այլն,
- զուգընկերները և ամուսինները,
- սկեսուրները և սկեսրայրները, ամուսնու այլ բարեկամները,
- երեխաները (մեծ մասամբ՝ տղաները, և ավելի հասուն տարիքում),
- ուսուցիչները և համադասարանցիները,
- հասարակությունը՝ կնոջից, նրա գենդերային դերերից և սեռականությունից ունեցած սպասելիքների հիման վրա:

Հատկանշական է, որ հատկապես եղբայրների դեպքում դեռևս գործում է ծնողի կողմից քույրերի կյանքի ու որոշումների կայացման նկատմամբ «եղբորը արտոնություններ պատվիրակելը»: Մինչև ծնողներին հասնելը սահմանափակումներն արդեն իսկ դնում են եղբայրները:

Ամփոփելով հետազոտության քանակական տվյալները՝ տեսնում ենք, որ հետազոտության մասնակիցների 26,7%-ը երբևէ չի ենթարկվել սահմանափակումների ընտանիքի անդամ(ներ)ի, մտերիմների կողմից, իսկ մնացած մասը այս կամ այն կերպ ենթարկվել է: Հետազոտությանը մասնակցած կանանց 6,7%-ն այսօր էլ ենթարկվում է այդ սահմանափակումներին *(Գծապատկեր 1)*: Այս հարցին դժվարացել է պատասխանել կանանց 6,6%-ը: *Գծապատկեր 1-ում* առկա տվյալները ցույց են տալիս, որ ներկայում սահմանափակումների ենթարկվող 6,7%-ի զգալի մասը 18-28 տարեկան կանայք են: Այս տարիքային խմբի կանայք գերակշռում են նաև սահմանափակումների շատ հազվադեպ ենթարկվողների շարքում. «շատ հազվադեպ» տարբերակն ընտրած կանանց 29,5%-ից 15,2%-ը 18-28 տարեկան է:

Գծապատկեր 1. *Ընտանիքի/ընտանիքի անդամի կամ որևէ մտերիմ մարդու կողմից սահմանափակումների ենթարկվելու հաճախականությունն ըստ տարիքային խմբերի (%):*



Գծապատկեր 2-ում ներկայացված է կանանց սահմանափակումների ենթարկվելու հաճախականությունը՝ կախված ընտանեկան կարգավիճակից: Այս հարցին պատասխանել է 105 կին, որոնցից 56-ն ամուսնացած է, 43-ն ամուսնացած չէ, 4-ն ամուսնալուծված է, իսկ 2-ն՝ այրի: 56 ամուսնացած կանանցից 20-ը նախկինում հաճախ ենթարկվել է սահմանափակումների, իսկ ներկայում այլևս չի ենթարկվում, 15-ը շատ հազվադեպ է ենթարկվում, մյուս 15-ն ընդհանրապես չի ենթարկվել, իսկ 56 կնոջից 2-ը այժմ էլ ենթարկվում է սահմանափակումների: 43 չամուսնացած կանանցից 15-ը շատ հազվադեպ է ենթարկվում սահմանափակումների, 12-ը երբևէ չի ենթարկվել, 9-ը նախկինում ենթարկվել է, ներկայում՝ ոչ, իսկ 4–ն այսօր էլ ենթարկվում է տարբեր սահմանափակումների *(Գծապատկեր 2)*:

Գծապատկեր 2. *Ընտանիքի/ընտանիքի անդամի կամ որևէ մտերիմ մարդու կողմից սահմանափակումների ենթարկվելու հաճախականությունն ըստ ամուսնական կարգավիճակի (թվերով):*

Կանանց սահմանափակումների ենթարկում են հիմնականում ամուսիններն (29,2%) ու այդ կանանց ծնողները կյանքի տարբեր փուլերում (28,1%): Սահմանափակողների շարքում առանձնացվել են նաև եղբայրը՝ 14,6%, սկեսուր/սկեսրայրը՝ 10,4%, ընկերները/բարեկամները՝ 6,2%, ինչպես նաև հասարակությունը՝ 4,2% *(Գծապատկեր 3)*: Հետազոտության մասնակիցների 3,1%-ը սահմանափակումների է ենթարկվել նախկին զուգընկերոջ/ամուսնու կողմից:

Գծապատկեր 3. | *Սահմանափակումների ենթարկող անձինք (%):*



Անդրադառնալով նաև կարգավորման եղանակներին՝ փոքր քանակական հարցումը ցույց է տալիս, որ սահմանափակումների ենթարկված/ենթարկվող կանանց մեծամասնությունը՝ 62,3%-ը *(Գծապատկեր 4),* խնդիրը փորձել է կարգավորել՝ խոսելով սահմանափակումներ իրականացնող անձի հետ: Կարգավորման եղանակներից են նաև տվյալ անձի հետ վիճաբանությունը (11,7%) և ընտանիքի մյուս անդամներին կամ այլ ծանոթներին դիմելը օգնության կամ խորհրդի համար (7,8%): Հարցման մասնակիցների 10,4%-ը ոչինչ չի ձեռնարկել այդ խնդրի կարգավորման համար:

Գծապատկեր 4. | *Սահմանափակումների խնդրի կարգավորման եղանակները (%):*



Հետազոտության մասնակիցների վերաբերմունքը սահմանափակումներին շատ տարբեր է: Որոշ դեպքերում կանայք քննադատում են սահմանափակումներն ու սահմանափակողներին, ինչպես նաև այն կանանց, որոնք համաձայնում են շարունակել ապրել սահմանափակումների պայմաններում: Որոշ դեպքերում կանայք սահմանափակումներին հարմարվելը կամ «ինքնասահմանափակումը» ձևակերպում են որպես անհրաժեշտ նախապայման անվտանգության, ավելի մեծ խնդիրներից խուսափելու կամ «համերաշխ» կյանքի համար: Հատկանշական է, որ զիջումների մասին խոսելիս կանայք նաև սահմանում են սահմանափակումների ընդունելիության աստիճանը՝ ինչն է ընդունելի, որքան և ինչ պայմաններում: Ավելի հաճախ հետազոտության մասնակից կանայք խիստ են արտահայտվում բռնության՝ որպես սահմանափակման մասին, որը նրանց համար անընդունելի է:

Հետազոտության մասնակից կանանց մի մասը կարծում է, որ կանանց համար սահմանափակումները պետք է հաղթահարել ու կանխարգելել կնոջ անձնային աճի ու տնտեսական անկախության միջոցով, քանի որ ֆինանսական անկախությունը կնոջն իրավունքներ է տալիս:

«Եթե կինն ուզում է ինքնուրույն լինել, նախ պետք է անձնային աճն ապահովի, ինքնաբավ լինի, մասնագիտություն, կրթություն ձեռք բերի, նոր ամուսնանա, որպեսզի իր ձեռքի զումարն ունենա, հակառակ դեպքում ցանկացած, երբ որ լոլոներով են խոսում՝ «հայկական ավանդական», բոլորն էլ հասկանում են, որ այդ ավանդականի տակ աղքատության, նեղ մտածողության մի բան է ընկած. չեն բաժանվում, որովհետև տուն չկա, որ բաժանվեն ապրեն, ինքնաբավ չեն և այլն: Եթե կինն ունենա նյութական միջոցներ, հաստատ շատ ավելի հեշտ իր հետ հաշվի կնստեն՝ լինի տղամարդ, լինի սկեսուր, սկեսրայր»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Հետազոտությանը մասնակից կանայք նաև նշում են, որ տարիքի հետ փոփոխվել է հանդուրժողականությունը տարբեր երևույթների՝ սահմանափակումների և բռնությունների նկատմամբ: Մատնանշվում է նաև սերունդների միջև տարբերությունն այն առումով, որ իրենց կարծիքով՝ երիտասարդներն այժմ ավելի անհանդուրժող են սահմանափակող երևույթների՝ ներառյալ բռնության հանդեպ:

Ինչպես սահմանափակումները, այնպես էլ դրանց արձագանքելու ձևերը տարբեր են եղել ըստ հետազոտության մասնակից կանանց: Կանանց մի մասը նշում է, որ քննարկում կամ դրանց շուրջ զրուցում է հենց սահմանափակողի, հիմնականում ամուսինների և զուգընկերների հետ: Ծնողների հետ զրույցները ևս տարածված են, որոնք եզակի դեպքերում հանգեցնում են փոխըմբռնման: Կանայք նաև նշում են, որ քննարկում կամ քննարկել են սահմանափակումները մտերիմի հետ՝ մայր, քույր, ընկերուհի, հարևանուհի, բայց վերջիններիս արձագանքները տարբեր են: Կախված այդ արձագանքներից՝ կանայք ներփակվում են, զրկում են իրենց սոցիալական կյանքից և չեն խոսում ոչ ոքի հետ:

Արձագանքման ռազմավարություններից մյուսը նաև սահմանափակումների մերժումն է, նման դեպքում կանայք լքում են այն միջավայրը, որտեղ իրենց նկատմամբ սահմանափակումներ և բռնություններ կան: Հետազոտությանը մասնակից կանայք նշում են նաև, որ հարմարվել են և շարունակում են հարմարվել վերը նշված ամենատարբեր սահմանափակումներին: Հարմարման են դրդում նաև այն մտերիմները՝ ներառյալ աջակիցներից ոմանք, որոնց հետ կանայք կարող են խոսել:

Սեռական ոտնձգություն.սահմանումները, ընկալումներն ու դրսևորման միջավայրը

Հետազոտության մասնակից կանայք դժվարությամբ են սահմանում սեռական ոտնձգությունը և գրեթե չեն կարողանում տարբերակել սեռական ոտնձգությունը սեռական բռնությունից: Մի կողմից՝ կանայք դեռևս չունեն լեզու՝ խոսելու սեռական ոտնձգության, սեռական բռնության մասին, մյուս կողմից՝ սեռական բռնության տաբուացվածությունը հայաստանյան հասարակության մեջ լռեցնում է այս թեմաների շուրջ քննարկումները: Սեռական ոտնձգության մասին խոսելիս կանայք հիմնականում խոսում են այն միջավայրերի մասին, որտեղ կատարվել կամ սովորաբար կատարվում է սեռական ոտնձգությունը՝ ըստ վերջիններիս պատկերացումների: Որոշ դեպքերում մտաբերում և պատմում են սեռական ոտնձգության և սեռական բռնության դեպքեր, որոնք կատարվել են իրենց կամ իրենց ծանոթների միջավայրում, կամ որոնց մասին իրենք տեղեկացել են այլ աղբյուրներից՝ զանգվածային լրատվամիջոցներից, տարբեր խմբերում զրույցներից, սոցիալական մեդիայից և այլն: Կանայք հազվադեպ խոսում են իրենց հետ կատարված սեռական ոտնձգության և սեռական բռնության դեպքերից, իսկ խոսելիս ներկայացնում են դրանք իրենց անունից կամ էլ սեփական փորձառությունը ներկայացնում են որպես ինչ-որ այլ անձի հետ կատարված դեպք:

Սեռական ոտնձգության սահմանումները կանանց կողմից շատ տարբեր են: Ամենից հաճախ հանդիպողը՝ սեռական ոտնձգությունը, երևույթ է, երբ առանց համաձայնության, առանց դիմացինի ցանկությունը ճշտելու դիպչում են նրա մարմնի տարբեր հատվածներին: Սեռական ոտնձգությունը սահմանելիս ամենից հաճախ տրվող որակումը դիմացինի կամքի բացակայությամբ կամ նրա կամքին հակառակ գործողությունն է:

«Ինձ թվում է՝ առանց քո ցանկության, առանց քո համաձայնության, քո մարմնի ցանկացած հատվածին կպնելը սեռական ոտնձգություն է»:

18-28 տարեկան կին, Երևան

«Փոքրիկ հպումն էլ, որ քո կամքին հակառակ է, դու չես ցանկանում, շատ տհաճ է, ու դա էլ կարող է հանգեցնի ավելի լուրջ վիճակների»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Մարդու կամքին հակառակ քայլ է»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«Ոտնձգությունը, երբ մյուս կողմը դրան համաձայն չէ, բայց դու պահանջում ես անընդհատ»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

Սեռական ոտնձգության մասին խոսելիս կանայք այն բնութագրում և որակում են որպես մարդու իրավունքի ոտնահարում կամ նախապայման մարդու իրավունքների ոտնահարման համար:

«Սեռական ոտնձգությունը մի անձի կողմից մեկ այլ անձի իրավունքների խախտում է»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«[Սեռական ոտնձգությունը] ցանկացած բան է, ինչը կնոջ իրավունքներին դեմ է»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Սեռական ոտնձգության սահմանումների շուրջ քննարկումների ժամանակ կանայք հաճախ տարբերակում են սեռական ոտնձգության ենթարկվող անձանց՝ հիմնականում խոսելով անչափահասների՝ թե՛ աղջիկների, թե՛ տղաների (ընդ որում՝ անչափահասները սեռական ոտնձգության են ենթարկվում թե՛ անչափահասների, թե՛ չափահասների կողմից), չամուսնացած կանանց, ինչպես նաև ամուսնացած կամ ամուսնալուծված կանանց նկատմամբ ոտնձգության դեպքերից:

Տղամարդկանց հանդեպ ոտնձգության դեպքերը հետազոտության մասնակից կանայք մասնավորապես քննարկում են՝ հաշվի առնելով այն միջավայրը, որում դրանք տարածում ունեն, ավելի կոնկրետ՝ զինված ուժերի ոլորտը:

«Զինծառայողների շրջանում է լինում՝ պարտքի դիմաց: Վերջին 2 ամիս առաջ լուրերը, որ մի զինծառայող պարտքի դիմաց և այլն [սեռական ոտնձգության է ենթարկվել]: Երեք զինծառայող արդյունքում սպանվեցին: Ու շատ են, բանակում շատ են [սեռական ոտնձգության դեպքերը]»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Դիմացինի նկատմամբ սեռական ոտնձգություն կատարած բռնարարները ևս, ըստ հետազոտության մասնակից կանանց, շատ տարբեր են՝ ամուսնուց, ընտանիքի անդամից, շատ ծանոթ մարդուց մինչև պատահական անծանոթ մարդ՝ անկախ տարիքից և սեռից:

«Կարող է լինել ընտանիքի ներսից մինչև դրսի чужой [թարգմ.՝ օտար] *մարդ: Ամուսնուց սկսենք, որ կարող է այդ պահին կին ես, պատրաստ չես, ու այդ պահին տղամարդուն ենթարկվելը կարելի է վերնագրել նաև սեռական ոտնձգություն, մինչև սխալ կյանքով ապրած մարդու գործոնը»:*

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

Հետազոտության մասնակիցները «սեռական ոտնձգություն» եզրույթը սահմանելիս հաճախ խոսում են նաև այն միջավայրերի մասին, որտեղ դա կատարվում է: Այսպես, ըստ կանանց՝ ցանկացած միջավայր կարող է վտանգավոր լինել սեռական ոտնձգության տեսանկյունից՝ փողոց, հրապարակ, հասարակական տրանսպորտ, դպրոց, աշխատավայր, ընտանիք, բանակ, քրեակատարողական հիմնարկ և այլն: Ավելին՝ որոշ կանանց կարծիքով էլ սեռական ոտնձգությունն առավել բնորոշ է ավանդապաշտ, պահպանողական հասարակություններին, որտեղ մարդկանց սեռական ցանկությունների չբավարարվածությունը և սեռական ազատությունների ճնշվածությունը երևան են գալիս սեռական ոտնձգության տեսքով և ձևով:

«Նույնիսկ ականատես լինելը ձեռնաշարժությանը public [թարգմ.՝ հանրային] *վայրերում, որը շատ տարածված է, իսկ ես չգիտեի: Հրապարակի մոտ է շատ լինում: Ես մի անգամ ականատես եմ եղել. մեքենան եկավ, կանգնեց, մոտածեցի՝ ծանոթ մարդ է երևի, նայեցի, տեսա, ու... ուղղակի չորացել էի տեղում: Վազեցի հրապարակի մարդաշատ վայր, զանգեցի ընկերուհուս»:*

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Գործատուների կողմից նման առաջարկներ շատ են լինում: Հիմա նույնիսկ չեն թաքցնում կամ չգիտեմ՝ սար ու ձորեր ընկնում»:

29-39 տարեկան կին, Երևան

«Երևանում մետրոյում դեպք է եղել, ես տեսել եմ ամեն ինչ: Մի տղամարդ էր, երևի 45 տարեկան կամ ավելի մեծահասակ: Աղջիկը կանգնած էր, ինքն էլ հետևից, ու ակնհայտ այդ տղամարդը աղջկան ձեռք էր զցում: Այնտեղ մի տղա տեսավ, քաշքշուկ եղավ, ու այդ ամեն ինչի մեջ այդ աղջկա դեմքն էր [տպավորվել]: Իրեն ահավոր էր զգում, շատ վատ էր զգում այդքան մարդու մոտ»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

Հետազոտության ընթացքում հավաքված տեղեկությունները վերլուծելիս կարող ենք արձանագրել, որ կանայք հիմնականում չեն ճանաչում սեռական ոտնձգության երևույթը: Սեռական ոտնձգությունն առավել հաճախ նույնացվում է սեռական բռնության հետ, կամ առհասարակ բոլոր տեսակի բռնություններն ընդհանրացվում են՝ հիմնականում ընկալվելով որպես ֆիզիկական բռնություն: Հաճախ նաև սեռական ոտնձգության դեպքերը, ըստ հետազոտության մասնակիցների, հետահայաց են ճանաչվում և մեկնաբանվում որպես այդպիսին:

«Ես որ փոքր էի, մեր անցումի տակ մի տղամարդ շալվարի ցեպը բացած միշտ ման էր գալիս: Որ հիմա հետահայաց նայում եմ, հասկանում եմ, որ դա սեռական ոտնձգություն էր»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Այստեղ կարևոր է շեշտելը, որ հիմնականում հետազոտության մասնակից կանայք դժվարությամբ են խոսում սեռական ոտնձգության դեպքերի մասին, պատմությունները հիմնականում ուղղորդվում էին ծիծաղով, իսկ ավելի հաճախ սկսում էին պատմել իրենց հետ կատարված ոտնձգության դեպքերի մասին այն ժամանակ, երբ խմբում ինչ-որ մեկը խոսում էր սեփական փորձից: Այս խոսակցությունն առավել բարդանում է հատկապես, երբ կանայք սկսում են խոսել սեռական բռնության մասին:

Սեռական բռնություն. ընկալումներից մինչև պաշտպանություն

Սեռական բռնությունը ակտ է, որի նպատակն է դիմացինին ենթարկեցնել սեփական պահանջներին՝ օգտագործելով ուժ, ստիպողականություն, իշխանություն կամ սպառնալիք: Սեռական բռնությունը մարդու իրավունքների ոտնահարում է[13]: Ինչպես սեռական ոտնձգության, այնպես էլ սեռական բռնության ընկալումներն ու սահմանումները շատ անհստակ են: Սեռական բռնության և սեռական ոտնձգության երևույթները հաճախ կանանց ընկալումներում սերտաճած են, և կանայք դժվարանում են տարբերակումներ դնել և երևույթներին սահմանումներ տալ:

Սեռական բռնության սահմանման մասին խոսելիս կարևոր է անդրադառնալ դրա տարբերակման կարևոր բաղադրիչներից մեկին՝ «համաձայնությանը»: Այսպես՝ ցանկացած սեռական հարաբերություն կամ դրա փորձը, որ կատարվել է մարդու կամքին հակառակ կամ այնպիսի հանգամանքներում, որոնցում տուժողը **համաձայնություն** չի տվել, սեռական բռնություն է[14]: Համաձայնությունն այս համատեքստում առկա է, երբ ցանկացած տեսակի սեռական գործողության, սեռական հարաբերության մեջ ներառված անձինք իրենց կամքով և ընտրությամբ են համաձայնել լինել տվյալ հարաբերության կամ գործողության մեջ: Ավելին՝ կարևոր է, որ սեռական գործողության մեջ ներգրավված անձինք ունենան ընտրություն կատարելու **ազատություն** և **կարողություն**[15]: Ընդ որում՝ այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել, որ եթե սեռական գործողության մեջ ներգրավված կողմերից մեկը ուղիղ ձևով չի հրաժարվել կամ չի ընդդիմացել, ապա դա դեռ չի նշանակում, որ համաձայն է այն ամենին, ինչ տեղի է ունենում: Այստեղ կարևոր է խոսել նաև **«կառուցողական համաձայնության»** մասին (affirmative consent), երբ մարդը եթե հստակ, բառացիորեն չի ասել, որ համաձայն է որևէ սեռական գործողության, ապա ցանկացած գործողություն կարելի է համարել բռնություն: Ավելին՝ ցանկացած պահի սեռական գործողության կողմերից մեկը կարող է փոխել իր որոշումը, իսկ նրան համոզելու, մանիպուլացնելու, հոգեբանական ճնշման հետևանքով ձեռք բերված համաձայնությունը ևս բռնություն կարող է համարվել[16]:

Հետազոտության մասնակից կանայք «սեռական բռնություն» եզրույթը սահմանելիս հիմնականում օգտագործում են հետևյալ ձևակերպումները՝ *«սեռական գործողություն առանց մարդու համաձայնության», «կամքից անկախ», «կամքին հակառակ», «հարկադրաբար»* սեռական գործողություն իշխանություն, ուժ ունեցողի կողմից ավելի *«թույլ»* մարդու նկատմամբ: Հստակ է, որ հետազոտության մասնակից կանանց կողմից «սեռական բռնության» հիմնական որակավորումը, որը տրվում և դրվում է «սեռական գործողությունը» «սեռական բռնությունից» տարբերակելու հարցում, համաձայնությունն է:

«Դե առանց կամքդ հաշվի առնելու, դա արդեն բռնություն է, առանց փոխհամաձայնության»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Կամքին հակառակ գործողություն է»:

29-39 տարեկան կին, Երևան

«Որ դու չես ուզում, բայց զոռով [սեռական գործողություն է տեղի ունենում]...»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

[13]Սահմանումը՝ ըստ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի:
[14]Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action. Ինչպես աջակցել գենդերային բռնություն վերապրած անձանց, երբ ձեր բնակավայրում մասնագիտացված ծառայություններ չկան. վերցվել է՝ https://gbvguidelines.org/wp/wp-content/uploads/2020/09/GBV_UserGuide_Arm-UNICODE.pdf
[15]Rape Crisis England & Wales. What is sexual consent? Retrieved from: https://rapecrisis.org.uk/get-informed/about-sexual- violence/sexual-consent/
[16]SUNY: The State University of New York. Definition of Affirmative Consent. Retrieved from: https://system.suny.edu/sexual-violence-prevention-workgroup/policies/affirmative-consent/

«Բռնություն է, որովհետև տվյալ մարդու կամքին հակառակ է՝ կլինի սեռական կամ մտավոր»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Ինձ համար սեռական բռնությունը, ընդհանրապես, մարդու ակտիվ համաձայնությունը չստանալով սեռական գործողություններ անելն է»:

18-28 տարեկան կին, Երևան

Ինչպես արդեն նշել էինք «սեռական ոտնձգությունը» սահմանելիս, հետազոտության մասնակից կանայք դժվարությամբ են տարբերում «սեռական ոտնձգությունը» «սեռական բռնությունից», հաճախ նաև մի հասկացությունը սահմանում են մյուս հասկացությամբ: Ավելին՝ «սեռական բռնություն» եզրույթը սահմանելիս կանայք հաճախ աստիճանակարգում են երևույթը՝ «սեռական ոտնձգությունը» ներկայացնելով որպես միևնույն երևույթի ավելի «մեղմ» արտահայտում, իսկ «սեռական բռնությունն»՝ «անթույլատերի վերին շեմ», «կարմիր գիծ»՝ հիմնականում օրինակ բերելով բռնաբարությունը:

«Չգիտեմ ինչի բողոքի մոտ առաջինը գալիս է կոնկրետ բռնաբարությունը, բայց մինչև դա այնքան մանր-մունր բաներ կան, որոնցով սեռական ոտնձգությունից հասնում ես դրան, որ ուղղակի վախենալու է պատկերացնել»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Հենց բուն ակտը բռնություն է համարվում, մյուսները՝ ոտնձգություն»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«Ոտնձգությունը, որ ուզում են ինչ-որ բան անել, իսկ բռնությունը, որ արդեն արել են»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Սեռական բռնությունը, իմ պատկերացմամբ, հենց ակտն է, իսկ սեռական ոտնձգությունը կարող է լինել անգամ ակնարկը՝ սովորական ակնարկ, դիալոգ: Մատով չի կպել քեզ, բայց բաներ է ակնարկել: Ինձ համար սա սեռական ոտնձգություն է: Վերջերս այսպիսի դեպք ունեցանք՝ նամակով նկար ուզելու: Իմ պատկերացմամբ, դա արդեն սեռական ոտնձգություն է»:

29-39 տարեկան կին, Երևան

«Սեռական բռնության» շուրջ կանանց ընկալումներում երևույթը հաճախ նույնացվում է ֆիզիկական բռնության հետ: Սա պայմանավորված է նրանով, որ սեռական բռնությունը հաճախ փոխկապված է ֆիզիկական բռնության հետ, թեև կարող է ունենալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական արտահայտում: Մյուս կողմից էլ «սեռական բռնության»՝ «ֆիզիկական բռնության» հետ շփոթի հիմքում ընկած է ֆիզիկական բռնություն կիրառողի հատկանիշների մասին քննարկումը: Ֆիզիկական բռնությունը մեծ մասամբ գործադրվում է տղամարդկանց կողմից կանանց հանդեպ՝ իշխանություն գործադրելու և դրսևորելու նպատակով: Ընտանեկան, գենդերային հիմքով սեռական բռնության շուրջ ուսումնասիրությունները փաստում են, որ բռնության տարբեր տեսակների միջև կա որոշակի փոխկապվածություն: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի «Կանանց նկատմամբ բռնություն. 2021» հետազոտության արդյունքների՝ Հայաստանում սեռական բռնության ենթարկված կանանց 62.5%-ը ենթարկվել է նաև ֆիզիկական բռնության, իսկ ֆիզիկական բռնության ենթարկվածների 27.8%-ը՝ նաև սեռական բռնության (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021): Այսինքն՝ կնոջը ֆիզիկական բռնության ենթարկող տղամարդն ավելի շատ է հակված իր զուգընկերոջը ենթարկելու նաև սեռական բռնության և հակառակը՝ կնոջը սեռական բռնության ենթարկող տղամարդիկ ավելի շատ են հակված կիրառելու ֆիզիկական բռնություն:

«Ծեծը կարող ենք համարել սեռական բռնություն նրանով, որ սեռով է պայմանավորված. տղամարդը լիդեր է, իրեն ամեն ինչ կարելի է: Իգական սեռի ներկայացուցչի վրա կարող է ձեռք բարձրացնի»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Կնոջը քաշքշելը, խփելը [սեռական բռնություն է]»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Սովորական հարվածելը... [սեռական բռնություն է]»:

29-39 տարեկան կին, Երևան

«Դա համար մեկ բռնությունն է, ինձ թվում է՝ մարդու կամքին հակառակ սեռական գործողությունը: Դրանից հետո ծեծ կլինի, ջարդ կլինի»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Ինչպես «սեռական ոտնձգություն» հասկացության սահմանման ժամանակ, այնպես էլ սեռական բռնության երևույթին անդրադառնալիս հետազոտության մասնակից կանայք խոսում են սեռական բռնության նկատմամբ խոցելի խմբերի, այն հնարավոր վայրերի և միջավայրի մասին, որտեղ կարող է լինել բռնությունը: Հետազոտության մասնակիցները կանանց և երեխաներին դիտարկում են որպես սեռական բռնության նկատմամբ խոցելի խումբ: Երեխաների և անչափահասների նկատմամբ բռնության դեպքերը նկարագրելիս օրինակներ են բերվում ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների կողմից անչափահասների նկատմամբ բռնության դեպքերի մասին: Վերջիններս կարող են լինել ինչպես ընդհանրապես անծանոթ մարդիկ, այնպես էլ ընտանիքի անդամներ, բարեկամներ:

«Վերջերս մեր մարզում սեռական բռնության դեպք է եղել՝ դասարանցիների միջև: Հենց դպրոցում է եղել, 3-ի կողմերը, ու հիմա խստացրել են, որ ուսուցիչներն ու տնօրենը պետք է մինչև 5-ը մնան դպրոցներում»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Հետազոտության մասնակից կանայք առավել հաճախ խոսում և բարձրաձայնում են ամուսնական հարաբերություններում սեռական բռնության դեպքերի մասին: Այստեղ էլ, սակայն, ամուսնական հարաբերություններում սեռական բռնության ընկալման սկզբունքները և դրա հանդեպ կանանց մոտեցումները շատ տարբեր են: Հետազոտության մասնակից որոշ կանայք սեռական բռնության մասին խոսելիս հետևյալ ձևակերպումներն են տալիս՝ *«չսիրելով ամուսնանալ»*, *«սեռական հարաբերությունից հրաժարվելու պարագայում քեն պահել»*, *«կնոջ կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ»*, *«դիմացինին սեփական սեռական ֆետիշները պարտադրել»* և այլն:

«Ամուսինս, որ Ռուսաստանից եկել էր, այնքան վատ էր: Ինքը այդպես չէր, հետո որ գնաց Ռուսաստան, եկավ, այնպիսի վատ բաներ էր ասում: Ասում էր՝ դու ի՞նչ կնիկ ես, դու ի՞նչ ես հասկանում, կովի պես ես: Հետո որ ես վիրավորված էի լինում իրենից, դե սիրտ չես ունենում, չէ՞ [էդքան բանից հետո], պիտի սիրելով ամեն բան ստացվի... Զոռով, անգամ լացելով [սեռական հարաբերություններ ենք ունեցել]... այդ ընթացքն ինձ համար լացելու ընթացք էր: Էլ ասում էր՝ թքեմ քո վրա, ուրիշ հայհոյանքներ: Ես ավելի սառեցի, ավելի հիասթափվեցի, ինքն իմ դեմ ավելի լարվեց»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

«Ես դեպքեր եմ լսել, որ անգամ անմաքուր օրերին [խմբ.՝ նկատի ունի դաշտանը] *էլ ամուսինը չի թողնում հանգիստ: Դա բռնություն է, բա ի՞նչ է: Պիտի փոխադարձ հարգանք լինի, պիտի երկկողմանի համաձայնություն լինի ամեն պահի համար էլ»:*

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Ամուսնական հարաբերություններում սեռական բռնության մասին խոսելիս կանայք հազվադեպ նաև առանձնացնում են տղամարդկանց՝ որպես սեռական բռնության ենթարկված անձանց, ինչը երբեմն մեկնաբանվում է որպես *«բռնության նուրբ ձև»:*

«Լինում է, որ տղամարդը չի ուզում, կինն է ուզում, նույն պատմությունն է առաջանում: Ըստ իս՝ նուրբ բռնության տեսակ է: Կամ մանիպուլյացիայի է ենթարկում, մանավանդ կինը: Ամուսինս այս բանը չարեց, հետը սեռական հարաբերություն չեմ ունենալու, քթից բերելու եմ: Այնքա՞ն են անում»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

Անդրադառնալով սեռական բռնության սահմանման ու տիպաբանման առնչությամբ քանակական հարցման արդյունքներին՝ մասնակից կանանց 38,2%-ը նշել է, որ սեռական բռնություն են իրենց պատկերացմամբ մեր կողմից հարցաշարում առանձնացված «բոլորը» տարբերակները[17], ինչը նշանակում է, որ Գծապատկեր 5-ում նշված բոլոր տարբերակները նրանք դասում են սեռական բռնության շարքին: Այս պատասխանն ընտրած 38,2%-ից 15,3%-ը՝ 40-50, 12,3%-ը՝ 29-39, և 10,6%-ը 18-28 տարեկան կանայք են: 18,3% կանայք սեռական բռնություն են համարել բռնաբարությունը/ամուսնական բռնաբարությունը, 12,9%-ը՝ հանրային վայրում հպումները սեռական օրգանով կամ մարմնի այլ մասով դիմացինի մարմնի տարբեր հատվածներին, ընդ որում՝ այս տարբերակներն ընտրածների շարքում գերակշռում են 18-28 տարեկան կանայք՝ կազմելով 12,9%-ից 7,1%-ը: Սեռական բռնություն է համարվել նաև պոռնոգրաֆիկ բնույթի ֆիլմերում ստիպողաբար նկարահանումը կամ ցուցադրումը (12,3%-ը, որից 6,4%-ը 18-28, 3,5%-ը՝ 40-50, և 2,4%-ը 29-39 տարեկան կանայք են), հանրային վայրում սեռական օրգանի ցուցադրումը (7,7%, որից 3,6%-ը՝ 18-28, 2,4%-ը՝ 40-50, և 1,7%-ը 29-39 տարեկան կանայք են) և այլ անձանց սեռական ակտի ընթացքում ներկա լինելու հարկադրանքը (7,1%, որից 3,5%-ը՝ 18-28, 2,3%-ը՝ 40-50, և 1,3%-ը 29-39 տարեկան կանայք են):

Գծապատկեր 5. *«Թվարկվածներից որո՞նք են, Ձեր կարծիքով, սեռական բռնություն» հարցի պատասխանի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի (%):*



[17]Հարցաթերթում ներառված տարբերակներն էին՝ 1) բռնաբարություն/ամուսնական բռնաբարություն, 2) պոռնոգրաֆիկ բնույթի ֆիլմերում ստիպողաբար նկարահանում կամ ցուցադրում, 3) հանրային վայրում սեռական օրգանի ցուցադրում, 4) հանրային վայրում հպումներ սեռական օրգանով կամ մարմնի այլ մասով դիմացինի մարմնի տարբեր հատվածներին, 5) գաղտնի հետևում, 6) այլ անձանց սեռական ակտի ընթացքում ներկա լինելու հարկադրանք:

«Թվարկվածներից որո՞նք են, Ձեր կարծիքով, սեռական բռնություն» հարցի համար տրվել է մեկից ավելի պատասխան ընտրելու հնարավորություն, ինչի արդյունքում պատասխանների ընդհանուր գումարն ավել է մասնակիցների թվից: Ամուսնացած կանայք տվել են ընդհանուր 71 պատասխան, որից ամենաշատ հնչածը «բոլոր տարբերակները» պատասխանն է (35), իսկ երկրորդ տեղում «բռնաբարություն/ամուսնական բռնաբարություն» տարբերակներն են (13) (Գծապատկեր 6): Չամուսնացած կանայք տվել են ընդհանուր 81 պատասխան, որտեղ ամենահաճախը կրկին «բոլոր տարբերակները» պատասխանն է (27), երկրորդ տեղում՝ «բռնաբարություն/ամուսնական բռնաբարություն» (14), երրորդ տեղում՝ «հանրային վայրում հպումներ սեռական օրգանով կամ մարմնի այլ մասով դիմացինի մարմնի տարբեր հատվածներին» (13), չորրորդ տեղում «պոռնոգրաֆիկ բնույթի ֆիլմերում ստիպողաբար նկարահանում կամ ցուցադրում» տարբերակներն են (12):

Գծապատկեր 6. *«Թվարկվածներից որո՞նք են, Ձեր կարծիքով, սեռական բռնություն» հարցի պատասխանի բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի (թվերով):*



Սեռական բռնության պատճառների վերաբերյալ ընկալումները

Կան բազմաթիվ գործոններ, որոնք նպաստում են սեռական բռնությանը: Սեռական բռնություն գործադրող բռնարարների մեծ մասը հիմնականում հավատացած է, որ իրավունք, իշխանություն և վերահսկողություն ունի դրա համար: Սեռական բռնություն գործադրող բռնարարների մեծ մասն աշխարհում ունի «ավանդական» պատկերացումներ գենդերային դերերի մասին, որոնք շեշտում են տղամարդկանց գերիշխանությունը և կանանց անհավասարությունը, ինչն էլ բռնարարներին «թույլ է տալիս» թիրախավորել կանանց և նրանց նկատմամբ գործադրել բռնություն[18]:

Հայրիշխանական համակարգը, գենդերային կարծրատիպերը սեռական բռնությունն ուսումնասիրող գրականության մեջ առանձնացվում են որպես գործոններ, որոնք պատճառ են ոչ միայն գենդերային անհավասարության խորացման, այլև սեռական բռնություն գործադրելու, այն «արդարացնելու կամ ներելու» համար: Սեռական բռնության երևույթն ուսումնասիրող մասնագետներն իրենց աշխատություններում առանձնացնում են անհատական, հարաբերութային, համայնքային և հասարակական բնույթի որոշ գործոններ, որոնք մեծացնում են մեկի կողմից դիմացինին սեռական բռնության ենթարկելու հավանականությունը[19]: Այսպես՝ սեռական բռնության երևույթն ուսումնասիրող գրականության մեջ առանձնացված սեռական բռնությանը նպաստող ***անհատական ռիսկային գործոններից*** կարող են լինել ալկոհոլի և թմրանյութերի չարաշահումը, զանցանքը, ագրեսիվ վարքը կամ բռնության մշակույթի նկատմամբ հանդուրժողականությունը, վաղ սեռական փորձառությունը, հարկադրանք պարունակող սեռական ֆանտազիաներ ունենալը, սեռական և պոռնոգրաֆիկ բնույթի մեդիա սպառումը, կնատյացությունը, հավատարմությունը ավանդական գենդերային նորմերին, հիպեր-առնականությունը և այլն: Սեռական բռնությանը նպաստող ***հարաբերութային ռիսկային գործոններ*** կարող են լինել կոնֆլիկտների և բռնության ընտանեկան պատմությունները և միջավայրը, սեռական, ֆիզիկական և հոգեբանական բռնության ենթարկվելու մանկական փորձառությունը, էմոցիոնալ աջակցություն չտրամադրող ընտանեկան միջավայրը, երեխա-ծնող հարաբերությունների խնդրայնությունը, ագրեսիվ, հիպեր-առնական, բռնարար հասակակիցների խմբի անդամ լինելը, բռնի ինտիմ հարաբերությունների մեջ ներգրավվածությունը կամ դրա նախկին փորձառությունը և այլն: Իսկ սեռական բռնությանը նպաստող ***համայնքային ռիսկային գործոններից*** են աղքատությունը, գործազրկությունը, ոստիկանության և դատաիրավական համակարգի կողմից աջակցության բացակայությունը, համայնքում սեռական բռնության հանդեպ հանդուրժողականությունը և այլն: ***Հասարակական կամ սոցիալական ռիսկային գործոններից*** են այն հասարակական նորմերը, որոնք աջակցում են սեռական բռնությանը, տղամարդու «գերազանցությանը» և սեռական ազատություններին ու շեշտադրում են կանանց թերարժեքությունն ու սեռական հնազանդությունը[20]: Բռնություն գործադրողի վարքի սոցիալ-մշակութային համատեքստով պայմանավորվածությունն արտահայտվում է այն ընկալմամբ, որ տղամարդու մասկուլինության և ուժի ցուցադրականությունը մշակութային պահանջ է, որի հիման վրա էլ Հայաստանի տղամարդիկ ավելի «բռի» և «կոպիտ» են: Տղամարդը սոցիալական միջավայրի՝ ծնողական ընտանիքի, շրջապատի ազդեցությամբ փորձում է հաստատել կնոջ հանդեպ իր արտոնյալ վերադաս դիրքը՝ նրա հանդեպ բռնություն և սահմանափակումներ կիրառելով (Ժամակոչյան, Խալաթյան, 2017):

[18]Rutgers, The State University of New Jersey (2023). Why does sexual violence occur? Retrieved from: http://vpva.rutgers.edu/sexual-violence/why-does-sexual-violence-occur/

[19]Center for Disease Control and Prevention (2022). Risk and Protective Factors. Retrieved from: https://www.cdc.gov/violenceprevention/sexualviolence/riskprotectivefactors.html

[20]Նույն տեղում:

Այստեղ կարևոր է շեշտելը, որ հասարակական ռիսկային գործոններ են նաև սեռական բռնության և գենդերային հավասարության մասին թույլ օրենքներ ունենալը և նման իրավախախտումներին ոչ պատշաճ գնահատականներ տալն ու անպատժելիությունը[21]:

Հետազոտության մասնակից կանայք ևս, խոսելով սեռական բռնության պատճառների մասին, առանձնացնում են անհատական, հարաբերութային, համայնքային գործոնները, սակայն հատկապես խոսում են հասարակական և սոցիալական գործոնների մասին, որոնք ինչպես բարենպաստ միջավայր են ստեղծում սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի համար, այնպես էլ նպաստում են սեռական բռնության հանդեպ հանրային լռության և անտարբերության կամ այն արդարացնել փորձելու պատճառների փնտրտուքին: Այսպես՝ կանայք որպես սեռական բռնության պատճառներ կամ սեռական բռնությանը նպաստող հասարակական գործոններ առանձնացնում են հայրիշխանական համակարգը, հայրիշխանական համակարգում տղամարդկանց վերագրված գենդերային դերերը, հասարակությունում առկա գենդերային անհավասարությունը և այլն:

«Իմ կարծիքով՝ դա հենց այդ պատրիարխալ [հայրիշխանական] համակարգից է, որովհետև տղաներին փոքր ժամանակվանից ասում են՝ դու ինչ ուզես, կարաս անես, նույնիսկ տրանսպորտի մեջ, տրանսպորտի վարորդը ինչ-որ պատահական երեխայի ասում էր՝ ինչ աղջիկ ուզես, կարաս իրան հասնես»:

18-28 տարեկան կին, Երևան

«Հայ իրականությունում տղաներին ավելի շատ արտոնություններ, իրավունքներ են տրվում, քան կանանց ու աղջիկներին: Ըստ իս՝ դա էլ կարող է պատճառ հանդիսանալ սեռական և այլ տեսակի բռնության համար»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Լիքը մայրեր են մեղավոր, դաստիարակում են կնատյաց, «խփնված» տղաների, որ ամբողջ աշխարհն իրենց պարտավոր է, ցանկացած աղջիկ իրենց առաջ չգիտեմ ինչ պետք է անի, ու մեծացնում են նրանց, ում տեսնում ենք»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Որպես սեռական բռնությանը նպաստող հասարակական գործոն՝ կանայք առանձնացնում են նաև հայաստանյան հասարակության մեջ սեռականության, սեռական կյանքի և սեռական հարաբերությունների տաբուացվածությունը: Կանանց կարծիքով՝ սեռական կյանքի հանրային վերահսկողությունը և դրա նկատմամբ արգելքը տղամարդկանց շրջանում բերում են *«սեռաքաղցության»*, ինչն էլ կարող է սեռական բռնության պատճառ դառնալ հետագայում:

«Դա գալիս է սեռաքաղցությունից, և որ շատ վստահ են տղամարդիկ իրանց վրա, որովհետև հենց փոքր տարիքից, եթե ես մեծանամ ու կողքից լսեմ՝ դու ամեն ինչ կարաս, վայ դու տղա ես, վայ դու աստված ես, բան, ես էլ իմ վրա տենց վստահ կլինեի: Իրանց էդ «բոհությունը», վստահության չափը, դա է դրդում, որ ամեն քայլ կարան անեն՝ ինչ ուզեն»:

18-28 տարեկան կին, Երևան

«Շատ սեռաքաղց մասսա է, տղաները հիմնականում շատ սեռաքաղց են, իրենց մեջից են այդ խնդիրները գալիս, իրենք պետք է փորձեն լուծել այդ խնդիրները»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

[21] Նույն տեղում:

«Կրթության պակասը, հասարակության սեռաքաղց լինելը, որ արգելված է ազատ հարաբերությունը»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Դե երևի հենց դա՝ զսպվածությունը»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

«Ինձ թվում է, եթե սեքսը լիներ նորմալ, տաբու չլիներ, դրա մասին հանգիստ կարողանայինք խոսել, շատ մարդկանց համար հիվանդագին բան չէր դառնա»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Այստեղ կանայք նաև առանձնահատուկ շեշտում են մեդիայի դերը, որը կարող է և ունենում է էական բացասական ազդեցություն և նպաստավոր միջավայր է ստեղծում սեռական բռնության համար:

«Մեդիան ահավոր մեծ ազդեցություն ունի: Որ նայում ենք հայկական կինոները, 90%-ը, կապ չունի ինչ սերիալ է, իրենք ռոմանտիզացնում են տղամարդկանց»:

18-28 տարեկան կին, Երևան

Գենդերային, սեռականությանն առնչվող հարցերն արագ մանիպուլացվող և քաղաքական դաշտում հայտնվող թեմաներ են, որոնք, ազդելով լրատվական դաշտի վրա, շարունակական են դարձնում բռնությունը: Հայաստանում ժամանցային հեռուստահաղորդումները լի են բռնությամբ, որը նորմավորված է և ներկայացվում է որպես իրականության մի մասնիկ: Նույնն է նաև սեռական բռնության պարագայում: Իսկ լրատվություն արտադրող ԶԼՄ-ները սեռական բռնության դեպքերը լուսաբանելիս հիմնականում տարածում են պետական տարբեր գերատեսչությունների հրապարակած պաշտոնական տեղեկատվությունը կամ լուսաբանում են սեռական բռնության դեպքը: Ընդ որում՝ լուսաբանելիս լրագրողները կարող են անել այնպիսի հարցադրումներ, որոնք քննադատություն և մեղադրանք են պարունակում, ուղղված են բացահայտելու դեպքի մանրամասներն ու հանգամանքները, երբեմն կարող են հրապարակել անձնական տվյալներ, որոնք էլ սեռական բռնության զոհին ևս մեկ անգամ են զոհականացնում (Հովհաննիսյան, Ղարիբյան, 2021):

Որպես սեռական բռնության պատճառներ կանայք նաև առանձնացնում են սեռական բռնության հանցագործությունների նկատմամբ հանրային հանդուրժողականությունը, բռնության ենթարկված անձին, այլ ոչ թե բռնարարին մեղադրելը, անպատժելիության մթնոլորտը, ինչպես նաև առհասարակ հանրության վերաբերմունքը սեռական բռնության երևույթին և այն շղարշած համատարած լռությունը:

«Անպատիժ են մնում, դրա համար կրկնվում է»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Նախ կանանց խնդիրը ահավոր կա, որ կանայք էլ են ահավոր նպաստում, որ այդ տղամարդիկ իրանց լավ զգան, սկսում են ուրիշ կանանց մեղադրել, որ իրանք են մեղավոր, մյուս կողմից՝ մեդիան»:

18-28 տարեկան կին, Երևան

Հետազոտության մասնակից կանայք որպես սեռական բռնության պատճառներ կամ սեռական բռնությանը նպաստող անհատական գործոններ հաճախ են անդրադառնում բռնարարի անհատական հատկանիշներին, մասնավորապես հոգեկան առողջությանն առնչվող գնահատականներ են տալիս, որպես բռնությանը նպաստող գործոն առանձնացնում են ալկոհոլի և թմրադեղերի ազդեցության տակ լինելը, անդրադառնում են կրթության և դաստիարակության մակարդակին կամ խոսում են բռնարարի՝ որոշակի դիրք, պաշտոն զբաղեցնելու մասին: Սեռական բռնության պատճառների մասին խոսելիս հատկապես գերակշռող են բռնարարի հոգեկան դրության մասին խոսակցությունները:

«Հոգեբանական խնդիրներ են հաստատ: Ցանկացած մարդ, որ բռնություն է գործադրում իրենից թույլի նկատմամբ, այդ մարդն ունի հոգեբանական խնդիր»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Կարելի է ասել՝ իրենք հոգեկան շեղումներ ունեն»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Հենց այդ բռնարարը, ինձ թվում է, որ ուժ է գործադրում իր կարիքները հոգալու համար, ինքը հոգեբանական լուրջ խնդիրներ ունի»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Հետազոտության մասնակիցները որպես բռնության պատճառ են առանձնացնում նաև բռնարարի կողմից ալկոհոլի, թմրադեղերի կամ այլ հոգեմետ ու հոգեներգործուն միջոցների չարաշահումը:

«*Կարող է [պատճառ] լինի հարբեցողությունն էլ, եթե մարդիկ տենց խնդրով են տառապում* (խմբ.՝ նկատի ունի բռնարար լինելը)»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Կամ լինում են ինչ-որ բանի, թմրանյութի ազդեցության տակ»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Հաճախ են դեպքերը, երբ կանայք որպես սեռական բռնության պատճառ առանձնացնում են նաև բնազդը և տղամարդկանց բնազդաբար գործելը:

«Տղաների մոտ ավելի շատ բնազդաբար է»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Տղամարդկանց համար էլ, էդ որ ասում են կենդանական բնազդներ, երբ որ մարդիկ չեն կարողանում իրենց կարիքները նորմալ հոգալ, գուցե ինչ-որ մարդկանց մոտ այդ կենդանական բնազդներն են ի հայտ գալիս ու ավելի սուր են արտահայտվում»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Կանայք որպես սեռական բռնության պատճառներ են ներկայացնում նաև բռնարարի կրթվածությունը, կրթական մակարդակը, ինչպես նաև հանրության մեջ նրա զբաղեցրած դիրքը: Կանայք չեն բացառում, որ շատ կրթված մարդիկ ևս կարող են սեռական բռնություն գործադրել, ինչպես նաև դրան կարող է նպաստել բռնարարի՝

բարձր կամ հեղինակություն ունեցող պաշտոն զբաղեցնելը:

«Պատճառները կա՛մ իրանց չկրթվածության արդյունք է, կա՛մ տրավմա ունեն»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Չկայացած, չկրթված: Ինչո՞ւ ոչ, դրանք սաղ պատճառ են:

29-39 տարեկան կին, Երևան

«Պաշտոնի բերումով էլ է հնարավոր: Դիրքի բերումով: Ու ամենաշատ հանդիպող դեպքերը հիմնականում պաշտոնի, դիրքի չարաշահումն է: Բոլորս էլ գիտենք, այսօր քարտուղարուհու, գործավարի աշխատանքը հրաշալի վարձատրվող աշխատանք է, բայց էդ ինչ բրոնեժիլետ (թարգմ.՝ անվտանգության կիսաբաճկոն) *պիտի ունենաս, որ գնաս, ասես՝ ես եկել եմ աշխատելու»:*

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

Ինչպես սեռական բռնության նկատմամբ վերաբերմունքի պարագայում է, այստեղ ևս, քննարկելով սեռական բռնության պատճառները, կանանց մի մասի կարծիքով՝ հենց կանայք են «հրահրում այդ բռնությունը», «լավ չեն պահում իրենց», «ամուսնուն չեն լսում» և այլն:

«Այո՛: Աղջիկներն էլ են մեղավոր»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Կարա լինի, այո՛, կանայք են հաճախ մեղավոր»:

40-50 տարեկան կին, Եղեգնաձոր, Վայոց ձորի մարզ

Հետազոտության քանակական տվյալների համաձայն՝ մասնակիցների 31,8%-ը միանշանակ համաձայն է, որ աղջիկը/կինը կարող է տղամարդուն հրահրել սեռական բռնության: Այս դատողությանը միանշանակ համաձայն կանանց շարքում մեծամասնություն են 40-50 տարեկան կանայք՝ 15,9%-ը: Երկրորդ տեղում՝ 29-39 (12,1%), երրորդ տեղում 18-28 տարեկան կանայք են (3,8%): Այս դատողությանը ավելի շուտ համաձայն չէ հարցվողների 24,3%-ը, ընդհանրապես համաձայն չէ 22,4%-ը, և ավելի շուտ համաձայն է 21,5%-ը: Գծապատկեր 7-ում պատկերված տարիքային բաշխվածությունը թույլ է տալիս ասել, որ այս դատողությանը համաձայնողների շարքում գերակշռում են ավելի տարիքով կանայք (հիմնականում 40-50 տարեկան), իսկ չհամաձայնողների շարքում ավելի երիտասարդ կանայք են (18-28 տարեկան):

«Սեռական բռնությունը չունի արդարացում» դատողությանը համաձայն է հարցման մասնակիցների մեծ մասը՝ 83,7%-ը, իսկ ընդհանրապես համաձայն չէ 6,7%-ը (Գծապատկեր 7): Տարիքային բաշխվածությունը ցույց է տալիս, որ սեռական բռնության վերաբերյալ արդարության բացակայության դիրքորոշումը կանանց գրեթե բոլոր տարիքային խմբերում առկա է հավասարապես. 83,7%-ից 29,8%-ը՝ 18-28, 28,9%-ը՝ 40-50, և 25%-ը 29-29 տարեկան կանայք են:

Գծապատկեր 7. | *Դատողությունների գնահատումն ըստ տարիքային խմբերի (%):*



Այսպես՝ սեռական բռնության պատճառները բազմազան են, հիմնականում պայմանավորված են անհատական, համայնքային, հարաբերությային, ինչպես նաև հասարակական գործոններով: Այստեղ կարևոր է նշել, որ սեռական ոտնձգությունը և սեռական բռնությունը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությունը, սեռական բռնության և ոտնձգության դեպքերի լռեցվածությունը, ինչպես նաև սեռական բռնության ենթարկվածի զոհականացումը նպաստում են սեռական բռնության նկատմամբ հասարակության մեջ անպատժելիության խորացմանը: Ավելին՝ դրանք նաև այն խոչընդոտող գործոններն են, որոնք հնարավորություն չեն տալիս կանխարգելելու սեռական բռնությունն ու սեռական ոտնձգությունը, որն էլ առավել խոցելի է դարձնում մարդկանց սեռական բռնության և սեռական ոտնձգության տեսանկյունից:

Հետազոտության մասնակից կանայք նաև անդրադարձել են այն հարցին, թե ովքեր են իրենց կարծիքով բռնարարները: Համաձայն տարբեր երկրներում իրականացված հետազոտությունների տվյալների՝ սեռական բռնության դեպքերի մեծ մասում սեռական բռնության ենթարկված անձը ճանաչել է բռնարարին, և շատ քիչ դեպքերում է եղել, որ բռնարարը սեռական բռնության ենթարկված անձին անծանոթ մարդ լիներ[22]: Բռնարարները հիմնականում կիրառում են հոգեբանական բռնություն, էմոցիոնալ ճնշում, ինչպես նաև կարող են կիրառել ֆիզիկական ուժ սեռական բռնության ժամանակ: Նրանք նաև հաճախ սեռական ոտնձգություն, ընտանեկան, երեխաների և կենդանիների հանդեպ բռնություն գործադրողներ են: Բռնարարի դերում կարող են լինել բոլորը՝ անկախ տարիքից, գենդերից, սոցիալական պատկանելությունից, սակայն ամենից հաճախ բռնարարները չափահաս տղամարդիկ են[23]:

Բռնարար կարող են լինել բոլորը՝ ծանոթը, անծանոթը, ընկերը, ընկերոջ ընկերը, ամուսինը, զուգընկերը, ծնողը կամ այլ բարեկամ: Բռնարարները շատ հաճախ նաև այն մարդիկ են, որոնք սեռական բռնության ենթարկված անձի հետ ունեն որոշակի հարաբերություններ կամ վստահության մակարդակ, օրինակ՝ մասնագետներ են՝ բժիշկ, մարզիչ, ուսուցիչ, կրոնական առաջնորդ և այլք: Նրանք սովորաբար օգտագործում կամ չարաշահում են իրենց նկատմամբ զոհի վստահությունը նրա նկատմամբ սեռական բռնություն կամ սեռական ոտնձգություն գործադրելիս, ինչպես նաև օգտվում են այդ հարաբերություններից կամ վստահությունից՝ դեպքի մասին պատմելուց կամ որևէ մեկին օգնության դիմելուց զոհին հետ պահելու նպատակով[24]:

Հետազոտության մասնակից կանայք հիմնականում որպես բռնարար առանձնացնում են տղամարդկանց, հազվադեպ են խոսում նաև կանանց մասին՝ որպես բռնարարի, ինչը նաև հակադարձվում է այլ կանանց կողմից:

«Ոչ միայն տղամարդիկ, դեպքեր են գրանցվել, որ բուժքույր կինը բռնաբարել է իր հիվանդին, անգիտակից վիճակում»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Հաստատ կանայք չեն բռնաբարում»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Կանայք հաճախ նաև առանձնացնում են այն դեպքերը, երբ սեռական բռնություն գործադրած տղամարդիկ սեռական բռնության ենթարկված անձանց ծանոթ անձինք են՝ ընտանիքի անդամներ, հարևաններ, ծանոթներ, ընկերներ և այլն:

«Հորաքրոջ ամուսինը»:
«Սկեսրայրը հարսի հետ, շատ դեպքեր են լինում»:

18-28 տարեկան կանայք, Կապան, Սյունիքի մարզ

«Հարազատ ծնողն է հիմա իր երեխային բռնաբարում»:
«Քույր-եղբայրներն են իրար հետ հարաբերություն ունենում»:
«Պապիկը, հարսը սկեսրայրի հետ»:
«Ամուսինը»:

40-50 տարեկան կանայք, Արտաշատ, Արարատի մարզ

[22] RAINN (2023). Perpetrators of Sexual Violence: Statistics. Retrieved from: https://www.rainn.org/statistics/perpetrators-sexual-violence
[23] Sexual Assault and Abuse (2023). Sexual Assault Perpetrators. Retrieved from https://www.michigan.gov/voices4/about/perpetrators
[24] Նույն տեղում:

«Հարևան անձնավորություն՝ հայր ու տղա»:
«Ամուսին»:

40-50 տարեկան կանայք, Աշտարակ, Արագածոտնի մարզ

Համադրելով այս տեսակետը հետազոտության ընթացքում հավաքված քանակական տվյալների հետ՝ տեսնում ենք հետևյալ պատկերը: *Գծապատկեր 8-ում* ներկայացված են «Ամուսնական հարաբերություններում սեռական բռնությունն անհավանական է» և «Ամուսնական հարաբերություններում կանայք կարող են ենթարկվել սեռական բռնության իրենց ամուսինների կողմից» դատողությունների վերաբերյալ տարբեր տարիքային խմբերի կանանց գնահատականները: Այն մտքին, որ ամուսնական հարաբերություններում սեռական բռնությունն անհավանական է, հարցվողների հիմնական մասը՝ 45%-ը, ընդհանրապես համաձայն չէ: Այս 45%-ի զգալի մասը՝ 20,2%-ը, 18-28 տարեկան կանայք են, երկրորդ տեղում՝ 29-39 (15,2%), իսկ երրորդ տեղում 40-50 տարեկան կանայք են (10,1%): Հետազոտության մասնակիցների 24,2%-ն ավելի շուտ համաձայն չէ այն մտքին, որ ամուսնական հարաբերություններում սեռական բռնությունն անհավանական է: 24,2%-ից 8,1%-ը 18-28 տարեկան կանայք են: «Ամուսնական հարաբերություններում սեռական բռնությունն անհավանական է» դատողությանն ավելի շուտ համաձայն է հարցվողների 15,2%-ը, և միանշանակ համաձայն է հարցվողների 15,1%-ը: Այս վերջին երկու խմբերում գերակշռում են 40-50 տարեկան կանայք՝ կազմելով 9,1% յուրաքանչյուր խմբում:

«Ամուսնական հարաբերություններում կանայք կարող են ենթարկվել սեռական բռնության իրենց ամուսինների կողմից» դատողությանը միանշանակ համաձայն է հետազոտության մասնակիցների 40,6%-ը, իսկ կանանց տարիքային բաշխվածությունն այս պատասխանի դեպքում գրեթե հավասարաչափ է. 14,2%-ը՝ 18-28, 13,2%-ը՝ 29-39, և 13,2%-ը 40-50 տարեկան կանայք են: Այս դատողությանը ընդհանրապես համաձայն չէ 17,9%-ը, որտեղ 8,5%-ը՝ 18-28, 7,5%-ը՝ 40-50, և 1,9%-ը 29-39 տարեկան կանայք են *(Գծապատկեր 8)*:

Գծապատկեր 8. | *Դատողությունների գնահատումն ըստ տարիքային խմբերի (%):*



Շատ հաճախ կանայք նաև որպես բռնարարներ են առանձնացնում ավելի տարիքով տղամարդկանց, հատկապես երբ խոսքը անչափահասների նկատմամբ սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի մասին է, խոսում են դպրոցներում և այլ կրթադաստիարակչական հաստատություններում դեպքերի մասին, որտեղ բռնարար կարող է լինել ինչպես համադասարանցին, այնպես էլ, օրինակ, ֆիզկուլտուրայի ուսուցիչը, մարզիչը և այլն:

Սեռական բռնության նկատմամբ խոցելի խմբերը

Իսկ ովքե՞ր են առավել խոցելի սեռական ոտնձգության և սեռական բռնության տեսանկյունից: Ըստ հետազոտության մասնակից կանանց՝ ամենից հաճախ սեռական բռնության ենթարկվում են կանայք՝ անկախ տարիքից, ամուսնական կարգավիճակից, կրթությունից, ֆինանսական դրությունից, զբաղեցրած դիրքից և այլն:

«Ենթարկվում են բռնության բոլոր կանայք՝ և՛ կայացած, և՛ բավական կրթված կանայք: Իրանք չեն բարձրաձայնում և ինչ-որ ձևով կարողանում են թաքցնել, բայց իրենք շատ են: Այսինքն՝ սրա թիրախը բոլորս կարող ենք լինել և բոլորն են: Այնպես չէ, որ միայն այն մարդիկ են, ովքեր չեն աշխատում, տնից դուրս չեն գալիս, փողի պատճառով էլ չեն բաժանվում: Շատ դեպքերում էլ կարող է, օրինակ, պաշտոնի բերումով ունենան աշխատանք, որտեղ ինքը [կինը] ղեկավար պաշտոնի է կամ դա իր [կնոջ] կարիերային կարող է խանգարել, դրա համար, ինքը, ընդհակառակը, մնում է, որպեսզի կարիերան չվնասի, որպեսզի աղմուկ չընկնի, որպեսզի թերթում չհայտնվի, երեխային բան չասեն և այլն: Հազար ու մի բան կա: Սա, կարծում եմ, բնական բան է բոլոր հասարակությունների համար»:

29-39 տարեկան կին, Երևան

«Ինձ թվում է՝ սեռական բռնությունից ոչ ոք ապահովագրված չէ, ու կապ չունի՝ այդ մարդն իր իրավունքները գիտի, քանի տարեկան է, ինչ մաշկի գույն ունի: Ոչ մեկս էլ ապահովագրված չենք, ու ամեն պահ կարող է ինչ-որ մեկի խելառ ուղեղին ինչ-որ մի բան փչի, ու թեկուզ փողոցում ինքն իրեն «չմարդու» պես պահի»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Ավելին, հետազոտության մասնակից կանանց կարծիքով, կան առավել խոցելի կանայք, որոնք, հնարավոր է, ավելի հաճախ դառնան սեռական բռնության թիրախ: Վերջիններիս առավել խոցելիությունը պայմանավորված է որոշ այլ հատկանիշներով՝ հաշմանդամություն, հոգեկան առողջության խնդիրներ, այլ սեռական կողմնորոշում ունենալը, դեռահաս լինելը, ամուսնալուծված լինելը և այլն:

«Երևի բոլորը, բայց ավելի շատ խոցելի են հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները»:

29-39 տարեկան կին, Երևան

«Դեռահասների մոտ՝ դեռահաս աղջիկների նկատմամբ [է տարածված սեռական բռնությունը] 16-17 տարեկան աղջիկների հանդեպ»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

«Գիտեմ ոչ թե մեկին, այլ մի քանիսին, որ զուտ ուզել են իրենց կյանքը բաժանվելուց հետո դասավորել, անբարոյականի պիտակը մնացել է, ու շարունակվում է բռնությունը նրանց նկատմամբ»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Ես նաև ուզում էի ասեի, որ սեռական փոքրամասնությունների դեպքում է շատ հանդիպել՝ դպրոցից սկսած մինչև գյուղի ներսում»:

18-28 տարեկան կին, Երևան

Ամբողջ աշխարհում սեռական բռնության և սեռական ոտնձգության տեսանկյունից առավել խոցելի են հենց փոքրամասնություն կազմող խմբերի և լուսանցքայնացված՝ մարգինալացված կանայք, բոլոր այն կանայք, որոնք բախվում են պաշտպանություն կամ անհրաժեշտ ծառայություններ ստանալու խնդրին: Բոլոր այն գործոնները, որոնք կանանց դարձնում են առավել մարգինալ, առավել խոցելի են դարձնում նաև սեռական բռնության տեսանկյունից, ինչը կարող է այս պարագայում լինել ազգային պատկանելությունը, հաշմանդամությունը, ոչ հետերոսեքսուալ սեռական կողմնորոշումը, կրոնական պատկանելությունը և այլն, քանի որ, ըստ տարբեր հասարակություններում տարածված կարծրատիպերի և «բռնաբարության առասպելների», այս կանայք ըմբռնվում են որպես *«սեռական առումով հասանելի և պաշտպանության ոչ արժանի»*[25]: Այսպես, ըստ տարբեր վիճակագրական տվյալների, սեռական բռնության նկատմամբ հատկապես խոցելի են սեռական ծառայություններ մատուցող կանայք, հատկապես այն երկրներում, որտեղ սեռական ծառայությունների մատուցումը անօրինական է կամ ենթադրում է քրեական կամ վարչական հետապնդում[26] (Մարգարյան, 2015): Ավելին, ըստ մեկ այլ տարածված «բռնաբարության առասպելի», սեռական ծառայություններ մատուցող կանայք հենց այն խմբում են, որոնց նկատմամբ «կարելի է» իրականացնել սեռական բռնություն

«Այո, նման կանանց նկատմամբ շատ է բռնությունը: Այստեղ խոսքն ավելի շատ մարմնավաճառներին է վերաբերում, այն կանանց, ովքեր սիրում են այդպիսի կյանքով ապրել: Իրենց նկատմամբ է ավելի շատ բռնությունը, այսինքն՝ զումարը կտան, ինչ ուզեն, կարող են անել: Այսինքն՝ իրենք իրենց իրավունքը չեն կարող պաշտպանել, որովհետև իրենք չեն ապրում այն կյանքով, որ պետք է ապրեին»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Հետազոտության մասնակից կանայք բարձրաձայնում են նաև այնպիսի դեպքերի մասին, որտեղ տղամարդը ևս կարող է ենթարկվել սեռական բռնության, ընդ որում՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց կողմից: Սակայն եթե ամոթը, հասարակության մեջ սեռական բռնության զոհի նկատմամբ տարածված խարանն ու խտրականությունը հետ են պահում կանանց դրա մասին բարձրաձայնելուց կամ օգնության դիմելուց, տղամարդկանց պարագայում դա շատ ավելի բարդանում է:

«Գիտեք, տղամարդիկ էլ են ենթարկվում ու շատ ավելի շատ: Ուղղակի իրենք չեն ասում այդ մասին: Մենք խոսում ենք, ասում ենք: Եթե հիմա այստեղ նստած լինեին այսքան տղամարդիկ, ու իրենց հարց տրվեր, եթե մեզնից 6-7-ից 5-ը խոսում են, այնտեղ 1-ը կամ 2-ը գուցե խոսեին, գուցե՝ ոչ, որովհետև սեռային տարբերություն կա, չեն ասի այդ մասին: Բայց այսքան երեխաների դեպքերը որ կան, հենց այս վերջին՝ տղաների դեպքերը, խոսում է այն մասին, որ տղամարդիկ ավելի շատ են ենթարկվում, քան կանայք»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

[25]The Advocates of Human Rights (2006). Sexual Assault and Vulnerable Populations. Retrieved from: https://www.stopvaw.org/sexual_assault_and_vulnerable_populations

[26]Սեռական ծառայություններ մատուցող կանայք այն երկրներում, որտեղ սեռական ծառայությունների տրամադրումը անօրինական է, հատկապես խոցելի են իրավապահ համակարգում, և շատ հաճախ իրենց հետ կատարված բռնության դեպքերը, հատկապես սեռական բռնության, չեն հայտնում ոստիկանությանը, քանի որ բռնությունը շարունակվում է նաև իրավապահ համակարգում, քանի որ նրանց չեն հավատա, ինչպես նաև հարկադրաբար կարող են վերջիններիս ուղարկել սեռավարակների մասին հետազոտության՝ այդ ընթացքում խախտելով սեռական ծառայություններ տրամադրողների բազմաթիվ իրավունքներ: Մարգարյան, Ն. (2015). Սեռական ծառայություններ տրամադրող անձանց իրավունքների խախտումը Հայաստանում:

Հետազոտության քանակական տվյալները սեռական բռնության նկատմամբ խոցելիության մասին տալիս են հետևյալ պատկերը. հետազոտության մասնակիցների կարծիքով՝ առավել հաճախ սեռական բռնության ենթարկվում են անչափահաս աղջիկներն ու տղաները (42,1%), ամուսնալուծված կանայք (18,1%), չամուսնացած/երիտասարդ կանայք (18,1%), ամուսնացած կանայք (10,2%): Հարցվողների 5,5%-ը նշել է, որ բոլորն էլ կարող են ենթարկվել սեռական բռնության (Գծապատկեր 9): Հարցվողների 42,1%-ից, որոնք կարծում են, որ սեռական բռնության հաճախ ենթարկվում են անչափահասները, 18%-ը՝ 40-50, 12,6%-ը՝ 29-29, և 11,5%-ը 18-28 տարեկան կանայք են: Այն հարցվողների շրջանում, որոնք կարծում են, որ սեռական բռնության ենթարկվում են հիմնականում չամուսնացած/երիտասարդ կանայք, զգալի մաս են 18-28 տարեկան կանայք՝ 18.1%-ից 10,8%-ը: Այն կանանց շրջանում, որոնք կարծում են, որ սեռական բռնության առավել հաճախ ենթարկվում են ամուսնալուծված կանայք, մեծ մաս են 40-50 տարեկան կանայք՝ 18,1%-ից 9,6%-ը:

Գծապատկեր 9. *«Ովքե՞ր են, Ձեր կարծիքով, առավել հաճախ ենթարկվում սեռական բռնության» հարցի պատասխանների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի (%):*



«Ովքե՞ր են, Ձեր կարծիքով, առավել հաճախ ենթարկվում սեռական բռնության» հարցի համար տրվել է մինչև երկու պատասխան նշելու հնարավորություն, ինչի արդյունքում պատասխանների ընդհանուր հանրագումարը գերազանցում է հետազոտության մասնակիցների քանակը. վերջիններիս թիվը 108 է, իսկ այս հարցի պատասխանների թիվը՝ 166: Այս հարցի պատասխաններից 84-ը տվել են ամուսնացած, 71-ը՝ չամուսնացած, 6-ը՝ ամուսնալուծված, և 5-ը՝ այրի կանայք (Գծապատկեր 10): Ամուսնացած կանանց նշած 84 պատասխանից 37-ը՝ «անչափահաս աղջիկներ/տղաներ», 21-ը՝ «ամուսնալուծված կանայք», 8-ը՝ «չամուսնացած/երիտասարդ կանայք», 8-ը՝ «ամուսնացած կանայք», և 5-ը՝ «բոլորն էլ կարող են» տարբերակներն են: 71 պատասխան տվել են չամուսնացած կանայք, որոնցից 29-ը «անչափահաս աղջիկներ/տղաներ», 20-ը՝ «չամուսնացած/երիտասարդ կանայք», 8-ը՝ «ամուսնացած կանայք», 6-ը՝ «ամուսնալուծված կանայք», և 4–ը «բոլորն էլ կարող են» տարբերակներն են:

Գծապատկեր 10. *«Ովքե՞ր են, Ձեր կարծիքով, առավել հաճախ ենթարկվում սեռական բռնության» հարցի պատասխանների բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի (թվերով):*



Սեռական բռնության շուրջ միֆերն ու կանանց վերաբերմունքը

Կանանց նկատմամբ բռնությունը, սեռական բռնությունը և սեռական ոտնձգությունը տարածված հիմնախնդիրներ են ամբողջ աշխարհում: Այս թեմայի շուրջ հետազոտությունները, ոլորտում աշխատող փորձագետները արձանագրում են, որ սեռական բռնության և սեռական ոտնձգության ենթարկված անձինք կրում են լուրջ կարճաժամկետ և երկարաժամկետ հոգեբանական վնասներ՝ որպես սեռական բռնության և սեռական ոտնձգության անմիջական հետևանք, որին զուգահեռ կարող են նաև պիտակավորվել այլ անձանց կողմից *(«թույլ է տվել», «բավականաչափ չի պայքարել», «հաստատակամ չէ չի ասել», «դուր է եկել»* և այլն):

«Բռնաբարության առասպելների» (rape myths) հայեցակարգը, որն առաջին անգամ 1970-ականներին ներկայացրել են սոցիոլոգներ Ջ. Շվենդինգերը և Հ. Շվենդինգերը, սահմանվում է որպես մշակութային համոզմունքների մի համալիր, որը ծառայում է շարունակելու տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ սեռական ագրեսիան՝ մեղադրելով զոհին և արդարացնելով բռնարարին (Շվենդինգեր, Շվենդինգեր, 1974): «Բռնաբարության առասպելների» օրինակ է, որ կանայք սովորաբար ստում են, թե սեռական բռնության կամ սեռական ոտնձգության են ենթարկվել, որովհետև սեռական բռնության կարող են ենթարկվել «հատուկ տեսակի կանայք»: Այլ տարածված «բռնաբարության առասպելներից» են «շատ կանայք իրենց հոգու խորքում երազում են բռնաբարվելու մասին», «առողջ կինը կարող է հաջողությամբ կանգնեցնել և հակազդեցություն տալ բռնարարին, եթե իրապես ուզում է բռնության չենթարկվել», «բռնաբարության դեպքերի մեծ մասում զոհերի մեծ մասը վատ համբավ ունի», «միջին խավի, ապահովված տղամարդիկ երբեք սեռական ոտնձգություն և սեռական բռնություն չեն գործադրում», «եթե կինը ֆլիրտ է անում, ապա իր մեղավորությունն է, որ չի դադարեցրել այն ժամանակ, երբ զուգընկերն արդեն պարտադրել է նրան ունենալ սեռական հարաբերություն» և այլն (Բուրտ, 1980): Կարող ենք նկատել նաև, որ հաճախ սեռական բռնության և ոտնձգության ենթարկված անձանց են մեղադրում իրենց հետ կատարվածի համար, ինչն էլ ավելի է սրում հոգեբանական խնդիրները և բռնության ենթարկված անձի մեջ առաջացնում ինքնամեղադրանք և ինքնախարազանում, որի հետևանքը որոշ դեպքերում կարող են լինել ինքնասպանությունը կամ ինքնասպանության փորձը:

Սեռական բռնության և սեռական ոտնձգության շուրջ առկա առասպելներն ու միֆերը տարածված են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում[27]: Հայաստանը ևս բացառություն չէ այս հարցում: Հետազոտության մասնակից կանանց շրջանում ևս տարածված են վերոգրյալ առասպելներն ու միֆերը սեռական բռնության, սեռական բռնության ենթարկված անձի և բռնարարների վերաբերյալ, ինչն էլ հաճախ պայմանավորում է վերջիններիս վերաբերմունքը երևույթին: Այսպես, հետազոտության մասնակից կանանց մի մասի կարծիքով, սեռական բռնությունը կարելի է «հեշտությամբ կանխարգելել», և եթե կինը «կանխարգելիչ գործառույթներ» չի ձեռնարկել, ապա մեղավոր է իր հանդեպ կատարված բռնության համար:

> *«Բայց ինչքան էլ նա հարձակում գործի, կինը, վերջիվերջո, կարող է պաշտպանվել»:*
>
> **29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ**

[27]Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ «բռնաբարության առասպելներն» առավել ընդունված են տղամարդկանց, քան կանանց կողմից: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ կանայք ավելի շատ են ուշադրություն դարձնում և տեղ տալիս համաձայնությանը, քան տղամարդիկ: Այլ հետազոտություններ էլ ցույց են տալիս, որ կանանց շրջանում էլ են շատ տարածված «բռնաբարության առասպելները»: Տե՛ս Shaver KC (1970) Defensive attribution: Effects of severity and relevance on the responsibility assigned for an accident. Journal of Personality and Social Psychology 14: 101-113.

«Կինը կարող է կանգնեցնել նման տղամարդուն: Հեշտությամբ կարող է կանգնեցնել, ինչ վիճակում էլ որ լինի տղամարդը: Ես գիտեմ: Նման փորձ ունեմ»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

«Տղամարդուն կարող ես այնպես տեղը դնել, որ ինքը երկրորդ անգամ [նույնը չանի]... Մեր թուլությունն էլ է, մենք միամիտ կողմեր ունենք, թույլ ենք տալիս՝ չմտածելով, թե մեջն ինչ կա, ու այդ փոքր տեղից, որ մատդ տալիս ես, արդեն ամբողջ մարմինդ քաշում է ինքը: Այ այդքան միամիտ ենք»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

Այստեղ հետաքրքիր է նկատել, որ հետազոտության մասնակից կանանց մեծ մասը պատմում և խոսում է այն մասին, որ գրեթե բոլոր կանայք կարող են սեռական բռնության և սեռական ոտնձգության ենթարկվել, սակայն մյուս կողմից շարունակում են մեղադրել սեռական բռնության ենթարկված կնոջը իր հետ կատարված սեռական ոտնձգության և սեռական բռնության համար և լռում են իրենց հետ կատարված սեռական ոտնձգության և բռնության դեպքերի մասին՝ վախենալով նման արձագանքից, որում դարձյալ իրենց կմեղադրեն իրենց հետ կատարվածի համար: Այստեղ հետազոտության մասնակից կանանց պատկերացումները հաճախ երկբևեռ են. նրանց մի մասը պնդում է, որ իրենց կյանքում առհասարակ չեն ենթարկվել սահմանափակումների, բռնության, սեռական բռնության և սեռական ոտնձգության, և եթե կան կանայք, որոնք նման փորձառություն են ունեցել, ապա նրանք ունեն նաև իրենց մեղավորությունը կատարվածի առնչությամբ: Այս տեսակետը նաև քննադատության էր արժանանում այլ կանանց կողմից, որոնք պնդում էին, որ բռնությունը որևէ կերպ արդարացված չէ, սեռական բռնության ենթարկված անձինք պաշտպանության կարիք ունեն, և որ մեղավորը բռնարարն է:

«...[Սեռական բռնության ենթարկված կանայք] վախենում են մեղադրվելուց, որովհետև լսելուց հետո առաջին բանը, որ տեղի է ունենում, նրանց մեղադրելն է. դու ես մեղավոր, դու ես թույլ տվել... Չեն լսում մարդուն մինչև վերջ կամ լսելուց հետո էլի ասում են՝ դու ես մեղավոր»:

29-39 տարեկան կին, Երևան

«Որ բարձրաձայնես, կասեն՝ այս ինչ այլասերված մտքեր են»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Մի անգամ հիվանդանոցում էի առողջական խնդիրներով և երեկոյան մնալով զրուցեցինք սենյակում գտնվողների հետ: Վերջում խոսակցությունը հասավ սեռական բռնություններին, ու սկսեցին... [կանանց մեղադրել]: Կանայք, հենց կանայք են քննադատողը, դա էլ է վատ: Կանայք սկսեցին քննադատել՝ «յա, ուրեմն թույլ է տվել», չգիտեմ ինչ...»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Մեր հասարակության աբսուրդն այն է, որ աղջիկն է աղջկան քննադատում, այն պարագայում, որ ինքն էլ կարող է այդ վիճակում գտնվել»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Սեռական բռնության շուրջ տարածված այլ կարծրատիպերից է նաև այն, որ կան *«հատուկ կանայք»,* որոնք ենթարկվում են բռնության, և հետևաբար նրանց նկատմամբ բռնությունը կարելի է ինչ-որ կերպ արդարացնել: Հետազոտության մասնակիցներն իրենց շրջապատում սեռական բռնության դեպքերի մասին խոսելիս սեռական բռնության ենթարկված անձի նկատմամբ սեռական բռնությունն արդարացնող հանրային տարածված մեկնաբանությունները պայմանավորում էին հիմնականում սեռական բռնության ենթարկված անձի արտաքին տեսքով՝ հագուստով (*«կարճ էր հագել», «բաց էր հագել», «քսված էր»),* ամուսնական կարգավիճակով (հիմնականում ամուսնալուծված կանայք, որոնք ցանկանում էին իրենց «*կյանքը նորից դասավորել*»), հոգեկան առողջության խնդիրներով ու հաշմանդամություն ունենալու հիմքով պայմանավորված կամ ոչ հետերոսեքսուալ կողմնորոշում ունենալով և այլն:

*«Այո՛, ոչ մի բան: Լավ ես արել, ախպեր (*խմբ.՝ նկատի ունի՝ այսպես կարձագանքեն),*շատ լավ ես արել, բա կարճ էր հագել, բա տենց էլ պետք է անեիր, դու դրա քսվածը տեսե՞լ ես»:*

18-28 տարեկան կին, Երևան

«17 տարեկան աղջկա դեպքը, դրան շատ բլոգերներ անդրադարձան, ու անընդհատ նշում էին, որ ժողովուրդ, բռնաբարությունն արդարացում չունի: Նորից մտնում, մեկնաբանություններում գրում էին՝ դուք իր հագածը տեսե՞լ եք, ի՞նչ գործ ուներ ակումբում, ինչի՞ է թմրանյութ օգտագործել, լավ է եղել, ինչ եղել է, հասնում է»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Հաճախ հանդիպող միֆերից է նաև այն, որ մարդիկ մտածում են՝ սեռական բռնությունը և սեռական ոտնձգությունը բնորոշ են որոշ՝ հատուկ հասարակությունների, իսկ որոշ հասարակություններում կամ երկրներում նման դեպքեր տեղի չեն ունենում: Հետազոտության մասնակից կանանց մեկ այլ մասի կարծիքով էլ սեռական բռնությունը և սեռական ոտնձգությունն առավել տարածված են ավելի ավանդական, փակ հասարակություններում, որտեղ ճնշված է մարդկանց սեռականությունը, և սեռական կյանքի մասին կան բազմաթիվ կարծրատիպեր:

Ընդհանուր առմամբ սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերը լռեցված են մեր հասարակության մեջ, իսկ բարձրաձայնելու դեպքում արդեն գործի են դրվում «բռնաբարության առասպելներն» ու դավադրության տեսությունները: Այստեղ կարող ենք հիշել, երբ 2019 թվականին հանրային մեծ արձագանք ստացավ #բռնության_ձայնը արշավը[28], և Հայաստանում տարածված հակագենդերային խմբերը շատ արագ սկսեցին կասկածի տակ դնել այդ պատմությունների իրական լինելը, բռնության ենթարկված կանանց փորձառությունը, հերքեցին կանանց հանդեպ Հայաստանում բռնության տարբեր դրսևորումների մասին վկայող դեպքերը՝ չնայած որոշ դեպքերում դատարանի՝ արդեն օրինական ուժի մեջ մտած որոշումներին, ինչպես նաև նվազեցնել դրանց չափը, դրանք ներկայացնել այս կամ այն դավադրության տեսության շրջանակում:

Սեռական բռնությանն առնչվող ընդունված տարբեր դատողությունների անդրադարձել ենք նաև հետազոտության քանակական մասում: Կանանց տրվել են զույգ դատողություններ, որոնք իրենք պետք է գնահատեին 1-4 միավորանոց սանդղակով, որտեղ 1–ն ունի «ընդհանրապես համաձայն չեմ», իսկ 4-ը՝ «միանշանակ համաձայն եմ» տարբերակները: *Գծապատկեր 11-ում* ներկայացված են «Հայաստանում աղջիկները և կանայք չեն ենթարկվում սեռական բռնության» և «Հայաստանում աղջիկները և կանայք սովորաբար լռում են իրենց հետ պա-

[28]2019 թվականի հունիսի 29ին «Հետք» հետաքննական լրագրությանը կայքը հրապարակեց Հայաստանում սեռական բռնության ենթարկված չեխ կնոջ մասին մի նյութ: Հանրային ռադիոյի լրագրող Լյուսի Քոչարյանը վերահրապարակեց նյութը սոցիալական մեդիայի իր էջում, որից հետո շարունակեց հրապարակել իրեն ուղղված անանուն նամակները, որտեղ մարդիկ պատմում էին իրենց հետ կատարված սեռական բռնության դեպքերի մասին: Այդպես էլ ծնվեց #բռնության_ձայնը առցանց արշավը (Ժամակոչյան՝ խմբ., Խալաթյան, Մանուկյան, Մարգարյան, 2020):

տահած սեռական բռնության դեպքերի մասին» զույգ դատողությունների գնահատումն ըստ տարիքային խմբերի: Հարցվողների մեծամասնությունը՝ 61,9%-ը, ընդհանրապես համաձայն չէ այն դատողությանը, որ Հայաստանում կանայք և աղջիկները չեն ենթարկվում սեռական բռնության: Այս 61,9%-ից 24,8%–ը՝ 18-28, 19%-ը՝ 29-39, և 18,1%-ը 40-50 տարեկան կանայք են: Կանանց 50,5%-ը միանշանակ համաձայն է, որ Հայաստանում կանայք լռում են իրենց հետ պատահած սեռական բռնության դեպքերի մասին: Այս պատասխանը նշած կանանց 21%-ը 40-50, 17,8%-ը 18-28, իսկ 11,2%-ը 29-39 տարեկան կանայք են:

Գծապատկեր 11. | *Դատողությունների գնահատումն ըստ տարիքային խմբերի (%):*



Սեռական բռնության փորձառությունը

Սեռական բռնության մասին, հատկապես սեռական բռնության ենթարկվելու սեփական փորձառության մասին դժվար է խոսելը: Նույնիսկ անանուն պատմված սեռական բռնության դեպքերի պատմությունները հանդիպում են հանրության հակազդեցությանը, հարցականի տակ է դրվում դեպքի եղելությունը, բռնության զոհը կրկին զոհականացվում է, հազարավոր պայմաններ և պատճառներ են բերվում բռնարարի արարքն արդարացնելու համար և այլն (Խալաթյան, Մանուսյան, Մարգարյան, 2020):

Մեր հետազոտության ընթացքում, հասկանալով, որ սեռական բռնության սեփական փորձառության մասին խոսելը կարող է դժվար լինել, տվել ենք հետևյալ լուծումները: Նախ խնդրել ենք, որ մարդիկ պատմեն իրենց շրջապատում, իրենց ծանոթ մարդկանց շրջանում սեռական բռնության դեպքերի մասին այն կանխավարկածով, որ հնարավոր է՝ շրջապատի սեռական բռնության դեպքերի մեջ մարդիկ պատմեն նաև իրենց հետ կատարվածը՝ այն ներկայացնելով երրորդ դեմքով: Մյուս կողմից էլ մենք՝ որպես հետազոտողներ, որոնք ապրում են Հայաստանում և հայաստանյան հասարակության մաս են, ներկայացրել ենք սեռական բռնության և սեռական ոտնձգության մեր փորձառությունը՝ դրանով փորձելով ստեղծել ապահով և անխտրական միջավայր կանանց համար, ինչպես նաև ցույց տալ, որ մենք ևս անմասն չենք, ենթարկվել ենք սեռական բռնության և սեռական ոտնձգության, իսկ դա բնորոշ չէ ինչ-որ կոնկրետ մարդկանց, ցանկացած կին Հայաստանում կարող է սեռական բռնության և սեռական ոտնձգության թիրախ լինել: Արդյունքում ֆոկուսխմբային բոլոր քննարկումների ժամանակ կանայք պատմել են իրենց հետ կամ իրենց շրջապատում կատարված սեռական բռնության դեպքերի մասին: Եղել են դեպքեր, երբ կանայք ներկայացրել են իրենց փորձառությունը երրորդ դեմքով՝ հետագայում նշելով, որ այդ դեպքը հենց իրենց հետ է եղել:

Ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ հետազոտությանը մասնակցած մեծահասակ կանայք՝ հիմնականում 29-39, 40-50 տարիքային խմբերի, ավելի բաց և ավելի հաճախ են խոսում սեռական բռնության սեփական փորձառության մասին, ինչը, սակայն, ունի իր համայնքային արտահայտումները. ավելի փակ, պահպանողական, փոքր համայնքներում, որտեղ մարդիկ իրար ավելի շատ են ճանաչում, դժվար է սեռական բռնության սեփական փորձառության մասին խոսելը: Այստեղ կանայք ավելի շատ հերքում են, որ իրենց հետ սեռական ոտնձգության և սեռական բռնության դեպք է եղել, և ավելի շատ խոսում են այնպիսի դեպքերի մասին, որոնք հանրությանն առավել ծանոթ են, կամ որոնք առավել տարածված են համայնքային խոսակցություններում: Սակայն որոշ դեպքերում ավելի բարձր տարիքային խմբի կանայք, երբ ստեղծվում է ապահով միջավայր, ևս արտահայտվում, պատմում են իրենց հետ կատարված դեպքերի, իրենց ընտանիքներում կատարվող սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի մասին:

Ստորև ամփոփված են սեռական բռնության և սեռական ոտնձգության այն դեպքերը, որոնք հետազոտության մասնակից կանայք պատմել են իրենց փորձառությունից, կամ դրանք կատարվել են նրանց շրջապատում[29]:

[29] Հետազոտության այս բաժնում չենք ներառել այն դեպքերը, որոնք առավել հանրային են, լուսաբանվել են, և որոնց մասին մարդիկ տեղեկացել են մեդիայից:

«Ես էլ եմ առնչվել: Ուրեմն ավտոբուսում էի (խմբ.՝ երկար դադար): *Դրանից առաջ նույն մարդուն տեսել եմ երևի 3 տարի առաջ ավտոբուսի մեջ, մի քիչ զզվելի բան եմ պատմում իհարկե. ես ոնց որ կանգնած էի, ինքը նստած էր իմ դիմաց, ու ես հանկարծ փռշտացի, ինքն ասեց՝ առողջություն, ես ժպտացի, ասացի՝ մերսի: Հաճելի էր այդպես: Ու հետո, իրա ձեռքին թերթ կար, ու ինքը նայում էր բոլորին: Հանկարծ նայեցի ներքև ու տեսա, որ ինքը ուղղակի ձեռնաշարժությամբ է զբաղվում ու դիտմամբ նայում էր ինձ՝ կարծես ինձ համար էր անում: Ես թեքվեցի, գնացի այն կողմ... Ու 3 տարի հետո նորից ավտոբուսի մեջ այդ նույն մարդուն [տեսա]: Կանգնած էի, ու ինքն իմ դիմաց էր կանգնած ու քսմսվում էր՝ ահավոր ձևի: Սկզբում ինձ թվում էր, որ երևի ինձ է թվում՝ ավտոբուսը այնպես է շարժվում: Բայց համարյա ամբողջ ճանապարհին այդպես էր լինում»:*

18-28 տարեկան կին, Երևան

«Երթուղայիններով մեջ է շատ լինում: Ես 9 տարեկան էի, սեպտեմբերի մեկն էր, юбочка-ով (թարգմ.՝ կիսաշրջազգեստ) *էի՝ ոչ կարճ, ծնկներիցս ներքև, հետևից փոքրիկ прорех-ով* (թարգմ.՝ ճեղքվածք): *Ես հիմա ավելի կարճ կարամ հագնեմ: Ես կանգնած եմ ու զգում եմ, որ ինչ-որ մեկը ոտքով էդ прорех-ը բարձրացնում է: Էդ ժամանակ ես ուրիշ բնավորություն ունեի՝ վախեցած, խեղոք, չխոսող: Ես հետ եմ նայում, ոչ մի բան չեմ տեսնում, որովհետև ահավոր խցկված էր: Մի երկու անգամից հետո շրջվեցի ու սկսեցի իրենց նայել, այդպես գնալ, բայց առանց բռնվելու չէի կարող կանգնել, էլի հետ շրջվեցի, ու իրենք էլի ոտքը բերեցին: Կողքս մի պապիկ կար, ոտքը տարավ այն կողմ ու իրենց վրա գոռաց»:*

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Ինձ էլ են շոշափել, բայց ես փոքր էի, մտածում էի՝ գումար են ուզում: Մեջքիցս գրկեց ու ձեռքը բերեց առաջ, մտավ գրպանս: Դե ես էլ շուստրի էի, երեք ռուբլի ունեի, վերցրել էի ձեռքիս մեջ: Էն տեսակ էր նայում աչքերիս մեջ, որ ես քարացել էի: Այն ժամանակ ինձ թվաց՝ գող է: Բայց հիմա եմ հասկանում, որ իր շարժումները գողություն չէր»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Ես շատ տարիներ առաջ, երբ երիտասարդ էի, չնայած հիմա էլ եմ երիտասարդ, երթուղային նստեցի, բավականին պիկ էր, երեկոյան ժամի տուն էի գալիս: Շատ որուսկոեսի (թարգմ.՝ պարկեշտ) *հագնված էի, այսպես ասած՝ մեր հասարակության պատկերացումներով: Ու երթուղայինի մեջ խցկված կանգնած եմ, զգում եմ՝ մեկը ոտքս ա շոյում, էնքան լիքն ա, որ մտածում եմ՝ կարո՞ղ է ինձ է թվում: Ու ես չվախեցա, 18-19 տարեկան աղջիկ էի, մեկ էլ նայեմ՝ մի տարիքով մարդ էր, տղա էր. մութ էր, չէի տեսնում, ոտքս կոնկրետ շոյում էր, ու նենց շուխուռ մի հատ արեցի: Չամաչեցի, որ կարող ա մտածեն՝ ես եմ թույլ տվել կամ չգիտեմ ինչ: Այն օրը զգեցի՝ էդ երեկոյան ժամին հանեցին դուրս այդ տղուն, այնտեղ էլի երիտասարդ տղաներ կային, ահագին կռիվ, ծեծ, ջարդ եղավ, բայց հանեցին դուրս այդ տղային: Դա միակ դեպքն է եղել, բայց բարձրաձայնել եմ»:*

29-39 տարեկան կին, Երևան

«Վերջերս դեպք էր եղել, այստեղ (խմբ.՝ նկատի ունի Կապանում)՝ *6 համարում: Ինձ երեխաներն են պատմել, որոնք, ի դեպ, 10-րդ, 9-րդ դասարանի երեխաներ էին: Ասում է՝ շատ-շատ էինք, մի մարդ է եղել, որ մի տղայի, ում մազերը շատ երկար են եղել, ակնհայտ ձեռք է զցել: Այդ տղան ֆռացել ասել է՝ ծոծ* (թարգմ.՝ պարոն), *տղա եմ: Այդ մարդը մտածել է, թե աղջիկ է: Հիմա ծիծաղում ենք, բայց դա շատ տխուր է, որ նախ էտ տղան՝ ծոծ տղա եմ [այսինքն, որ երկար մազերով է, անպայման աղջիկ է], հետո էլ երեխա է, դա ահավորություն է: Այսինքն, եթե աղջիկ լիներ, իրա [ձեռք զցող մարդու] համար նորմալ էր դա»:*

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Մի դեպք էլ իմ հետ է եղել: Ես ավելի փոքր էի, շատ մարդ չկար տրանսպորտի մեջ, ու մեծահասակ մարդ էր, ես պատուհանի կողմն էի նստած, ինքը իրա տոպրակով էր: Իբր տոպրակն էր բռնել, բայց էլի փորձում էր ոտքս շոյել: Համարձակություն չունեցա այդ պահին բարձրաձայնելու, որովհետև վարորդն էր, դիմացը՝ ինչ-որ մեկը: Երևի թե դրանից էր օգտվել: Բայց ես լուռ վեր կացա ու գնացի, վարորդի հետևը նստեցի, բայց դրանից հետո իմ մոտ ֆոբիա է առաջացել. տրանսպորտի մեջ, եթե ինձ ուղղակի կանգնած, նորմալ աղեկվատ տղամարդն ուսով կպնում է, ես ուղղակի իջնում եմ տրանսպորտից»:

29-39 տարեկան կին, Երևան

«Իմ ընկերուհին աշխատանքի էր գնում, առավոտ ժամը 7-8-ին դուրս է գալիս տանից, ավտոբուսից ուշանում է, չի հասցնում, տեսնում է, որ տաքսիանման մեքենա է կանգնած լինում: Մի տարիքով մարդ իրեն ասում է՝ ես քեզ կիջեցնեմ քաղաք: Դե ընկերուհիս է պատմում, չեմ կարող ասել՝ ճիշտ է, թե սխալ է: Իրեն ասում է՝ կիջեցնեմ քաղաք, ընկերուհիս իմացել է՝ տաքսի է, դե ինչ իմանա, որ….(խմբ.՝ տաքսի չէ): *Ընկերուհուս բերում է ոչ թե Կապան, այլ ուրիշ տեղ է տանում, վատ մտքերով ու ճանապարհին ուզում է նեղացնի* (խմբ.՝ սեռական բռնություն գործադրի)*: Մի կերպ այդ աղջիկը փախնում է այդ մարդուց: Ինքն է պատմել, չեմ կարող ասել՝ ճիշտ է, թե ոչ»:*

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Ուրեմն մի 10 տարի առաջ էր, հորաքույրս էր մահացել, մենք տրանսպորտով Նոր Հաճն էինք գնում: Տեսա որ դիմացս նստած էր մի տղամարդ՝ 25-30 տարեկան, գրկել էր մի 8 տարեկան աղջնակի ու ոնց էր այդ երեխային շոյում ու սիրում: Երեխան գրկից փախնում էր, ինքը քաշքշում էր այդ երեխային: Զեռքս зонтик (թարգմ.՝ անձրևանոց) *կար, ես զգում էի, որ ինքն ուրիշ բաներ էր անում, երեխան շատ էր նեղվում, ասացի՝ հիմա որ խփեմ կամ բան ասեմ, պետք է ասի [մեղադրի]... որովհետև ասում էր «քեռի, թող, քեռի, չեմ ուզում, մի՛ արա, քեռի», ու այդպես ամբողջ ճանապարհը՝ 45 րոպե, 1 ժամ գնացել եմ, ու մեկը չկար գոնե, որ ինձանից բացի [որ ցանկանար բարձրաձայնել]... մի քանիսով որ լինեինք, ինքը կարող է նեղվեր, չաներ, իսկ ինձ կարող է ասեր՝ քեզ է թվացել, դու ով ես, որ խառնվում ես: Ու ցավ է, էլի, մեր իրականության մեջ, եթե ինքն այդքան մարդու դիմաց է անում, բա փակ տարածքում այդ երեխային ինչ կաներ: Ու ես հասկացա մի բան, որ քո երեխային չպետք է ոչ մեկին վստահես»:*

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Սեռական բռնության դեպքեր զուգընկերոջ, ամուսնու կողմից

«16 տարեկանում ծանոթանում եմ մի տղայի հետ, սիրահարվում եմ, ու ինքը սկսում է ինձ մանիպուլացնել: Այս վերջերս այն 17 տարեկան աղջկա դեպքը որ եղավ, ես իրան [այդ աղջկան] իրականում հասկանում եմ, որովհետև գիտեմ, թե ինչ ա այդ մանիպուլյացիան: Ու ինքը սկսում է (խմբ.՝ նկատի ունի տղան, ում սիրահարվել էր*), իբր պետք է գնար Օդեսա, բայց իմ համար տոմսը հետ է տալիս: Գալիս է հետևիցս, սկսում է քայլել՝ իմ համար է քայլում, իմ համար լիքը բան է անում: Բայց իրականում ոչ մի բան չէր անում: Ասենք, ինչ-որ նվեր էր տալիս, բայց դրա դիմաց ինչ-որ սեռական բան էր ուզում: Տենց մի 6 ամիս ես այդ հարաբերության մեջ եղել եմ, ու ինձ թվացել է, որ դա ինձ հավես է, բայց դրանից ես ամեն անգամ ավելի էի կոմպլեքսավորվում՝ սեռական թեմայով առաջարկներից: Ու վերջը իմ պիկը էղավ նրանից, որ մի անգամ կբեա-ում* (թարգմ.՝ կտուր) *էինք, իրա ընկերը, որը հիմնականում բոլոր ակտերի ժամանակ պետք է լիներ, ինչ-որ սենյակում փակվեր: Իրանց համար կարևոր է, չէ՞, ասել՝ տե՛ս, ես իրա հետ եղել եմ: Վերջը, կբեա էր. ինքն էր, իրա ընկերն էր խմած, ժամը մեկն էր գալիս, զանգեցի պապային, ասացի՝ փող չունեմ, տաքսի նստի, արի ինձ տար: Դա էր, մինչև պապան գալիս է, իրանք սկսում են. այս ընկերը ինձ բռնում ու գրկում է ահավոր, սենց սկսում է լիֆիս* (խմբ.՝ ներքնազգեստ) *հետ խաղալ,*

այդ տղեն էլ (խմբ.՝ նկատի ունի այն տղային, որին սիրահարված էր) *նայում, ծիծաղում է: Էմոցիոնալ շոկի մեջ եմ ուղղակի՝ ի՞նչ ա կատարվում: Վերջը, բարեբախտաբար պապաս զանգում ա, բանը արդեն հանվելուն չի հասնում, դրանից հետո իրանք փախնում են. իրենց նմանները այդպես են անում: Ու դրանից հետո այդ տղան էլի փորձում է ինձ հետ կապի դուրս գալ. ստիպված համարս եմ փոխում, դպրոցս եմ փոխում»:*

18-28 տարեկան կին, Երևան

«Ես մի քանի տարի առաջ լսեցի ամուսնուս ընկերոջ եղբոր մասին: Իր կնոջը սեռական բռնության էր ենթարկել տան մեջ, փոքր երեխա ուներ: Նույնիսկ տան մեջ կապել էր շղթաներով, որ իր ուզածին հասնի: Այ սա էր սեռական բռնությունը: Դրա համար իրեն դատեցին: Չեմ հիշում՝ քանի տարի տվեցին, հիմա ինքն ազատության մեջ է: Եկավ ուրիշի հետ ամուսնացավ: Չիմացա՝ հետազայում կնոջ հետ ինչ եղավ: Ու շատ ցավոտ թեմա է, շատ բնորոշ է Հայաստանին էլ, մեր տարածքին էլ: Այնպես չի, որ չի լինում»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Ես, օրինակ, ամուսնացած կնոջից այսպիսի մի պատմություն եմ լսել, ինձ թվում է՝ կարող ենք սեռական բռնություն համարել, երբ որ երեխա ունենալու ցանկություն չունի զույգը, ու կինը խնդրում է պաշտպանվել, ու տղամարդը հրաժարվում է պաշտպանվելուց, ստիպված է կինը [աբորտ անել]... ինքն էլ դեղորայք չի օգտագործում, որովհետև ուռուցք կարող է ունենալ, թե արդեն ունի, չգիտեմ, նման մի բան, երևի մյուս պաշտպանվելու միջոցներն էլ թանկ են, ստիպված կարող է ինքը տարին մի 6 անգամ գնալ աբորտի, որը ևս բռնություն է: Կրթության պակասի հետևանքով շատ կոնկրետ բռնություն է, մարդն առողջությունը կորցնում է, որովհետև այն մեկը դեմ է»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Սեռական բռնության դեպքեր հոր, եղբոր, ընտանիքի այլ անդամների կողմից

«Ասացին, որ հայրը իր աղջկան է [բռնաբարել]... 7 տարեկան աղջիկ, ուղեղիդ մեջ չի տեղավորվում: Ու ինձ համար ավելի ցավոտ է այն, որ այդ երեխային փորձել են այս տարի դպրոց տանել, դասարանի ծնողները դեմ են եղել, որ այդ երեխան իրենց երեխաների հետ նույն դասարանում սովորի: Այդ երեխայի համար ես շատ ցավոտ ապրումներ ունեցա: Չեմ ճանաչում, չգիտեմ՝ որ դպրոց էին տարել, բայց այնքան ցավոտ էր, որ ծնողները նման հարց են բարձրացրել: Բա ի՞նչ անի, ո՞ւր գնա: Ինքը կարող է չի էլ հասկանում՝ իր հետ ինչ է տեղի ունեցել: Բա իրեն միջավայր է պետք, որ կարողանա էդ ամեն ինչի միջից դուրս գա»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Մեր գյուղում մի 7-8 տարի առաջ մի դեպք էր եղել: Աղջիկը եղբոր ու ընկերների խմբի կողմից բռնության էր ենթարկվել: Եղբայրը մի քիչ հիվանդ էր, հոգեկան խնդիրներ ուներ: Էդ աղջկան բռնաբարել էին, հղիացել էր»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Սեռական բռնության դեպքեր դասախոսի, ուսուցչի, գործատուի կողմից

«Ես իմ դասախոսի ամենալավ ուսանողն էի դասարանում: Ու ոնց որ մի անգամ շատ մեծ վեճ եղավ իմ ու իր միջև: Հետո՝ հաջորդ անգամ որ եկա, ինքը փափկեց ու ուզեց քայլ անի, որպեսզի մենք հաշտվենք: Ուղղակի, ոնց որ ինքը այնքան լավ չէր պարապել, ոնց պետք էր, իսկ ես դրա համար վճարել էի ու իրան հենց այդպես ասեցի, ինքը նեղացավ՝ բա ես դասախոս եմ, ես ինչ ուզեմ կանեմ: Ու հաջորդ անգամ, ոնց որ ինքը [դասախոսը] քայլ արեց, որ այդ ամեն ինչը հարթվի, ու եկավ, ինձ գրկեց, ու ես զգացի, որ ստեղս (խմբ.՝ ցույց է տալիս վզի հատվածը) երևի մի երկու րոպե պաչում էր: Ու հետո հետ էկա տուն ու սենց մտածում էի՝ կարո՞ղ է ինձ թվաց: Այդ ամեն ինչից հետո ես միշտ կասկածում եմ»:

18-28 տարեկան կին, Երևան

«Իմ հետ եղել է դեպք, երբ գործի եմ գնացել, այսինքն՝ գործի չէ, սովորում էի այդտեղ, պետք ա մնայի աշխատելու՝ համակարգչային դասեր էր: Տնօրենը փակել էր դուռը, ասում էր՝ սպասի, դե մեծ աղջիկ ես, արդեն հասկանում ես, կգաս, այս օֆիսում կաշխատես, սենց-նենց: Առաջին բանը, որ ես արեցի, ասեցի՝ դե լավ, ես գնամ՝ վաղը կգամ: Ու տենց գնացի՝ էլ չեկա: Ու ոչ մեկի չեմ պատմել, եթե անկեղծ, ինչ-որ հարցի լուծում չեմ տվել: Չեմ գնացել էլ դասերին»:

29-39 տարեկան կին, Երևան

«Նույն այս պահին ՇՊՀ-ի (խմբ.՝ Շիրակի պետական համալսարան) պրոֆեսորներից մեկը (խմբ.՝ մի քանի մասնակից ծիծաղում են, հասկացան, թե ում մասին է խոսքը) *շատ հայտնի մարդ է, ուրեմն ինքն իր ասպիրանտներից մեկին առաջարկեց նման բնույթի [սեռական] ծառայություն, որ ինքը գրի իր ասպիրանտական թեզը: Այս աղջիկը նոր էր ամուսնացել, շատ մեծ աղմուկ բարձրացավ, իհարկե այդ աղջիկն ասպիրանտուրան թողեց ու դուրս եկավ»:*

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Սեռական բռնության դեպքեր այլ ծանոթ անձանց կողմից

«Ես չեմ հիշում՝ քանի տարեկան էի, բայց շատ-շատ փոքր էի: Բակում պահմտոցի էինք խաղում: Ես մի տեղ տապ եմ անում, մի տղա գալիս է, ասում է՝ դու լավ տեղ չես տապ արել, արի գնանք, իրար հետ տապ անենք: Գնում ենք շենքի վերևի գարաժները (թարգմ.՝ ավտոտնակ) *կիսաշեն: Մեզ անընդհատ ման են գալիս ներքևում: Մի 5 րոպեի չափ մնում ենք, այդ ընթացքում ինքն ինձ ուզում է համբուրել, այդ ժամանակ մորաքույրս վերևի ճանապարհով անցնելիս է լինում, ինձ տեսնում է, կանչում: Ես էդ պահին չեմ հասկացել, այդ ամեն ինչը տպավորվել է, մեծացել եմ, նոր այս վերջերս մտածում եմ՝ ախր մենք խաղ չէինք անում, ինչ լավ է մորաքույրս անցնում էր այդտեղով: Նոր տեղ է հասնում»:*

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«Մենք հարևան ունեինք, հոգեբանական խնդիրներ ուներ: Ես երեխա եմ եղել, երևի 7-8 տարեկան եմ եղել, բայց մինչև հիմա այդ տեսարանն աչքիս առաջ է: Ապշած նայում էի այդ մարդուն, որովհետև ինձ համար դա լրիվ նորություն էր: 3-4 անգամ տեսնելուց հետո նոր մամայիս պատմել եմ, որ սենց բանի եմ ականատես եղել: Մամաս ասում էր, որ չի կարելի, այդ ժամանակ պետք է թեքվես, փախնես այդտեղից: Ու ինքը [բռնարարը] առաջ չէր գալիս, միայն ցուցադրում էր [սեռական օրգանը], բայց, ինչ խոսք, նայել եմ, որովհետև դա ինձ հետաքրքիր էր: Հետո մաման կնոջն [այդ մարդու] էր ասել, կինը չէր հավատացել»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

«Մի դեպք էլ հիշեցի բռնության, որ ինձ հետ տեղի ունեցավ վերջերս: Երբ որ անտուն էի դարձել, տարբեր տներում ապրում էի վարձով: Մի պապիկ գտա, ով մենակ էր ապրում, մտածեցի՝ իմ միամիտ խելքով, դե իմ պապիկները շուտ են մահացել, պապիկ չեմ տեսել, պապիկի կարոտ. թոռան պես իրեն հավեսով կնայեմ, իր տան մի սենյակում վարձով կապրեմ: Իրականում սկզբից շատ հոգատար էր, գնումներ չէր թողնում անեի, ինքն էր առևտրի տերը, սենց ամեն ինչը լավ էր: Ես էլ ճաշ-մաշ էի սարքում: Նորմալ ապրում էինք: Հետո չգիտեմ՝ ոնց պատահեց, առաջին անգամ, երբ որ գրկախառնվեց, ես մտածեցի, որ միգուցե թոռան կարոտ է, միամիտ ձևով մտածեցի: Բայց երբ որ հասկացա, որ չէ՝ սա սովորական գրկախառնություն չէ, իրան հետ հրեցի ուղղակի: Ոնց որ ասման էի լսանում, ինքը հետևից եկավ, ինձ գրկեց, իրեն հետ հրեցի՝ ջղայնացած արտահայտվեցի, որ՝ ի՞նչ ես անում, մի՛ արա: Բա՝ մեծ մարդ ենք, սենց անիմաստ, հիմար բաներ սկսեց խոսալ: Շատ ջղայնացա, թողեցի գնացի սենյակս, փակվեցի: Չգիտեմ ոնց վարվեմ, որ ճիշտ լինի, ու չունեմ գնալու տեղ, արագ ինչ-որ բան ձեռնարկել չեմ կարող: Մտածեցի՝ լավ, միգուցե պապի է, մեծ մարդ է, սխալվել է, փորձեմ հասկանամ, ներեմ: Երբ որ երկրորդ անգամ եղավ այդ գրկախառնությունը, ես շատ ջղայնացա ու սկսեցի հնարավորինս շուտ տուն փնտրել, բայց քանի որ չունեի գումար ու չէի կարողանում գտնեի, չգիտեի ինչ անեի: Քույրիկիս մի դասախոս ուներ, տղամարդ էր, մենակ էր ապրում, բայց ես 1000 % վստահ էի իրա մաքրության վրա, իրա անկեղծության, իրա մարդ լինելու վրա: Զանգեցի, ստիպված ասացի՝ ընկեր Գրիգոր, սենց իրավիճակ է, որ խնդրեմ, կարելի՞ա մի քանի օր գամ Ձեր տուն, մինչև ես ապրելու տեղ գտնեմ: Տենց մինչև էդ պահերը լինի, երրորդ գրկախառնությունը տեղի ունեցավ: Հաջորդ օրը պետք է արդեն տեղափոխվեի, նամակ գրեցի պապիկին: Իր հետ ամբողջ մի ամիս ապրած ընթացքում ինչ սխալներ որ տեսել եմ իրա կողմից, սիրուն անկեղծ գրեցի ու առավոտյան տանից դուրս գալուց... Նախապես իրան չէի տեղեկացրել, որ հաջորդ օրը տեղափոխում եմ, արթնացա, իրեն ասացի, որ ես այսօր գնում եմ, ու ինչ հաշվարկներ, ինչ ֆինանսական պահեր կար, դրեցի գումարը, նամակն էլ դրեցի: Ինքը հասկացել էր իր սխալը, ասում էր՝ ես քեզ նեղացրել եմ, դրա համար ես, չէ՞, գնում, ու սկսեց լացել ինքը ու սիրտը բռնեց: Ասում եմ՝ այս մարդը չմեռնի, վրես մնա, кошмар (թարգմ.՝ մղձավանջ) վիճակներիս դա էր մնացել պակաս: Ասացի՝ չէ, պապի ջան ամեն ինչ նորմալ է, շնորհակալություն քեզ ամեն ինչի համար, մի խոսքով՝ սա էլ քեզ նամակս, ես գնացի»:

29-39 տարեկան կին, Երևան

«Իրականում մեր հարևաններից մեկի հետ նման դեպք պատահեց: Կողքի շենքից մեկը նկուղում այդ աղջկան սեռական բռնության էր ենթարկել: Իրենք դիմեցին, արձագանքեցին, բայց, բնականաբար, այսպես ասած, զորավոր հանրությունը չհասկացավ այդ ամեն ինչը, այդ մարդն այդ պատրվակով, թե իբր մեղավոր չէ, քանի որ գիտեք՝ բանտերում ինչ է կատարվում նման գործողություն արած մարդկանց հետ: Ստիպված ինքնասպանություն գործեց, որպեսզի չգնա, իր պատիժը չկրի: Այսինքն՝ բարձրաձայնում են, բայց չունեն այդ հենարանը, որ կարողանա... մեխանիզմները չկան, որ պաշտպանված լինեն, դրա համար գալիս է այս մտածողությունը, թե «ինչո՞ւ ասեմ, եթե նորից պետք է խարազանվեմ, մարդ չկա պաշտպանող», չգիտեն ում դիմեն շատ ժամանակ»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Քննարկման առարկա չդառնալու համար չես պատմում դեպքերը: Կասեն՝ թույլ ես տվել: Կոնկրետ ինձ հետ պատահել է աղպես: «Крыша-ն (թարգմ.՝ տանիքը) *թռած» պապիկ էր, հիվանդանոցում մոտեցել էր ձեռնաշարժումներով ու սիրո խոստովանություններով, որ ես երևի իմ ամուսնության ժամանակ այդքան գեղեցիկ խոսքեր չեմ լսել: Պահի տակ այն կարգի ագրեսիվացավ, որ ես ակամայից նստածս տեղից բարձրացա, որ խփեմ, կողքիս նստած երիտասարդը հասկացավ, որ մի բան այն չէ, ձեռքս բռնեց, ասաց՝ կիսիես, կմեռնի: Աղմուկի վրա դուրս եկան բուժքույրները, հետո, երբ պատմեցի, թե ինչ է տեղի ունեցել, պարզվեց, որ բոլոր բուժքույրների նկատմամբ նույն բաներն արել էր այդ մարդը»:*

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Մի քանի տարի առաջ հեռուստացույց, հեռախոս վերանորոգող կար: Երեխեքը հիմնականում հեռախոս էին տանում վերանորոգելու, ինքը դրա դիմաց [սեռական բռնության էր ենթարկում երեխաներին] ... Ճիշտ է, դատեցին իրեն, բայց դուրս եկավ ու նորից շարունակում է նույն բանն անել»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

«Երիտասարդ, էլի նստած-եղած, ընտանիքից բաժանված, ուղեղին ինչ փչի, գնա դիմացի պառավի վրա: Էդ խեղճ պառավը մերժում է, պառավին դանակահարում է: Բայց պառավին փրկել էին, իրեն էլ բռնել էին»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Հետազոտության մասնակից կանայք շատ էին պատմում նաև անչափահասների հետ կատարված սեռական բռնության դեպքեր, ընդ որում՝ թե՛ դեռահաս աղջիկների, թե՛ տղաների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ կարող ենք արձանագրել, որ կանայք դժվարությամբ են խոսում իրենց հետ կատարված սեռական բռնության դեպքերի մասին, սակայն համապատասխան միջավայր ստեղծելու դեպքում, որը հիմնված է վստահության, ընդունման վրա, պատմում են սեփական փորձառությունից: Կարևոր է նկատել, որ կանայք չունեն համապատասխան լեզու սեռական բռնության դեպքերը նկարագրելու համար. շատ հաճախ իրենց խոսքում կամ պատմություններ պատմելիս նրանք խուսափում են նույնիսկ «սեռական» բառն օգտագործելուց, երևույթի մասին խոսելիս կամ դեպքը նկարագրելիս ցածրացնում են ձայնը, պատմելիս հետևում են խմբի արձագանքին և այլն: Սակայն սեռական բռնության կանխարգելման, սեռական բռնության դեմ պայքարի հարցերում կարևորում են նաև սեռական բռնության դեպքերի բարձրաձայնումը, հանրայնացումը, որովհետև միայն այդպես կարող է վերջ դրվել անպատժելիության մթնոլորտին:

Լռությունը՝ սեռական բռնությանը (չ)արձագանքելու եղանակ

Բռնությունը թաքցնելու հանրային ընդունված նորմերը միջավայր ու պայմաններ չեն ստեղծում և հնարավորության ելքեր չեն թողնում բռնության ենթարկված մարդկանց՝ խոսելու իրենց փորձառության մասին: Եթե դեռևս 2017 թվականին ընտանեկան բռնության մասին հետազոտություններն ու կանանց հետ քննարկումները վկայում էին այն մասին, որ կանայք դժվարանում էին վերբալացնել իրենց հետ կատարվածը որպես բռնություն, ընտանեկան բռնություն և առօրյայում կարողանում էին խոսել այդ դեպքերի մասին՝ դրանք չանվանակոչելով որպես ընտանեկան բռնության օրինակներ, ապա այս հետազոտությամբ կարող ենք համեմատականներ անցկացնել ու փաստել, որ կանայք կարողանում են իրենց հետ կատարված դեպքերը թեկուզ հետահայաց սահմանել որպես սեռական ոտնձգության կամ սեռական բռնության օրինակներ: Խնդիրն այն է, որ որքան էլ սահմանումն ու ձևակերպումը կանայք կարողանում են տալ, միևնույն ժամանակ սեռական ոտնձգության կամ բռնության ենթարկված կանանց համար դժվար է հանրայնորեն խոսել այդ փորձառության մասին:

Հետազոտության մասնակից կանայք մեծ մասամբ հաստատում են, որ Հայաստանում սեռական բռնության ենթարկված մարդիկ, հիմնականում կանայք, սակայն տղամարդիկ առավել ևս, լռում են իրենց հետ կատարված դեպքերի մասին: Կանայք արձանագրում են նաև, որ սեռական բռնության դեմ պայքարի համար կարևոր է իրենց հետ կատարվածի մասին բարձրաձայնելը: Սակայն բարձրաձայնելու մասին որոշում կայացնելը երկառած (դիլեմա) է կանանց համար և լավագույնս արտահայտվում է *«պատմում ես՝ վատ է, չես պատմում՝ վատ է»* ձևակերպմամբ: Լռության մշակույթն ու սեռական բռնության սեփական փորձառության մասին չբարձրաձայնելու պրակտիկան Հայաստանում, հետազոտության մասնակիցների կարծիքով, տարբեր հիմքեր ունի: Պատճառներից մեկը բռնության ենթարկված անձանց հանրային պիտակավորումն է: Հանրային մեղադրանքները, «մեղավոր» պիտակավորվելու վախերը առաջնային պատճառներն են, որոնք ստիպում են սեռական բռնության ենթարկված մարդկանց լռել:

«Ճիշտ է, լռում են, որովհետև գիտեն, որ վերջին պահին էլի կինն է մեղավոր դուրս գալու, ի՞նչ ասեն»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Լռում ենք, որովհետև շրջապատը չի հասկանա: Բերանդ բացեցիր, կասեն՝ դու ես մեղավոր, նայել ես, ժպտացել ես, առիթ ես տվել»:

40-50 տարեկան կին, Եղեգնաձոր, Վայոց ձորի մարզ

Հանրային այս կասկածամտության ու քննադատության հարցը առկա է նաև ընտանիքում, երբ երիտասարդ աղջիկները սեփական ընտանիքում սեռական բռնության խնդրի մասին խոսելու վստահություն չունեն և բախվում են մեղադրանքների, ինչը լռության մշակույթը ավելի է խորացնում ու երկարացնում սեռական բռնության շղթան:

«Հիմնականում ոչ մի բան [չեն անում] [սեռական բռնության ենթարկված կանայք]: Իմ ընտանիքի օրինակով ասեմ, եթե իմ հետ տենց բան լինի, գնամ մամային ասեմ, մաման կասի՝ ուրեմն դու նենց բան ես արել, որը պատճառ է դարձել: Կարող է շուռ գան, ասեն՝ բա մեզ խի՞ չեն բռնաբարում»:

18-28 տարեկան կին, Երևան

Սեռական բռնության փորձառությունը թաքցնելը նաև պայմանավորված է նրանով, որ կանայք վախենում են, որ իրենց կմեղադրեն, կամ բարձրաձայնելը բացասական հետևանքներ կունենա ընտանիքի համար, օրինակ՝ դրդի ամուսնուն, հորը, որդուն հաշվեհարդարի կամ «պատվի համար սպանության» (honor killing): Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցինք, սեռական բռնության կամ սեռական ոտնձգության մասին բարձրաձայնելու դեպքում հաճախ թիրախավորվում է հենց սեռական բռնության ենթարկված անձը, հարցականի տակ է դրվում վերջինիս փորձառությունը, հաճախ նրան են մեղադրում իր հետ կատարվածի համար:

> *«Ես նման դեպքի ականատես եմ եղել, երբ մի աղջիկ մի տղայի ասաց՝ կլինի՞ մի կողմ գնաս, ու ամբողջ ավտոբուսի կանայք այդ աղջկան ինչ ասես ասացին: Դա էլ է ինձ վրա ազդում, որ կանայք շատ են տղամարդապաշտ»:*
>
> **18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ**

Կանայք նշում են, որ որքան էլ դժվար է սեռական բռնության մասին խոսելն ու բարձրաձայնելը, բայց նաև կա մյուս հարցը, շատ դեպքերում հանրայնացնելուց հետո բռնության ենթարկված անձը անարդարության զոհ է դառնում, նաև մեղադրվում է, իսկ բռնարարն էլ անպատժելի է մնում: Այս տարածված պրակտիկան նեղացնում է կանանց ու առհասարակ սեռական բռնության մասին ցանկացած դեպք հանրայնացնելու տարածքն ու հնարավորությունը: Սեռական բռնության դեպքերի մասին չիմանալու ու լռելու պրակտիկայի ակտուալությունը պայմանավորված է նաև խոսելու ցանկության բացակայությամբ, անպատժելիության մթնոլորտով, անելանելիության զգացողությամբ:

> *«Ես առաջինը մտածել եմ՝ զանգեմ ամուսնուս, ասեմ՝ արի տեսնենք էս գժին ինչ ենք անում: Բայց որ տեսա՝ ընդհանուր հիվանդանոցն այդ մարդուն ինչ որակում տվեց, էլ... իրենց առաջին հարցը եղավ՝ հո ամուսնուդ չե՞ս ասել: Կարող է ամուսինս հիվանդանոցից դուրս այդ մարդուն սպաներ: Ու մենք, կին լինելով, էդ «հետո»-ից պաշտպանվելու համար, կարծում եմ, ակամայից վազելու ենք տեզորն ասենք, եղբորն ասենք, բայց ոչ ամուսնուն: Ու հաշվեհարդարներից խուսափելու համար կինը զոհ է դառնում՝ լռելով»:*
>
> **40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ**

Սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի մասին լռելն ավելի է խորացնում ստեղծված անպատժելիության մթնոլորտը և պարարտ հող է ստեղծում նման հանցագործությունների շարունակականության, բռնարարների անպատիժ մնալու համար, ինչն էլ, իր հերթին, նորմալացնում է երևույթը, այլ ոչ թե խնդրականացնում:

> *«Եթե քննարկես, շատ անհարմար թեմա է ստացվում, չես քննարկում, ստացվում է այնպես, որ՝ հեչ, անցավ-գնաց»:*
>
> **40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ**

Հանրային ավելի լայն աջակցությունից անդին ներընտանեկան առողջ փոխհարաբերությունների բացակայությունը, վստահության հարցերը երբեմն ստիպում են սեռական բռնության ենթարկված կանանց ծայրահեղ քայլերի դիմել՝ ներամփոփվելով իրենց դժբախտության մեջ: Սեռական բռնության և սեռական ոտնձգության փորձառության մասին լռությունը և հանրային անտարբերությունը կարող են հոգեկան, հոգեբանական լուրջ խնդիրների պատճառ դառնալ բռնության ենթարկված անձի համար, որը կարող է արտահայտվել ինքնասպանության փորձ կատարելով, բարձր տագնապայնության և հոգեսոմատիկ դրսևորումներով: Հետազոտության մասնակից կանանց կարծիքով՝ ստեղծված իրադրությունից դուրս գալու ասպան լինելու մասին, իսկ 1,9%-ը ինքնասպանության փորձ է կատարել (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021):

համար սեռական բռնության ենթարկված անձինք որպես ելք են դիտարկում ինքնասպանությունը, քանի որ վախենում են հանրային արձագանքից կամ ունեն ամոթի զգացում իրենց հետ կատարվածի առնչությամբ:

Աշխարհում իրականացված բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ սեռական բռնության ենթարկված անձինք առավել ռիսկային են ինքնասպանության տեսանկյունից և առավել հաճախ են ունենում ինքնասպանության մտքեր: Աշխարհում սեռական բռնության ենթարկված երեք կանանցից մեկը լրջորեն մտածել է ինքնասպան լինելու մասին, իսկ 13%-ն ինքնասպանության փորձ է արել[30]: Սեռական բռնության ենթարկված անձինք 10 անգամ առավել հավանական է, որ ինքնասպանության փորձ կանեն, քան նրանք, որոնք սեռական բռնության ենթարկվելու փորձառություն չունեն, և այս հավականությունն առավել հաճախակիանում է այն դեպքում, երբ անձը սեռական բռնության է ենթարկվել մինչև 16 տարեկանը[31]: Հայաստանում ֆիզիկական և սեռական բռնության ենթարկված կանանց 8,4%-ը լրջորեն մտածել է ինքն

«Կինն ամաչում է բողոքելուց: Երկրորդ օրն իմանում ես՝ մոստից [կամրջից] են գցվել, կախվել են: Թույլ են: Կանանց ամոթի զգացումն ավելի ուժեղ է, քան տղամարդկանցը: Ամոթի զգացումից դրդված այդպես են անում»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

«Կոնկրետ այդ վերջին դեպքի [երկու հոգով աղջկա բռնաբարելու դեպքի մասին է խոսքը] ժամանակ մենք հիվանդանոցում ենք եղել, որ էդ աղջկան բերել են: Հազիվ են փրկել: Ու հենց հիվանդանոցում քույրերն ասացին, իբր իր մաման շատ վատ է եղել, ինքը մտել է մոր սենյակ, մաման ասել է՝ գնա գցվիր, չեմ ուզում քեզ տեսնել, ու ինքը գնացել է, գցվել է»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշ

«Ցավալի է, բայց շատերը [սեռական բռնության ենթարկված կանայք] ինքնասպան են լինում: Թեկուզ ընտանիքում էլ չեն կիսվում, ու դա գալիս է նրանից, որ ընտանիքում չկան էդ լավ փոխհարաբերությունները, որ եթե քեզ հետ վատ բան լինի, կարողանաս գնալ ու պատմել, որովհետև գիտես, որ պիտի ասեն՝ դու ես մեղավոր, ուրեմն մի բան էն չես արել: Դրա հետևանքով էլ շատ կանայք, աղջիկներ ինքնասպան են լինում»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«[Դեռահասները խոցելի են] որովհետև կայացած չեն, ընտանիքում ծնողներն անընդհատ կռվում են, վիճում են, մի քնքուշ խոսքի, ջերմության կարիք ունեն, գայթակղելով կարող են հասցնել էն աստիճանի, որ վերջում էլ ասեն՝ դե ռադ եղիր: Էդ աղջիկը ստիպված ի՞նչ ճանապարհ պիտի բռնի: Արդեն ինքը կոտրված է: Ով կարողանում է դրանից դուրս գալ, պայքարում է, ով չէ՝ ինքնասպանություն»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Նման իրավիճակներում հայտնվելով՝ սեռական բռնության ենթարկված անձինք շատ դեպքերում հոգեբանի հետ աշխատանքին զուգահեռ նաև հոգեբուժական աջակցության կարիք են ունենում:

Սեռական բռնության ենթարկված կանանց լռությունն ու նրանց նկատմամբ հանրային մեղադրանքն ու ճնշումը նաև տարածվում են բռնության ականտեսների կամ բռնության դեպքի մասին իմացողների վրա: Կանայք փոքր համայնքներում վախենում են բռնության դեպքերի մասին բարձրաձայնող «պիտակավորվելուց»՝ մատնանշելով, որ բոլորը ճանաչում են միմյանց, ու պիտակավորումը գրեթե անխուսափելի է:

[30] Department of Family Service (2020, December). *Sexual Violence Survivors at Greater Risk of Suicide.* Retrieved from: fairfaxcounty.gov/familyservices/community-corner/sexual-violence-survivors-at-greater-risk-of-suicide

[31] Նույն տեղում:

«Ենթադրենք՝ մենք Եղեգնաձորում ենք ապրում, մտածենք՝ լավ, ասենք ես Ջերմուկից էի, ստեղ դիմել էի [սեռական բռնության մասին հայտարարությամբ], միևնույնն է, իրանք իմանալու էին՝ ով եմ... Այստեղից զանգեմ Շիրակի ոստիկանություն, էլի կիմանան, թե ով եմ: Մենք շատ փոքր երկիր ենք: Կասեն՝ գործ տվող ես»:

40-50 տարեկան կին, Եղեգնաձոր, Վայոց ձորի մարզ

Հետազոտության մասնակիցները նաև առանձնացնում են տարիքային առանձնահատկությունը սեռական բռնության բարձրաձայնման հարցում: Նրանց կարծիքով՝ անչափահասների սեռական բռնության ենթարկվելու հավանականությունն ու դրա մասին բարձրաձայնելը, իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունն ու կարողությունն ավելի թույլ են մեծահասակների համեմատ: Կանայք նշում են նաև, որ մեծահասակները հիմա ավելի տեղեկացված են բռնության, իրենց իրավունքների պաշտպանության մասին, ինչպես նաև գիտեն ինչպես խուսափել ու դիմադրել:

Որքան էլ քննարկվում են սեռական բռնության մասին չխոսելու ու լռելու հարցերը, միևնույն ժամանակ դրան զուգահեռ կարմիր թելի նման անցնում է այն տեսակետը, թե որքան կարևոր է խոսել ու բարձրաձայնել սեռական բռնության, սեռական ոտնձգության փորձառության մասին՝ հետագայում բռնության շղթան կոտրելու նպատակով: Բռնության դեպքերի մասին բարձրաձայնելը նպաստում է նաև ապահով միջավայր ստեղծելուն և այլ փորձառությունների հանրայնացմանը:

«Պետք է բարձրաձայնեն կանայք: Եթե այսինչ խնդիրը կա, եթե ես թաքցնեմ, դու թաքցնես, մյուսը թաքցնի, այդ խնդիրը ավելի ու ավելի է մեծանալու: Եթե այսինչ բանը քեզ հետ եղել է, ամենաճիշտը, որ դու բարձրաձայնես, եթե մեկը պատասխան տա, մյուսները կվախենան, ինչ-որ բան կքաղեն»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Պետք է բարձրաձայնել, պետք է ավելի շատ դասընթացներ լինեն, որոնցում նաև տղամարդիկ լինեն, որ իմանան, թե ինչպիսի հոգեբանական վիճակում են լինում այդ ամեն ինչից հետո աղջիկները, որ նրանք էլ հասկանան, թե ինչ կարող է լինել, միգուցե այդ դասընթացներին մասնակցեն, չդիմեն նման քայլերի, մտածեն, որ ինչ-որ մեկը իրանց քրոջ հետ կարող է նույն բանը անել: Կանայք պետք է դիմեն կազմակերպություններին»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

Կանանց արձագանքները սեռական բռնության միջադեպերին շատ իրավիճակային են՝ կախված միջադեպից, միջավայրից, որում այդ բռնությունը կամ ոտնձգությունը կատարվել է: Որպես արձագանքման եղանակ՝ կանայք, օրինակ, պատմում են տրասնպորտում իրենց տեղը փոխելու մասին, երբ բռնարարը եղել է մոտ նստած, կամ փողոցում ինքնապաշտպանական միջոցառումների կիրառման մասին՝ հարվածել, ինքնապաշտպանական հատուկ նյութեր օգտագործել և այլն: Այս բոլոր դեպքերը վերհիշելիս և քննարկելիս կանայք հետահայաց անհանգստանում ու վերագնահատում են իրենց վարքագիծը սեռական ոտնձգության կամ բռնության դեպքի առնչվելիս ու փոխում դեպքի մասին չբարձրաձայնելու իրենց որոշումը:

Քանի որ մշտապես շեշտադրվում է հասարակության՝ սեռական բռնության հարցի մասին խոսելու պատրաստվածության բացակայության, անպատրաստակամության, տեղեկատվության պակասի մասին, դրանից բխում է նաև այն, որ կանայք սեռական բռնության փորձառությունը լավագույն դեպքում պատմում են իրենց նեղ մտերմիկ միջավայրերում՝ սեփական անձի ապահովության համար: Սեռական բռնության փորձառությունը բարձրաձայնելու և լուծումներ գտնելու համար հետազոտության մասնակիցները կարծում են, որ առաջնային

օղակը, այսպես ասած, մտերիմ հարազատ շրջանակն է, որին սեռական բռնության ենթարկված անձը կարող է դիմել: Սա կանանց համար, թե՛ նրանց, որոնք ենթարկվել են սեռական բռնության, թե՛ նրանց, որոնք այդ լսել են նման դեպքերի մասին վճռորոշ նշանակություն ունի: Այդ առաջնային միջավայրը նեղ ընկերական/հարազատական շրջանակն է կամ ընտանիքը, որը, կարելի է ասել, այն առանցքային կետն է, որտեղ խիստ ձևակերպմամբ որոշվում է այդ փորձառության, սեռական բռնության ենթարկվողի ու նաև բռնարարի ու բռնության ցիկլը կոտրելու/շարունակելու հետագա ընթացքը:

«Նայած, թե այդ պահին ով քեզ կօգնի, ինչպիսի ուղղություն ցույց կտա: Իրենից շատ բան է կախված: Եթե քեզ հետ է պատահել, հաստատ այդ պահին դու ինքդ չես կարող ճիշտ վերլուծել: Պիտի սառը գլխով հասկանաս՝ ինչ ես անում: Այդ ուղղություն ցույց տվողը՝ մոտիկ, հարազատ մարդիկ, կասեն, կվերլուծեն»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

Հետազոտության մասնակից կանայք իրենք էլ շատ դեպքերում եղել են խորհրդատուի դերում՝ իրենց վրա վերցնելով պատասխանատվություն սեռական բռնության ենթարկված կանանց ուղղորդելու, աջակցելու, միևնույն ժամանակ ունեցել են սխալվելու վախը, բայց գերադասել են գործել, քան լուռ մնալ:

Լռության շղթան կոտրելու և սեռական բռնության ենթարկված կանանց աջակցելու եղանակների մեջ հետազոտության մասնակից կանայք կարևորում են սեռական բռնության հարցի բարձրաձայնման, դեպքերի հանրայնացման մասին տարբեր ակցիաների իրականացումը, որոնք մոտիվացնող ու քաջալերող են դառնում կանանց համար՝ գիտակցելու, որ երևույթը տարածված է, և որ իրենք միայնակ չեն: Նման պրակտիկաները տարածվում են նաև նեղ համայնքային շրջանակներում: Երիտասարդ կանայք նաև կարևորում են հանրային գիտելիքի, սեռական բռնության, մարդկանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկության տարածումը՝ սեռական բռնության ենթարկված մարդկանց աջակցելու, ճիշտ ուղղորդելու և դեպքերը բարձրաձայնելու համար:

Ինստիտուտներին դիմելու պրակտիկաները

Սեռական բռնության ենթարկվող կանայք հիմնականում լռում են իրենց փորձառության մասին, նույնիսկ չեն փորձում օգնություն և աջակցություն փնտրել սեփական միջավայրում՝ խուսափելու մեղադրանքից, խարանից և խտրականությունից, ինչպես նաև սեռական բռնության հետագա հնարավոր դեպքերից: Սակայն հազվադեպ, երբ կանայք որոշում են խոսել, բարձրաձայնել իրենց փորձառության մասին, առավել հավանական օղակը, որտեղ կդիմեն օգնություն ստանալու համար, հասարակական կազմակերպություններն են: Պետական կառույցները, հատկապես իրավապահ համակարգը, ոստիկանությունը կանանց կողմից չեն ընկալվում որպես վստահելի հաստատություններ: Կանայք մեծ մասամբ մերժում են ոստիկանությանը դիմելու հնարավորությունը՝

- պայմանավորված սեփական կամ այլ կանանց բռնության տարբեր դրսևորումների դեպքում արդեն ունեցած բացասական փորձառությամբ,
- համարելով անօգուտ,
- վախենալով, որ բռնությունը կշարունակվի նաև ոստիկանական համակարգում,
- պայմանավորված ընդհանուր առմամբ սեռական հանցագործությունների նկատմամբ անպատժելիության մթնոլորտով:

«Ոստիկանությանը մեր գյուղում, օրինակ, դիմել են: Մի անգամ, երբ հղի կնոջ բռնաբարել էին 10 հոգով: Ու այդ կինը երեխային կորցրել էր ու ինքնասպան էր եղել: Դիմել էին ոստիկանություն, մի հոգու էին բռնել այդ խմբից, իրեն դատի էին տվել: Ամբողջ պատմությունը գիտեն, բայց բոլորը ազատ են»:

18-28 տարեկան կին, Երևան

«Մարդիկ ասում էին, որ դիմել են ոստիկանությանը իրենց խնդիրներով, որ ամուսինը ծեծում է, անգամ սեռական ոտնձգություններ և այլն, բայց ոստիկանության կողմից որևէ լուրջ քայլ չի ձեռնարկվել: Ու մի անգամ չէ, որ իրենք մոտեցել են այդ ոստիկանին: Ու անընդհատ այդ երևույթը շարունակվել է, խնդիրն այդպես էլ չի լուծվել, դրա պատճառով էլ դադարել են դիմել ոստիկաններին»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Ոստիկանությունը միշտ չէ, որ փորձում է խնդիրը լուծել: Հակառակը, փորձում է կոծկել, այնպես անել, որ դիմումը հետ վերցնեն: ...Ինձ թվում է՝ ավելի շատ լուրջ չեն վերաբերվում կանանց իրավունքներին, դրա համար էլ այդ ամենը անընդհատ տեղի է ունենում մեր երկրում»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«Ես կասեմ՝ ոստիկանությունը չէ: Ոստիկանությունը ասում է՝ ամուսին-կին եք, վերջ, ամուսինը ինչ կուզի կանի, մի հատ էլ կխփի, ես իմ օրինակից եմ ասում»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

«Իրենք [ոստիկանները] օրենքը չեն պահում, առաջին օրինախախտներն իրենք են: Եթե իրենք օրենքը պահեն, ամեն ինչը լինի բարձր մակարդակի, գուցե այդ բռնությունը չլինի»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Ոստիկանական համակարգը կանայք չեն դիտարկում որպես աջակից կառույց, ինչը պայմանավորված է կանանց նախկինում ունեցած փորձառությամբ: Այս հարցում կանայք հիմնվում են բռնության այլ տեսակների, մասնավորապես ընտանեկան բռնության դեպքերով ոստիկանություն դիմելու և աջակցություն չստանալու իրենց կամ միջավայրում այլ մտերիմների փորձառության վրա:

«Ես դեպքեր գիտեմ, որ դիմել է ոստիկանություն կինը, որ բռնության էր ենթարկվում ամուսնու կողմից խմելուց հետո, ոստիկաններն ասել էին, դե մենք էլ ենք խմելուց հետո մեր կանանց վրա ձեռք բարձրացնում, գնացեք, ձեր միջանձնային հարաբերություններին մենք խառնվելու տեղ չունենք, և այնքան որ անկասելի դեպքեր լինեն, որ հնարավոր չլինի փրկել մարդու կյանքը»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Կանայք չեն բացառում սեռական բռնության դեպքերի առնչությամբ ոստիկանություն դիմելու հավանականությունը, սակայն դրա համար որպես նախապայման են ձևակերպում հասարակական կազմակերպությունների հետ խորհրդակցությունը, իրավաբանի հետ աշխատանքը, ինչպես նաև իրական բարեփոխումները իրավապահ համակարգում:

«Ես կդիմեմ ոստիկանություն իրավաբանների հետ, որովհետև ես գիտեմ, որ իրենք գործը մինչև վերջ տանում են: Շատ օրինակներ գիտեմ, որ հատուկ կազմակերպությունների օգնությամբ դիմում ես ոստիկանություն, քեզ լրիվ այլ կերպ են նայում, քան եթե դու մենակ գնաս: Գնում ես, գրում, ստորագրում ես, դուրս ես գալիս, իրենք [գրածդ] գցում են աղբը»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Պետք է իրավապահ համակարգը զարգանա, պետք է ունենա ու այդ լծակները կիրառի, որ մենք չունենանք անպատժելի մարդիկ, ու երևույթների կրկնօրինակում չլինի»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

Հետազոտության մասնակից կանայք սեռական բռնության դեպքերի առնչությամբ օգնություն ստանալու հավանական օղակ են համարում Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններին և նրանց կողմից տրամադրվող ծառայությունները: Հասարակական կազմակերպություններին դիմելու հավանականությունը բարձրանում է նաև այն պարագայում, երբ այլ՝ պետական հաստատությունների կամ դրանց դիմելու ընթացակարգի մասին գիտելիքների բաց կա՝ պայմանավորված տեղեկատվության պակասով, շատ ժամանակ նաև համայնքային մակարդակում ինստիտուտների, զգայուն մասնագետների և ծրագրերի անհասանելիությամբ: Հետազոտության մասնակից կանայք մատնանշում են անորոշությունն ու անտեղյակությունը՝ ի՞նչ անել, ինչպե՞ս աջակցություն ստանալ, որն էլ բերում է սեռական բռնության դեպքերի լռեցման ու կանանց անպաշտպանության, և հասարակական կազմակերպություններն այս տեսանկյունից դիտարկվում են նաև որպես հաստատությունների մասին անհրաժեշտ տեղեկություն տրամադրող կառույցներ:

«Կարծում եմ՝ պետք է ինչ-որ մարմիններ լինեն, որոնք կզբաղվեն այդ գործով, ու չի անտեսվի: Հիմա մեզ մոտ լրիվ ուրիշ ձև է, ոչ մեկ չգիտի, որ իր հետ բռնություն տեղի ունենա, ո՞ւմ դիմի, ի՞նչ անի: Մարդիկ շատ դեպքերում ամաչում են այդ մասին բարձրաձայնել ու դառնում են դրա զոհը: Ու դա շատ սխալ է: Ինչ-որ կառույց պետք է լինի, որ մարդիկ իմանան, որ դրան դիմելուց հետո իրենց խնդիրները կլուծվեն: Մեզ մոտ չկան նման կառույցներ»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Ըստ էության՝ հասարակական կազմակերպությունների կողմից այսօր մատուցվող ծառայությունները հաճախ շատ ավելի նախընտրելի և արդյունավետ են համարվում նույնիսկ դրանց առկայության մասին տեղեկացված չլինելու պայմաններում: Կանայք նաև ծանոթ են բազմաթիվ հասարակական կազմակերպությունների, որոնք աշխատում են՝ կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում, տրամադրել են ծառայություններ թե՛ իրենց, թե՛ իրենց շրջապատում այլ կանանց՝ հոգեբանական աջակցությունից մինչև ապաստարանի տրամադրում: Ընդ որում՝ հետազոտության մասնակիցները թվարկում են կանանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններ (երբեմն դժվարանում են կազմակերպությունների լիարժեք անվանումը հիշել), որոնք գործում են հանրապետության ամբողջ տարածքում, ծանոթ են նաև մարզային, տեղական, համայնքային կազմակերպություններին:

«Շատ ավելին կարող են անել հասարակական կազմակերպությունները, քան իրավական»: «Հասարակական կազմակերպությունները շատ-շատ մեծ քանակությամբ կանանց օգնել են, աջակցել են, հետո էլ են օգնել աշխատանքի առումով»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

«Բայց որ հետո ես նայում, մի 20 տարի առաջ կանայք կարծես լրիվ մենակ էին, իսկ հիմա ՀԿ-ները շատ են, կանայք իրազեկված են, կարող է և հարազատի, բարեկամի կարիքն այդ պահին չզգան, բայց դիմեն պատկան մարմիններին»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Ինձ թվում է՝ ՀԿ-ներն ավելի ուժեղ են, քան ոստիկանությունը: ՀԿ-ներն ավելի լավ են կարողանում ազդել»:

29-39 տարեկան կին, Արմավիր, Արմավիրի մարզ

Հասարակական կազմակերպությունների հանդեպ վստահություն հետազոտության մասնակից կանայք ձևավորել են՝ ծանոթ լինելով աջակցության տրամադրման դեպքերի, դրական լուծումների: Նման փորձառություն ունեցել են կա՛մ անձամբ, կա՛մ էլ տեղեկություն են ստացել որևէ ծանոթի կամ մեդիայի միջոցով: Հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայություններից հետազոտության մասնակիցները հատկապես առանձնացնում են կանանց տրամադրվող հոգեբանական աջակցությունը, իրավաբանի աջակցությունը, ֆինանսական անկախությանն ուղղված միջոցառումները, ապաստարանի տրամադրումը: Ինչպես նաև կարևոր է այստեղ ևս մեկ անգամ շեշտելը, որ կանայք գնահատում են նաև հասարակական կազմակերպությունների աջակցությունը միասին իրավապահ համակարգին դիմելու գործում:

«Այդ ՀԿ-ն (խմբ.՝ անունը չի նշում) *ժամանակավոր ապաստան է տալիս, փորձում է աշխատանք գտնել, հոգեբանական աջակցություն, ֆինանսական օգնություն այդքան չէ, բայց փորձում են, որ այդ մարդը կայուն դառնա, ինքնուրույն առաջ շարժվի, փաստաբանական օգնություն են տրամադրում»:*

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Հասարակական կազմակերպությունները շատ-շատ մեծ քանակությամբ կանանց օգնել են, աջակցել են, հետո էլ են օգնել աշխատանքի առումով»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

Ընդհանուր առմամբ, կանայք, խոսելով հասարակական կազմակերպությունների և նրանց տրամադրած ծառայությունների մասին, արձանագրում են, որ հասարակական կազմակերպությունները չունեն բավարար ռեսուրսներ՝ արձագանքելու այնպիսի մեծ հիմնախնդրի, ինչպիսին կանանց նկատմամբ գենդերային բռնությունն է: Ավելին՝ կանայք բարձրաձայնում են, որ սեռական բռնությունը, ինչպես նաև կանանց նկատմամբ գենդերային բռնությունն այնպիսի հիմնախնդիրներ են, որոնց համալիր ձևով պետք է արձագանքի պետությունը, և իրավապահ համակարգը պետք է ավելի արձագանքող և զոհակենտրոն լինի: Այստեղ կարևորվում է նաև իրավախախտ անձանց համապատասխան պատժի արժանանալու և պատիժը կրելու անհրաժեշտությունը՝ որպես կարևորագույն նախապայման անպատժելիության մթնոլորտը կոտրելու, ինչպես նաև կանանց համար առավել պաշտպանված հասարակություն ունենալու համար՝ շեշտը դնելով բռնության կանխարգելման անհրաժեշտության վրա:

Սեռական բռնության ենթարկված կանանց կարիքները

Սեռական բռնության ենթարկված անձանց կարիքների մասին խոսելիս առաջնահերթ քննարկվում են հենց կանանց կարիքները և դրանք պայմանավորող տարբեր խորքային խնդիրները: Հայաստանյան մշակութային առանձնահատկություններից, հանրային ընկալումներից ու սոցիալական դրվածքներից ելնելով՝ կանանց դեռևս ընտանիքից, հետո կրթական համակարգում և հանրային կյանքում «վերագրվող» սահմանափակումները պայմանավորում են նրանց նկատմամբ սեռական բռնության տարածվածությունը և դրանից բխող նրանց կարիքներն ու պաշտպանության մեխանիզմների սակավ հնարավորությունները:

Սեռական բռնության ենթարկված կանանց կարիքների բազմազանության առանցքում հետազոտության մասնակիցներն առանձնացնում են նրանց ինքնուրույնության հարցը, որը հետագայում կանանց բռնության պրակտիկաների դադարեցման հնարավորություն կարող է լինել: Կանանց ինքնուրույնության հարցը բազմիցս կարևորվում է կարիքների ամբողջ բազմազանությունը քննարկելիս:

«Այն կանայք, ովքեր իրենց ամուսնու կողմից են ենթարկվել սեռական կամ այլ բռնության, հիմնականում կարիք ունեն հետագա իրենց կյանքը կազմակերպելու, քանի որ շատ-շատերն ամուսնանում են երիտասարդ տարիքում, կրթություն ունենում են կամ չեն ունենում ու եթե չեն կարողանում ծնողների տուն վերադառնալ, իրենց պետք է լինում աջակցություն՝ աշխատանք գտնել, առանձնանալ»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Ֆինանսական ապահովվածությունը, որը ենթադրում է աշխատանքի առկայություն, ինչն էլ իր հետ բերում է ինքնուրույնություն ու անկախացում, կարող է դառնալ այն միջոցը, որը սեռական բռնության ենթարկված կնոջը թույլ կտա որոշում կայացնել ու ազատվել բռնարարից: Ֆինանսական ապահովվածությանը կանայք ավելացնում են նաև կրթության անհրաժեշտությունը ու զարգանալու և ինքնակրթվելու հնարավորությունը, որը սեռական բռնության ենթարկված կնոջը «հույսը սեփական անձի վրա դնելու» հնարավորություն կտա:

«Շատ սովորել, շատ ամեն տեղ լինել, ամեն ինչ փորձել իմանալ կյանքում, որ շատ բազա ունենաս քո մեջ ու շատ ինքնավստահություն: Ոնց որ դու քո վրա աշխատես ու ինքնավստահություն ունենաս, որ high class person (թարգմ.՝ բարձր դասի մարդ) *լինես, որ կարողանաս քեզ պաշտպանել, որ քո հույսը մենակ դու լինես»:*

18-28 տարեկան կին, Երևան

Աշխատանքի անհրաժեշտությունը հետազոտության մասնակիցները սահմանում են ոչ միայն տնտեսական անկախության միջոց սեռական բռնության ենթարկված կանանց համար, այլև սոցիալական շփումները վերականգնելու հնարավորություն:

«Պաշտպանության և աշխատանքի [կարիք ունեն], որովհետև երբ որոշ ժամանակ աշխատում են, չեմ ասում՝ կմոռանան այն, ինչ տեղի է ունեցել, բայց գոնե հասարակության մեջ դուրս կգան»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

Ինքնուրույնության և մասնավորապես տնտեսական անկախության հարցը ավելի էական ու առաջնային է դառնում ամուսնացած և երեխա ունեցող կանանց պարագայում, որոնք ենթարկվում են սեռական բռնության. պատասխանատվության հարցն ավելանում է, քանի որ անհրաժեշտություն կա երեխայի խնամքն ու տարբեր հարցեր կազմակերպելու, ինքնուրույն լուծելու առաջ եկած խնդիրները:

«Ասենք՝ ունես մեկ տարեկան երեխա, բռնության ես ենթարկվել, դուրս ես եկել, գնացել ես: Երեխայիդ մտուր չեն ընդունում, դայակ վարձելու փող չունես, վարձով ապրելու գումար չունես, այդ երեխային կերակրելու հնարավորություն չունես, այդ երեխային էլ չես կարող տանը քնացնես, գիշերը գնաս փռում աշխատես, որ փող աշխատես»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

«Կրկնակի ծանր է երեխաներ ունեցող կնոջ համար»:

29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ

Երեխաներ ունենալու հարցը մշտապես ածանցվում է բռնության ենթարկված կանանց հարցերը քննարկելիս՝ թե՛ սեռական, թե՛ ընտանեկան բռնության համատեքստում: Առանձնացնելով ամուսնալուծության որոշումը որպես բռնությունից ազատվելու տարբերակ՝ հետազոտության մասնակիցները նշում են, որ այս պարագայում կանայք կրկնակի են պիտակավորվում: Երեխայի առկայությունը կանանց կարիքները կրկնակի շատացնում է, և նրանք առաջնահերթությունից դուրս են թողնում իրենց կարիքները՝ որպես կին ու անհատ՝ կարևորելով երեխաների կյանքի կազմակերպման, հանրության մեջ խտրական վերաբերմունքից նրանց հեռու պահելու խնդիրները:

Հետազոտությանը մասնակցած կանայք, որպես ավելի խոցելի և ավելի շատ կարիքներ ունեցող սեռական բռնության ենթարկված անձանց, առանձնացնում են անչափահասներին ու երեխաներ ունեցող կանանց: Անչափահասների պարագայում սեռական բռնությունը կարող է ընկալվել որպես պատկերացնելի միակ ու բացասական փորձառություն, որի մասին բարձրաձայնելուց նրանք խուսափում են՝ վախենալով ընտանիքի ու հանրության արձագանքից, խտրական վերաբերմունքից:

Հետազոտության մասնակիցներն առանձնացնում են նաև սեռական բռնության ենթարկված կանանց՝ ապահով միջավայր ունենալու կարիքը, որը ձևակերպում են որպես ընտանիքի աջակցություն: Ցավոք, կանայք մատնանշում են, որ շատ հաճախ սեռական բռնության ենթարկված կնոջ ծնողական ընտանիքը պատրաստ չէ ընդունելու նրանց, և ստիպված են լինում հաշտվել ու շարունակական բռնության ենթարկվել: Ընտանիքի աջակցությունը կարող է դառնալ նոր կյանք ստեղծելու հնարավորություն՝ հաղթահարելով ճնշված լինելու զգացումն ու գիտակցումը:

«Բայց ինքն իրեն զոհում է հանուն երեխայի, գնալու տեղ չունի: Տեսեք, ձեր ծնողը որ ընդառաջեր, դուք կգնայիք, չէ՞: Իրականում հարազատի, ծնողի աջակցությունն է ամենակարևորը: Եթե ծնողդ աջակցի, չես գնա իրավապահ մարմինների մոտ»:

40-50 տարեկան կին, Աշտարակ, Արագածոտնի մարզ

Սեռական բռնության ենթարկված կանանց կարիքների մի առանձին շրջանակ վերաբերում է հոգեբանական խնդիրներին: Վերջիններս մի ամբողջ բազմազանություն են ներառում՝ սեռական բռնության ենթարկված կանանց հասկացված լինելու հարցերից մինչև ավելի մասնագիտական աջակցություն: Սեռական բռնության ենթարկված կանանց համար ինչքան էլ դժվար է խոսել իրենց փորձառության մասին, այդքան էլ բարդ ու կարևոր է, որ իրենց փորձառությունը կասկածի տակ չդրվի առաջին հերթին նեղ շրջապատի, հետո հանրության կողմից: Շրջապատը կարելի է հասկանալ թե՛ ավելի նեղ՝ հարազատական-բարեկամական շրջանակ, թե՛ ավելի լայն հանրային մակարդակում՝ հասարակական և պետական ինստիտուտների աջակցություն:

«Մարդու համար ամենաառաջնային կարիքը հավատալն է, որ դիմացիններն իրեն հավատան, վստահեն»:

40-50 տարեկան կին, Գավառ, Գեղարքունիքի մարզ

«Կարծում եմ, որ լսեն իրենց, լսեն ու չքննադատեն, նույնիսկ ցույց տան ինչ-որ եզր, ինչ-որ եղք, որ կարող է դու այդ պահին այնքան լավ վիճակում չես, որ տեսնես այդ եղքը: Մատնացույց անեն, բայց հետո էլ չնստեն, իրեն քննարկեն, քննադատեն, որ նորից դա հասնի իրեն ու ավելի փակի, ցավեցնի: Ընդհակառակը՝ պետք է թողնես, որ ինքը միշտ կարողանա խոսել: Ես հենց այն պատմությունից ելնելով, հիմա ամեն մի հասարակ ինչ-որ բան է, ինքն [ընկերուհին] ինձ զանգում, ասում է՝ գիտե՞ս սենց եղավ, ի՞նչ անեմ, ո՞նց կարամ շարժվեմ և այլն... Այդ ամեն ինչը շատ մոտ ընկերուհի ունեմ, որ իմ ամեն ինչից ինքը տեղյակ է, բայց այդ ամենից [մյուս ընկերուհու հետ տեղի ունեցած դեպքից] տեղյակ չի, որովհետև ես չեմ գտնում, որ դա հանրայնացնելու է կամ չգիտեմ»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Հոգեբանից զատ ունենա մտերիմ մարդ, ով իրեն հասկանում է, իր դրության մեջ մտնում է, իրեն ոչ թե մեղադրում է, այլ օգնում, աջակցում, սատարում է, որովհետև այդ պարագայում դու ամենաշատը հենց դրա կարիքն ես ունենում»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

«Հիմնականում հոգեբանական [աջակցության կարիք ունեն]: Որովհետև իրենք [սեռական բռնության ենթարկված մարդիկ] լրիվ ուրիշ են արդեն, իրենց հետ պետք է լուրջ հոգեբաններ աշխատեն, որ իրենք նորից կարողանան նորմալ կյանքով ապրել»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Հոգեբանի հետ աշխատանքի կարիքը կանայք կարևորների շարքում են նշում, բայց միևնույն ժամանակ բարձրաձայնում են փոքր համայնքներում հոգեբանների հանդեպ վստահության հարցը՝ մատնանշելով իրենց հայտնի դեպքեր, երբ «մասնագետները» իրենց մոտ որևէ խնդրով այցելած կանանց պատմությունները հանրային քննարկման առարկա են դարձրել:

Հոգեբանական աջակցությանը զուգահեռ՝ հետազոտության մասնակիցները, մատնանշելով ընդհանուր առմամբ բռնության, մասնավորապես սեռական բռնության անխուսափելիության հարցը, կարևորում են կանանց ֆիզիկական պատրաստվածության ու ինքնապաշտպանության կարողությունը:

«Ինձ թվում է՝ աղջիկն առաջին հերթին պետք է իմանա իր իրավունքները, ինչ կարող է անել: Перцовый баллончик (թարգմ.՝ պղպեղով բալոն) *ունեցեք, բոքսի գնացեք: Չգիտեմ, ճիշտն ասած, որովհետև ես միշտ վստահ եմ, որ ինձ չեն կարող, որովհետև ես ուժեղ եմ: Պիտի ուժեղ լինես ինչ-որ չափով. моральный* (թարգմ.՝ բարոյապես) *էլ, ֆիզիկապես էլ»:*

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

«Այդ պահի դրությամբ դու ինքդ քեզ պաշտպանես, ինքնապաշտպանվես: Այդ պահին դու ես ու այդ մարդն է, ի՞նչ կարող ես անել, ոչ մեկ այդ պահին չի կարող քեզ օգնել: Թեկուզ ինձ վրա բերեմ օրինակը, եթե ինքը ինձ բռնաբարել է, այդ պահին ես ոչ մի բան չեմ կարող հետո տալ, հա կարող եմ իրեն պատասխանատվության ենթարկել, կարող եմ նենց անել՝ ինքը գնա նստի, պատասխան տա, բայց այդ [բռնության] պահին կինը պետք է ինքն իրեն պաշտպանի»:

18-28 տարեկան կին, Կապան, Սյունիքի մարզ

Հոգեբանական աջակցությանը զուգահեռ կարևորվում է նաև նեղ մասնագիտական՝ բժշկական աջակցության տրամադրումը սեռական բռնության ենթարկված կանանց:

Հետազոտության մասնակից կանայք շեշտադրում են նաև տեղեկատվական աջակցության անհրաժեշտությունը, որը կանանց կզորեղացնի իրենց իրավունքները պաշտպանելու կարողությունով և հնարավորություն կտա սեռական բռնության ենթարկված կանանց ազատվելու մեղավորության զգացումից:

«Խոսել դրա մասին, բարձրաձայնել: Բացատրել կանանց, որ դա իրենց մեղավորությունը չէ, չպետք է դա թաքցնել: Այդ դեպքում, որ ես ասացի՝ freeze mode (թարգմ.՝ սառեցման ռեժիմ), *որ մարդիկ չեն իմանում ինչ անել, գուցե արդեն կիմանան ինչ անել»:*

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Ըստ հետազոտության մասնակիցների՝ սեռական բռնության ենթարկված անձանց կարիքները կարող են տարբերվել՝ կախված բնակավայրից: Մասնավորապես մատնանշում են, որ Երևանում տեղեկություն ստանալու հնարավորություններն ավելի շատ են՝ ի տարբերություն մարզերի, ինչը կարող է նպաստել սեփական իրավունքների պաշտպանությանը, մարմնի հանդեպ զգայունությանը: Սակայն սա երաշխիք չէ երևանաբնակ կանանց՝ սեռական բռնության փորձառությունից հեռու մնալու: Սեփական իրավունքների, դրանց պաշտպանության հարցում տեղեկացվածության խնդիրը կարևորվում է ինչպես սեռական բռնության ենթարկված կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: Հետազոտության մասնակիցները մատնանշում են, որ սեռական բռնության ենթարկված տղամարդկանց համար կրկնակի բարդ է հայաստանյան հասարակությունում բարձրաձայնել իրենց հետ կատարվածի մասին, և նրանց համար էլ կարևոր է, որ տեղեկացված լինեն իրենց իրավունքների, դրանց պաշտպանելու մեխանիզմների մասին: Հետազոտության մասնակից կանայք կարևորում են հասարակական կազմակերպությունների կողմից տղամարդկանց աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը, առաջարկում են քննարկումներ անցկացնելիս ներգրավել նաև տղամարդկանց, հավաքել նրանց խնդիրների մասին տեղեկություններ և նրանց ևս օգնել: Այս տեսանկյունից իրազեկվածության բարձրացումը, հանրային ապահով միջավայրի ստեղծումը առանցքային են սեռական բռնության դեպքերը նվազեցնելու գործընթացում:

«Ճիշտ է, կանանց հանդեպ բռնությունների դեպքերը շատ են, բայց լինում է, որ կանայք են բռնության ենթարկում տղամարդկանց: Իհարկե, հատուկենտ դեպքերում: Եվ դրանք ավելի շատ են կոծկվում: Եթե կանանց դեպքում ասում ենք՝ ամոթ է, պատկերացրե՛ք՝ տղամարդկանց համար ինչքա՛ն ամոթ է: Ու դրա մասին ընդհանրապես չի խոսվում»:

18-28 տարեկան կին, Իջևան, Տավուշի մարզ

Ամփոփում.
սեռական բռնությունից պաշտպանված միջավայր ունենալու մեխանիզմները

Կանանց հետ սեռական բռնության և սեռական ոտնձգության հարցերի շուրջ քննարկումները այս ուսումնասիրության շրջանակում հնարավորություն տվեցին դուրս բերելու խնդրի առնչությամբ որոշակի առանձնահատկություններ և հասկանալու դրանց հաղթահարման համար անհրաժեշտ հետագա քայլերը: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս խոսել այն մասին, որ հայաստանյան հասարակությունում սեռական բռնության, սեռական ոտնձգության ընկալումները պայմանավորված են կանանց նկատմամբ կիրառվող սահմանափակումներով, նրանց նկատմամբ առկա գենդերային պատկերացումներով, դոմինանտ հայրիշխանական համակարգով, սեռական դաստիարակության և տեղեկատվության բացերով: Հաշվի առնելով, որ տարիներ շարունակ ընտանեկան բռնության թեմայով ուսումնասիրությունների իրականացման ընթացքում հետազոտողները բախվում էին կանանց լռությանը, քննարկումներին մասնակցելու անպատրաստակամությանը՝ այս պարագայում կարող ենք փաստել, որ չնայած սեռական բռնության թեմայի տաբուացվածությանը հայ հասարակության մեջ, վերբալ մակարդակում ձևակերպումների սակավությանը՝ այս հետազոտության շրջանակում կանայք ավելի քիչ կաշկանդված էին և խոսում էին իրենց կամ շրջապատի սեռական բռնության կենսափորձի կամ առհասարակ սեռական բռնությանն առնչվող այլ հարցերի մասին: Այս պարագայում նրանց համար կարևոր էր վստահության միջավայրի ձևավորումը, որն ապահով տարածք էր ստեղծում հետազոտության մասնակից կանանց համար՝ խոսելու սեռական բռնության հարցերի ու սեփական փորձառության մասին: Այնուամենայնիվ, որքան էլ կանայք հնարավորինս անկաշկանդ էին խոսել սեռական բռնության, սեռական ոտնձգությանն առնչվող հարցերին մասին, ու որքան էլ քննադատական էր նրանց դիրքորոշումն այս երևույթների վերաբերյալ, նույնքան դոմինանտ ու նաև կարծատիպային էին ընկալումներն ու ձևակերպումները սեռական բռնության ենթարկված անձանց հանդեպ:

Հետազոտության առանցքային երկու կատեգորիաների՝ սեռական բռնության և սեռական ոտնձգության շուրջ կանանց տեսակետներն ամփոփելով՝ կարելի է փաստել, որ չնայած այս երկու երևույթների միջև ընկալման հարցում տարանջատման նուրբ սահմանին՝ երկու պարագայում էլ առանցքային է դիմացինի կամքի բացակայությամբ կամ նրա կամքին հակառակ իրականացված գործողության ձևակերպումը: Այնուամենայնիվ, սեռական ոտնձգության մասին խոսելիս առաջ է գալիս այն միջավայրերի հարցը, որտեղ կարող է ոտնձգությունը կատարվել՝ փողոց, հրապարակ, հասարակական տրանսպորտ, դպրոց, աշխատավայր, ընտանիք, բանակ, քրեակատարողական հիմնարկ և այլն: Այս առումով նկատում ենք, որ սեռական ոտնձգության դրսևորման տեսանկյունից հանրային ցանկացած միջավայր կարող է վտանգավոր լինել: Սեռական բռնությանն անդրադառնալիս քննարկման դաշտ է բերվում «համաձայնության» գաղափարը, որը ենթադրում է, որ ցանկացած տեսակի սեռական գործողության, սեռական հարաբերության մեջ ներառված անձինք իրենց կամքով և ընտրությամբ են համաձայնել լինել տվյալ հարաբերության կամ գործողության մեջ:

Չնայած սեռական բռնության շուրջ քննադատության առկայությանը՝ այնուամենայնիվ, թեմայի շուրջ հանրային կարծրատիպերը, միֆերը նպաստում են դեպքերի լռեցմանը, և դա վերաբերում է ինչպես սեռական բռնության ենթարկված կանանց, այնպես էլ տղամարդկանց, որոնք առավել ևս լռում են իրենց հետ կատարված սեռական բռնության դեպքերի մասին: Ամոթը, հասարակության մեջ սեռական բռնության զոհի նկատմամբ տարածված խարանն ու խտրականությունը հետ են պահում կանանց դրա մասին բարձրաձայնելուց կամ օգնության դիմելուց, տղամարդկանց պարագայում դա շատ ավելի բարդանում է: Սեռական բռնության և սեռական ոտնձգության դեպքերի մասին լռելն ավելի է խորացնում ստեղծված անպատժելիության մթնոլորտը և նպաստում է նման հանցագործությունների շարունակականության, բռնարարների անպատիժ մնալուն, ինչն էլ, իր հերթին, նորմալացնում է երևույթը, այլ ոչ թե խնդրականացնում:

Ինչպես «սեռական ոտնձգություն», այնպես էլ «սեռական բռնություն» երևույթին անդրադառնալիս հարկ է առանձնացնել սեռական բռնության նկատմամբ խոցելի խմբերի, այն հնարավոր վայրերի և միջավայրի մասին, որտեղ կարող է կատարվել բռնությունը: Այսպիսով՝ կանայք և երեխաները առանձնանում են որպես սեռական բռնության նկատմամբ խոցելի խումբ:

Սեռական բռնության դեպքերի բարձրաձայնման հետ առանձնացվում են նաև սեռական բռնության պատճառները, որոնց շարքում քննարկվում են, օրինակ, բռնարարի անձնական հատկանիշները, հոգեկան առողջությանն առնչվող խնդիրները, հայրիշխանական համակարգը, հայրիշխանական համակարգում տղամարդկանց վերագրված գենդերային դերերը, հասարակությունում առկա գենդերային անհավասարությունը և այլն: Ընդունելով ու սահմանելով հայաստանյան հասարակությունը որպես ավանդապաշտ, պահպանողական հասարակություն, որտեղ սեռական կյանքի և հարաբերությունների մասին խոսելը տաբուացված է՝ սեռական բռնությունն ու ոտնձգությունը մեկնաբանվում են որպես սեռական ցանկությունների չբավարարվածության և սեռական ազատությունների ճնշվածության հետևանք:

Սեռական բռնության և սեռական ոտնձգության ենթարկված անձինք կրում են կարճաժամկետ և երկարաժամկետ հոգեբանական լուրջ վնասներ՝ որպես սեռական բռնության և սեռական ոտնձգության անմիջական հետևանք, որին զուգահեռ կարող են նաև պիտակավորվել այլ անձանց կողմից: Հաճախ սեռական բռնության և ոտնձգության ենթարկված անձանց են մեղադրում իրենց հետ կատարվածի համար, ինչն էլ ավելի է սրում հոգեբանական խնդիրները և բռնության ենթարկված անձի մեջ առաջացնում ինքնամեղադրանք և ինքնախարազանում, որի հետևանքը որոշ դեպքերում կարող է լինել ինքնասպանությունը կամ ինքնասպանության փորձը:

Չնայած այն պնդմանը, որ բոլոր կանայք կարող են սեռական բռնության և սեռական ոտնձգության ենթարկվել, տիրապետող են նաև սեռական բռնության ենթարկված կանանց նկատմամբ մեղադրական ձևակերպումները՝ իրենց հետ կատարված սեռական ոտնձգության և սեռական բռնության համար: Սա էլ պատճառ է դառնում, որ սեռական բռնության ենթարկված անձինք լռում են իրենց հետ կատարված սեռական ոտնձգության և բռնության դեպքերի մասին՝ վախենալով նման արձագանքից, որում դարձյալ իրենց կմեղադրեն իրենց հետ պատահածի համար:

Քանի որ մշտապես շեշտադրվում է հասարակության՝ սեռական բռնության հարցի մասին խոսելու պատրաստվածության բացակայության, անպատրաստակամության, տեղեկատվության պակասի մասին, դրանից բխում է նաև այն, որ կանայք սեռական բռնության փորձառությունը լավագույն դեպքում պատմում են իրենց նեղ մտերմիկ միջավայրերում՝ սեփական անձի ապահովության համար: Այսպիսով՝ սեռական բռնության դեպքերը շարունակում են շատ դեպքերում մնալ լռեցված, չքննարկված:

Ամփոփելով կանանց հետ սեռական բռնության և սեռական ոտնձգությանն առնչվող հարցերի բազմազանության մասին քննարկումները՝ կարևոր է անդրադառնալ այն մեխանիզմներին և անելիքներին, որոնց գործարկումը կնպաստի սեռական բռնության և ոտնձգության դեպքերի կանխմանն ու ավելի պաշտպանված հասարակություն ունենալուն:

Սեռական բռնության կանխարգելման հնարավորությունները Կանխարգելում

Անելիքների շարքում հետազոտության մասնակից կանայք առաջնային են համարում կրթության հարցը: Սեռական դաստիարակության պատշաճ իրականացումը դպրոցներում և մանկապարտեզներում՝ կախված տարիքային խմբերից, թե՛ աղջիկների, թե՛ տղաների համար իրազեկվածությունը բարձրացնելու, սեփական մարմնին ծանոթանալու, սեփական իրավունքները պաշտպանելու և խտրականության դեպքերից խուսափելու համար առանցքային նշանակություն ունի: Երեխաների սեռական կրթության ու սեռական դաստիարակության հարցերը բազային անելիքներ են ապագայում առողջ հասարակություն ունենալու համար, որը նաև թույլ կտա խուսափել սեռական բռնության դեպքերից, իսկ սեռական բռնության ու սեռական ոտնձգության ենթարկվելու դեպքերում գիտելիք և հմտություններ կտա դրանք տարբերակելու, բարձրաձայնելու և պաշտպանության մեխանիզմներ ունենալու համար:

«Ճանաչեն իրենց մարմինը, գիտակցեն իրենց տիրույթը: Ո՞րն է կարելի, ո՞րը չի կարելի, իմանան՝ որտեղ իրենք կարող են ասել ոչ»:

29-39 տարեկան կին, Գյումրի, Շիրակի մարզ

«Ես կողմ էի սեռական դաստիարակության ներմուծմանը դպրոցներում, բայց եթե դա արվի անկապ, մակերեսային, ինչպես արվում են մնացած ծրագրերը, դա կտա հակառակ արդյունք: Բայց եթե դա ճիշտ ձևով արվի, ֆիզկուլտուրայի դասատուն չգնա սեռական դաստիարակություն բացատրի երեխեքին, այդ պարագայում մենք կունենանք հասարակության մի զանգված, որը մեզնից բարձր կլինի, ավելի առաջադեմ, խելացի կլինի»:

18-28 տարեկան կին, Վանաձոր, Լոռու մարզ

Սեռական դաստիարակության գործընթացում կանայք կարևորում են թե՛ տղաներին, թե՛ աղջիկներին հավասարապես կրթելու հարցը, սեռականության թեմայով ազատ խոսակցությունները, խնդիրների բարձրաձայնումը: Հատկապես Երևանից հեռու գտնվող մարզերում կանայք նաև քննարկում են հանրային իրազեկվածության բարձրացման հարցը, որը թույլ կտա մարդկանց գիտելիք ունենալ բռնության տեսակների մասին, փոփոխել կանանց նկատմամբ գենդերային կարծրատիպերի և դերերի մասին հանրության վերաբերմունքը: Իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացման գործընթացում որպես առանցքային դերակատար առանձնացվում է մեդիայի դերը, որը, իբրև տեղեկատվության կիրառման ու փոխանցման ամենօրյա միջոց, կարող է այլընտրանքային ու նշանակալի ազդեցություն ունենալ սեռական բռնության, սեռական ոտնձգության խնդրին առնչվող բովանդակություն ստեղծելու գործում:

«Գիտակցությունը բարձրացնեն, ինֆորմացնեն: Ճիշտ է, հիմա ինֆորմացիան շատ է, բայց, տեսեք, նման անմիջական շփումներն ավելի ազդեցիկ են, քան թե հա կարդաս: Կարդացածդ բան չի բերում»:

40-50 տարեկան կին, Արտաշատ, Արարատի մարզ

Սեռական բռնության դեմ պայքարի ու պաշտպանական գործողությունների շարքում տեղեկատվության բացը լրացնելու հարցը հետազոտության մասնակից կանայք պատկերացնում են ավելի շուտ կանանց շրջանում քննարկումների միջոցով, որոնք գնահատում են ավելի արդյունավետ, քան դասական իմաստով սեմինարներն ու տեղեկատվական արշավները: Կանանց համար կարևոր է ստեղծել միջավայր, որտեղ իրենք ապահով կզգան, կկարողանան խոսել սեռական բռնության հարցի մասին՝ առանց մտածելու, որ կքննադատվեն, խտրականության կենթարկվեն:

Աջակցություն սեռական բռնության ենթարկվածներին

Սեռական բռնությունից պաշտպանության մեխանիզմների շարքում կանայք հիմնարար են համարում նաև գործող իրավապահ մարմինների աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարձրացումը, նրանց լիազորությունների ավելացումը, զգայունության բարձրացումը: Այս գործընթացն ավելի սահուն իրականացնելու համար կանայք ավելացնում են նաև հանրային ինստիտուտների, մասնավորապես կանանց հարցերով, սեռական բռնության խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների դերը: Վերջիններիս աջակցությունը կանայք պատկերացնում են ընթացակարգային գործընթացների և անելիքների հարցում իրենց ուղղորդելու, սեռական բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայություններ տրամադրելու գործում որպես առաջնային օղակ: Կանայք կարևորում են թե՛ իրավապահ մարմինների, թե՛ հասարակական կազմակերպություն-ների նկատմամբ վստահության ու դրանց գործունեության արդյունավետության անհրաժեշտությունը: Սեռական բռնության դեմ պաշտպանական մեխանիզմներն ամրացնելու գործընթացում առանցքային են այս ինստիտուտների գործունեության բարելավումը, վստահության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, ինչպես նաև կազմակերպվածությունը: Հանրային ինստիտուտների կողմից աջակցության առանցքային խնդիրը, ըստ հետազոտության մասնակից կանանց, աջակցության կարճաժամկետ բնույթն է՝ հիմնավորելով, որ սեռական բռնության ենթարկված կանայք ավելի ամբողջական ու երկարաժամկետ աջակցության անհրաժեշտություն ունեն:

Անդրադառնալով անհատական մակարդակում պաշտպանական մեխանիզմների իրագործմանը և սեռական բռնության դեպքերը նվազեցնելուն ուղղված գործողություններին՝ հետազոտության մասնակիցները կարևորում են կնոջ սուբյեկտության հարցը, որը գալիս է ավելի խորքից, հասարակական նորմերի փոփոխությունից: Հետազոտության մասնակից կանայք սեռական բռնությունից պաշտպանված հասարակություն ունենալու համար ակնկալում են կանանց հանդեպ վերաբերմունքի հանրային փոփոխություն, որը պետք է սկսել հավասար կրթությունից և դաստիարակությունից:

> *«Անհատ պիտի մեծացնենք, ժողովուրդ, ինքն իրեն պաշտպանել իմացող անհատ, որ եթե ես այս բանը ճիշտ եմ ասում, ես դրա համար չեմ պատժվելու»:*
>
> **29-39 տարեկան կին, Հրազդան, Կոտայքի մարզ**

Ապահով միջավայրի ստեղծում

Հանրային մտածողության փոփոխությանն ուղղված գործողությունների, տեղեկատվական արշավների կարևորության հարցի, իրավապահ մարմինների և հասարակական ինստիտուտների գործունեության բարելավման հարցերի բարձրացմանը զուգահեռ անընդհատ քննարկվում են կանանց ինքնապաշտպանության, բռնարարի և բռնության ենթարկված անձի միջև ֆիզիկական և ուժային տարբերության, իշխանության հաստատման հարցերը, որոնց համար կարծես հետազոտության մասնակիցները դժվարանում են լուծման ու պաշտպանության մեխանիզմներ առաջարկել:

Սեռական բռնության և սեռական ոտնձգության կանանց փորձառության շուրջ հանրության խնդրային արձագանքն ու կարծատիպային պատկերացումները հիմնականում դառնում են այն պատճառն ու աղբյուրը, որոնցից դրդված՝ թե՛ կանայք, թե՛ սեռական բռնության կամ ոտնձգության ենթարկված ցանկացած այլ անձ խուսափում են խոսելուց, բարձրաձայնելուց ու, դրանով պայմանավորված, նաև բռնության դեպքերի հնարավոր կանխարգելման համար հնարավոր կարգավորման մեխանիզմներ որոնելուց ու գտնելուց:

Սեռական բռնության հիմքերը քննարկելիս կարևոր է անդրադառնալ հանցագործությունների նկատմամբ հանրային հանդուրժողականության, բռնարարի փոխարեն բռնության ենթարկված անձանց մեղադրելու, անպատժելիության հարցերին և դրանք շղարշած համատարած լռությանը: Կարելի է ենթադրել, որ սա հետևանք է սեռական բռնության հանդեպ հանրային կարծրատիպային պատկերացումների, դրանց սուր արտահայտումների և բռնության ենթարկված անձանց հանդեպ մշտական մեղադրանքների: Հանրային կյանքի բոլոր ոլորտներում բռնությունից ազատված միջավայր ունենալու հնարավորությունը կանայք տեսնում են իրավապահ համակարգի կարգավորման, օրենսդրական կարգավորումների միջոցով՝ պատկերացնելով, որ օրենքը հավասարապես ու արդարացիորեն պետք է գործի բոլորի համար, և պետք է բացառվի անպատժելիության մթնոլորտը:

Գրականություն

1. Ժամակոչյան, Ա., Խալաթյան, Մ. (2017), Խոսելով կանանց հետ ընտանեկան բռնության խնդրի շուրջ. կանանց կարծիքները և կարիքները. Երևան. Սոցիոսկոպ:
2. Ժամակոչյան, Ա. (խմբ)., Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա., Մարգարյան. Ն. (2020), Հակագենդերային արշավների գործունեությունը, հռետորաբանությունը և նպատակները հետհեղափոխական Հայաստանում. Երևան, Սոցիոսկոպ:
3. Խալաթյան, Մ., Մանուսյան Ա. (խմբ.), Մարգարյան, Ն. (2022), Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը խոցելի խմբերի և նրանց աշխատանքային իրավունքների վրա. կանանց փորձառության ուսումնասիրություն. Երևան, Սոցիոսկոպ:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե (2021). Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն. վերլուծական զեկույց, Երևան, ՀՀ վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ):
5. Հովհաննիսյան, Զ., Ղարիբյան, Ա. (խմբ.) (2021). Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում 2019-2020 թվականներին. Երևան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա:
6. Մարգարյան, Ն. (2015). Սեռական ծառայություններ տրամադրող անձանց իրավունքների խախտումը Հայաստանում. Գենդերային անհավասարությունները աշխատաշուկայում. հիմնախնդիրները և լուծումները լոկալ և գլոբալ համատեքստում, Երևան:
7. Schwendinger, J. R., & Schwendinger, H. (1974). Rape Myths: In Legal, Theoretical, and Everyday Practice. Crime and Social Justice, 1, 18–26. http://www.jstor.org/stable/29765884.
8. Burt MR. Cultural myths and supports for rape. J Pers Soc Psychol. 1980 Feb;38(2):217-30. doi: 10.1037//0022-3514.38.2.217. PMID: 7373511.

ԵՐԵՎԱՆ 2023